

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Աշխեն Սամվելի Բեգլարյան

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ»**

Ատենախոսություն

**ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»
մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի կոչման**

**Գիտական դեկանար՝
Քաղաքական գիտությունների դոկտոր Ա. Ա. Մարգարով**

ԵՐԵՎԱՆ – 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ	15
1.1 Ազգային անվտանգության հիմնախնդիրները. քաղաքացիական հասարակությունը՝ որպես ազգային անվտանգության ապահովման սուբյեկտ	15
1.2 Քաղաքացիական հասարակության գործառույթներն ազգային անվտանգության ապահովման գրեսանկյունից.....	31
ԳԼՈՒԽ 2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՆԵՐԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆ	50
2.1 Քաղաքացիական հասարակության զարգացման առանձնահարկությունները Հայաստանում և ազդեցության հնարավորությունն ազգային անվտանգության վրա..	50
2.2 Սոցիալական մեղիայի դերը Հայաստանի քաղաքացիական հասարակության զարգացման գործում ազգային անվտանգության ապահովման համադրսություն.....	75
ԳԼՈՒԽ 3. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁՆ ՈՒ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	88
3.1 Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը ՀՀ պետական կառավարման մարմինների գործունեությանը և վերահսկողությունը դրա նկարմամբ	88
3.2 Պետական կառավարման մարմին-քաղաքացիական հասարակություն համագործակցությունը Հայաստանի պաշտպանության ոլորտում	111
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	125
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	132
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	134
ՀԱՎԵԼՎԱԾ.....	148

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետության կայուն և անվտանգ զարգացումը պահանջում է ժողովրդավարական արժեքների արմատավորում, իսկ ժողովրդավարության պայմաններում երևան են գալիս նոր մարտահրավերներ և սպառնալիքներ, որոնք պահանջում են վերահմատավորել ազգային անվտանգության պարադիգմը ինչպես պետության, այնպես էլ անհատների և քաղաքացիական հասարակության կողմից: Ժամանակակից ժողովրդավարական պետության պայմաններում ազգային անվտանգությունը ենթադրում է այնպիսի պայմաններ, երբ երկրում ապահովված են անձի, հասարակության և պետության իրավունքը, ազատությունը և պաշտպանվածությունը, ինչպես նաև երաշխավորում է նրանց փոխկապված համակարգային զարգացումը: Անհրաժեշտություն է առաջանում սահմանել պետության, քաղաքացիական հասարակության և անհատի փոխհարաբերությունների այն չափորոշիչները, որոնք նպաստում են նրանց ներդաշնակ փոխգործակցությունը՝ ապահովելով Հայաստանի ազգային անվտանգությունը:

Այս մասին անդրադարձ է կատարվում << ազգային անվտանգության ռազմավարության մեջ, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ է եղել համապարփակ բարեփոխումների իրագործմանը, որոնք միտված են ինչպես պետական կառավարման մարմինների արդյունավետ գործունեության ապահովմանը, այնպես էլ որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանը: Ավելին, արդյունավետ պետական կառավարման նպատակներից է քաղաքացիական հասարակության զարգացումը, իսկ քաղաքացիական հասարակության ոչ բավարար ներգրավվածությունն անմիջական սպառնալիքներ են երկրի ներքին անվտանգության համար: Այստեղից կարելի է եզրակացնել, որ քաղաքացիական հասարակության զարգացումն ու կայացումը հանդիսանում է ինչպես Հայաստանի ժողովրդավարության ու բարօրության առանցքը, այնպես էլ ուսումնական նշանակություն ունի երկրի անվտանգության ապահովման գործում:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ վերջին տարիներին քաղաքացիական հասարակության ակտիվության փոփոխություն է

Նկատվում: 2016թ. ապրիլի 2-5-ը դարաբաղա-ադրբեջանական գորքերի շիման գծում ռազմական գործողությունների ընթացքում նկատելի էր քաղաքացիական հասարակության ակտիվության որակական փոփոխություն՝ վստահություն սեփական ուժերի նկատմամբ, նպատակառուղղված գործունեություն, ինքնակազմակերպման բարձր աստիճան (խնդրի հստակ ձևակերպում, մոբիլիզացում և իրականացում): Այդպիսով, նպատակահարմար է դիտարկել Հայաստանում «ժողովրդավարական պետություն - քաղաքացիական հասարակություն - անհատ» համակարգ կազմող տարրերի գործառնական փոխհամագործակցությունը՝ ուղղված Հայաստանի ազգային անվտանգության ապահովմանը, այսինքն՝ երկրի ներքին համերաշխության գործոնը, որը հանդիսանում է վտանգների դիմագրավման առավել հստակ նախադրյալը: Ընդլայնվում է ազգային անվտանգության ոլորտը, ի հայտ են գալիս անվտանգության ապահովման նոր սուբյեկտներ և փոխվում է դրանց բնույթը ու գործունեությունը: Անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել այդ սուբյեկտների գործառնությունը և միմյանց հետ փոխհարաբերությունը՝ երկրի անվտանգության տեսանկյունից:

Հայաստանում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացների դիտարկումը թույլ է տալիս ամրագրել, որ թեման խիստ արդիական է և ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական կարևոր նշանակություն:

Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը: Քաղաքացիական հասարակությանը, ինչպես նաև ազգային անվտանգությանը վերաբերող հարցերն ամենատարբեր ասպեկտներով տարբեր ժամանակներում ուսումնասիրել են բազմաթիվ հետազոտողներ:

Աշխատանքի շրջանակներում օգտագործվել են այն հեղինակների աշխատությունները, որոնք ուսումնասիրել են քաղաքացիական հասարակության հիմնահարցը, ինչպես նաև վերլուծել են վերջինիս փոխհարաբերությունը պետության հետ: Այստեղ կարևոր է առանձնացնել ընդգրկուն պատմաքաղաքական ավանդույթը՝ նվիրված քաղաքացիական հասարակության թեմատիկային, այն Է՝ Պլատոնի¹, Արիստոտելի², Թ. Հոբսի³, Ջ. Լոկի⁴, Ի. Կանտի⁵, Հեգելի⁶, Կ. Մարքսի⁷, Է. Դյուրքիլի⁸,

¹Տե՛ս Պлатон Государство. Соч.: В 3 т. М., 1971. - Т.1;

²Տե՛ս Аристотель. Политика. Соч.: В 4 т. М., 1984;

³Տե՛ս Гоббс Т. Избранные произведения: В 2 т., М., 1964. - Т.1;

⁴Տե՛ս Локк Дж. Собр. соч.: В 3 т. /Пер. с англ. М., 1988;

Մ. Վեբերի⁹, Ա. Գրամշիի¹⁰, Շ. Մոնտեսըյոյի¹¹, Պ. Սորոկինի¹², Խ. Զ. Լինցի ու Ա. Ստեփանի¹³, Ֆյոդորովի¹⁴ և այլ հայտնի գիտնականների աշխատությունները, որոնց շրջանակներում քաղաքացիական հասարակությունն ստացել է բազմաչափություն, որում արձանագրված է քաղաքացիական զարգացման և քաղաքացիական ինքնագիտակցության երկար ու բարդ ճանապարհ: Ինչպես նաև հայ հեղինակներից Ա. Ալեքսանյանի¹⁵, Ա. Ադիբեկյանի, Ս. Ասլանյանի, Ն. Աբաջյանի և Բ. Քոյի¹⁶, Ա. Իշխանյանի¹⁷ և մի շարք այլ մտածողների աշխատանքները¹⁸:

Մյուս խումբը կազմում են այն աշխատությունները, որոնք վերաբերում են ազգային անվտանգությանը: Ազգային անվտանգության հարցերն ուսումնասիրել են արտասահմանյան գիտնականներից Ա. Պրոխոժեև¹⁹, Մ. Լեսկովը²⁰, Ք. Ալլարդը²¹, Ֆ. Բլեքը²², Զ. Բժեզինսկին²³, Ռ. Դարենդորֆը²⁴, Ս. Սարկեսյանը, Զ. Ուկյամսը²⁵, Մ.

⁵ Ст'и Кант И. Метафизика нравов. Соч.: В 6 т., М., 1964. - Т.2;

⁶ Ст'и Гегель Г.В.Ф. “Философия права” /Пер. с нем. М., 1990;

⁷ Сти и Маркс К., Энгельс Ф. - Сочинения / 2-е изд., М.: Государственное издательство политической литературы, 1955. - Т.3;

⁸Сѣ'и Дюркгейм Э. "Метод социологии", Киев, 1899;

⁹См. и Вебер М. "Протестантская этика и дух капитализма". М., 1990:

¹⁰ Стб' и Грамши А. Избранные произведения: В 3 т. /Пер. с итал. М., 1959. - Т.3;

¹¹См. и Монтецкье III, Л. “О духе законов”. Избр. произв. М., 1955:

¹²SЕ⁺ и Сорокин ПА. Система социологии: В 2-х т. М. 1993:

¹³Տե՛ս Ս. Հովհաննես. «Ժողովրդավարության անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները», Երևան, Կոմիտասի հիմնարարության 2011:

¹⁴См., например, 2011; и Федоров И.А. "У истоков демократической традиции" // Гражданское общество – в поисках пути / Под редакцией А.Ю. Сунгуррова. Приложение к журналу "Северная Дальвина". СПб. 1997. с. 30–31;

¹⁵ Ст' и Алексанян А. С. “Цивилиархические основы демократизации политического режима в Армении”, “Центральная Азия и Кавказ”, Журнал социально-политических исследований, Том 14, вып. 3, 2011, с. 132-145; Ալեքսանյան Ս. Ս. «Կանանց քաղաքացիավորական ներկայացվածության հիմնախնդիրները <<Հ-ում>>», Բանրեթ Երևանի համալսարանի, Երևան, 2014, № 3, Էջ 36-46:

¹⁶ Տիգրան Ադիբեկյան, Արմավազ, 2014, № 3, էջ 30-40;

¹⁷ Stéphane Adibekyan, Sargis Aslanyan, Narek Ajabyan, Barbara A. Coe "Civil Society in Armenia: From framework to reality", An assessment of Armenian civil society (2003-2006) CIVICUS civil society index report for Armenia, Yerevan, 2006;

¹⁷ Stéphane H. A. (Re)claiming the emancipatory potential of civil society: a critical examination of civil society and democracy building programs in Armenia since 1991”, Armenian Review 51, 2009, p. 9-34.

Ishkanian A. "Forthcoming Engineered Civil Society: the impact of 20 years of democracy building programs in Armenia since 1991", Armenian Review 31, 2003;

Ishkhanian A.: Forthcoming. Engineered Civil Society: the impact of 20 years of democracy promotion on civil society development in the former Soviet countries". In: Schimmelfennig F., Bechtel T., Hahn I. & Worschech S. (eds.) Democracy Promotion and Civil Society in PostSocialist Europe. London: Palgrave.

¹⁸ Ст. и Горшков М. «Гражданское общество и гражданская культура в современной России: опыт социологической диагностики» / СПб : СПбГУ, 2013.

диагностики / СПб.: СПбГУИ, 2013;
СЕ' и Медехин А В. "Теория государства и права". М. 2009.

¹⁹ См. и Молхин А.В. "Георги Государства и права", М., 2003;

²⁰СЕ и Десков М. А. «Гомеостатические процессы и теория безопасности»// Безопасность: информ. сб. 1994. № 4.

²¹See Allard C. Command, Control and the Common Defense. London, 1990.

²²St'u Black F. Guilds and Civil Society in European Political Thought from the Twelfth Century to the Present. - London, 1991:

²³Stępień Brzezinski Z. "Power and Principle: Memoirs of the National Security Adviser, 1977-1981". New York, 1983:

²⁴Stéphane Dahrendorf R. "Class and Class Conflict in Industrial Society". London, 1969:

Րոսկինը²⁶, Դ. Ռոդրիգոֆը²⁷և այլն²⁸: Հայ գիտնականներ Հ. Քոթանցյանը²⁹, Մ. Մարգարյանը³⁰, Ա. Աթանեսյանը³¹, Մ. Շահգելյանը³², Ա. Այվազյանը³³, Վ. Աթոյանը³⁴ անդրադարձել են Ազգային անվտանգության տարբեր ասպեկտներին, և նրանց կողմից ծևակերպված գիտական դրույթները կիրառվել են սույն հետազոտության համար՝ որպես տեսահայեցակարգային ուղենիշներ: Իրենց աշխատություններում նրանք անդրադարձել են ազգային անվտանգության հասկացություններին, ներկայացվել են ազգային անվտանգության բաղադրիչները, ոլորտները և այլն: Այս աշխատություններում առանձնահատուկ ուշադրության է արժանի ազգային անվտանգության սպառնալիքների ու վտանգների, ինչպես նաև դրանց աղբյուրների մանրամասն վերլուծությունը, որն ի հայտ է գալիս անվտանգության օբյեկտների շահերի բախումից: Սակայն համապարփակ ուսումնասիրություն չի իրականացվել Հայաստանի ազգային անվտանգության վրա քաղաքացիական հասարակության ազդեցության հնարավորությունների, պետական կառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության միջև փոխհարաբերությունների բնույթի վերաբերյալ, որն ազդում է երկրի անվտանգության ապահովման վրա: Չնայած Հ. Հովհաննիսյանն³⁵ առաջիններից էր, որ Հայաստանում քաղաքացիական հասարակության գործառնությունը վերլուծել է հասարակական համակարգի

²⁵Տե՛ս Sarkesian S.C., Williams J., Cimbala St.J. U.S. National Security. Policymakers, Processes and Politics.3-d edition, London, 2002;

²⁶Տե՛ս Roskin, M. “National Interest: From Abstraction to Strategy”, USA; Strategic Studies Institute;

²⁷Տե՛ս Rothkopf D. J. Running the World: The Inside Story of the National Security Council and the Architects of American Power. New York: PublicAffairs, 2005;

²⁸Տե՛ս Inbar E., Sheffer G. “The National Security of Small States in a Changing World”, Calif: Praeger Security International, 2009;

Տե՛ս Ripsman, Norrin M., and Paul T. V. “Globalization and the National Security State”, Oxford: Oxford University Press, 2010;

²⁹Տե՛ս Քոթանցյան Հ. Ս. «Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում», Երևան, <<ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ», 2008;

³⁰Տե՛ս Մարգարյան Մ. Մ. «Համընդիանուր անվտանգության համակարգի արդիականացման հիմնախնդիրները և «Հայկական աշխարհը», Հայկական բանակ, 2011, թիվ 1-2;

³¹Տե՛ս Առաքելյան Ա. “Актуальные проблемы современных политических и конфликтных коммуникаций”, Ереван, ЕГУ, 2008г.;

³²Տե՛ս Շահգելյան Մ. «Ազգային անվտանգություն. Հասկացությունը, Էությունը, ծևավորումը, առաջնահերթությունները», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Երևան, 2002;

³³Տե՛ս Այվազյան Ա. «Հիմնատարբեր՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հայեցակարգի», Երևան, ՍասնԱ (2003), 2-րդ լրացված և մշակված հրատ., 2004;

³⁴Տե՛ս Աթոյան Վ. «Ազգային անվտանգության տեսության հարցերի շուրջ», «21-րդ ԴԱՐ», թիվ 2 (48), 2013թ;

³⁵Տե՛ս Հովհաննիսյան Հ. «Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները», Երևան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2003;

անվտանգության տեսանկյունից, այնուամենայնիվ աշխատանքում ամբողջական անդրադարձ չի կատարվել անվտանգության հարցերին, ինչպես նաև 2003 թվականից ի վեր ի հայտ են եկել նոր պայմաններ, մարտահրավերներ, գործոններ, որոնք ազդում են քաղաքացիական հասարակության զարգացման և գործառնության վրա՝ ուղղված ազգային անվտանգության ապահովմանը:

Քաղաքացիական հասարակությունը որպես ազգային անվտանգության ապահովման սուբյեկտ դիտարկել են արտասահմանյան հետազոտողներ Ա. Պրոխոժեվ³⁶, Ի. Շերշնև³⁷, Է. Ռոտշիլդ³⁸, Ն. Ալ-Ռոդհան³⁹, Ա. Յաշինա⁴⁰ կարևորելով անվտանգության հարցերին վերաբերող որոշումների կայացման գործընթացում բոլոր ազդեցիկ ներկայացուցիչների ներգրավումը: Այս համատեքստում անհրաժեշտություն է առաջանում վերլուծել և առանձնացնել քաղաքացիական հասարակության հստակ գործառույթներ ազգային անվտանգության ապահովման հարցում:

Ուշագրավ է, որ Լ. Կոգերը⁴¹, Ս. Հանթինգթոնը⁴², Է. Գիլրենսը⁴³, Կ. Կրաուչը⁴⁴ իրենց աշխատություններում մատնանշում են, որ քաղաքացիական հասարակությունը միանշանակ դրական ինստիտուտ չէ և այն կարող է ապակառուցողական գործունեություն ծավալել ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից տարբեր խմբավորումների միջոցով, որոնք ձգտում են իրենց շահերն ու պահանջմունքները բավարարել ցանկացած հասանելի եղանակով: Սակայն այստեղ չի դիտարկվում քաղաքացիական հասարակության հետ պետության երկխոսության

³⁶Տե՛ս՝ Ա. Ա. Պրոխոժեվ. “Национальная безопасность: теория, сущность проблемы”, Рос. акад. гос. службы при Президенте РФ, Москва, изд-во РАГС, 2005;

³⁷Տե՛ս՝ Ի. Լ. Շершnev. “Деятельность общественных объединений в области обеспечения национальной безопасности Российской Федерации”, часть автореферата, Москва, 2003;

<http://www.dissertcat.com/content/deyatelnost-obshchestvennykh-obedinenii-v-oblasti-obespecheniya-natsionalnoi-bezopasnosti-ro>

³⁸Տե՛ս՝ E. Rothschild. “What is Security?”, Daedalus 1995, Vol. 124, № 3, P. 53-98;

³⁹Տե՛ս՝ N. R.F. Al-Rodhan. “Symbiotic Realism: A Theory of International Relations in An Instant and AnInterdependent World”, LIT Verlag, 2007, 160 pages;

⁴⁰Տե՛ս՝ Ա. Վ. Յաշինա. «Гражданское общество как субъект обеспечения национальной безопасности: опыт России и США», грамота, № 11 (25): в 2-х ч. ч. ii., 2012, с. 218-221;

⁴¹Տե՛ս՝ L. Coser. “The Functions of Social Conflict”, Glencoe, IL, 1956;

⁴²Տե՛ս՝ S. Huntington. “Political Order in Changing Societies”, Yale University Press, 1968;

⁴³Տե՛ս՝ Է. Գանձենս. “Социология”, Пер. с англ.; науч. ред. В. А. Ядов; общ. ред. Л. С. Гурьевой, Л. Н. Посилевича. - М.: Эдиториал УРСС, 1999;

⁴⁴Տե՛ս՝ Կ. Կրաուչ. “Постдемократия”. Москва, Изд. дом Гос. ун-та - Высшей школы экономики, 2010, с. 192;

արդյունքում այդ մարտահրավերների և սպառնալիքների չեզոքացման կամ հակագդման հնարավորությունը:

Պետություն-քաղաքացիական հասարակություն փոխհարաբերությանն անդրադառնալով՝ Թ. Անջումը⁴⁵, Ա. Սունգուրովը⁴⁶, Լ. Մամուտը⁴⁷ համոզված են, որ այն բավականին բարդ հարց է և որոշակի լարում է պարունակում, ինչը պայմանավորված է միմյանց նկատմամբ վերահսկողության իրականացմամբ, սակայն սեփական գոյության պահպանման համար նրանք միևնույն չափով անհրաժեշտություն են միմյանց համար, և այդ լարումը կարելի է թուլացնել համագործակցությամբ, որի վերլուծությամբ զբաղվել է Ա. Սունգուրովը՝ առանձնացնելով փոխհարաբերության մոդելները: Թ. Քարոթերսը⁴⁸, Մ. Գորնին⁴⁹, Ռ. Ռորթին⁵⁰, Ի. Ռադիկովը⁵¹ ավելի մեծ կարևորություն են տալիս քաղաքացիական հասարակության դերակատարությանը պետության քաղաքականության մշակման և իրականացման գործում: Նրանք պնդում են, որ քաղաքացիական հասարակության հետ արդյունավետ աշխատանքն ուժեղացնում է պետության ներուժը՝ նպաստելով միմյանց նկատմամբ վստահության մեծացմանը: Այդպիսի մոտեցումը կարող է ձևավորել «անվտանգ պետության» և «անվտանգ անհատի» նոր ձև, որոնք ոչ միայն կայուն կլինեն տարբեր մարտահրավերների և սպառնալիքների նկատմամբ, այլև իրենք միմյանց նկատմամբ սպառնալիք չեն լինի: Այս հարցերի ուսումնասիրությունը թերի է Հայաստանում՝ չնայած կան առանձին հարցերի մասնակի ուսումնասիրություններ:

⁴⁵Տե՛ս Anjum T. “From Confrontation to Collaboration: Contemporary Discourse on the State-Civil Society Relational Models”, Journal of Political Studies, p. 93-102;

<http://pu.edu.pk/images/journal/pols/Currentissue-pdf/State%20Relational%20Models.pdf>

⁴⁶Տե՛ս Сунгуроվ А. “Модели взаимодействия структур гражданского общества и органов власти: российский опыт” // В сб. Модернизация экономики и глобализации/ Отв. ред. Е.Г.Ясин. В 3-х кн. Книга 3, Москва, Изд.дом ГУ-ВШЭ, 2009;

⁴⁷Տե՛ս Mamut L. S. “Гражданское общество и государство: проблема соотношения” //Общественные науки и современность, №5, 2002, с. 94-103;

<http://pu.edu.pk/images/journal/pols/Currentissue-pdf/State%20Relational%20Models.pdf>

⁴⁸Տե՛ս Carothers T. “The Concept of Civil Society Is a Recent Invention”, p. 18-29;
<http://www.carnegieendowment.org/pdf/CivilSociety.pdf>

⁴⁹Տե՛ս Горный М. Б. “Взаимодействие некоммерческих организаций и органов власти: сравнительный анализ законодательства”, Журнал исследований социальной политики, Т. 9. № 2, 2010, с. 219-231;

⁵⁰Տե՛ս Rorty R. “Post-Democracy”, London Review of Books. Vol. 26. №. 7. P. 2004;

<http://www.lrb.co.uk/v26/n07/richard-rorty/post-democracy>

⁵¹Տե՛ս Радиков И. В. “Безопасность человека: реальность или фикция?” // Безопасность человека в контексте международной политики: вопросы теории и практики: материалы научного семинара. М., Изд. Московского университета, 2011, 30-44 стр;

Հայաստանում անվտանգության ռազմական բաղադրիչի կարևորությունը հիմք է տալիս անդրադառնալու նաև Ս. Հանթինգթոնի⁵², Լ. Քլիրիի և Շ. Մըքքոնվիլի⁵³, Շ. Էդմոնդսի, Է. Քոթթիի, Է. Ֆորսթի⁵⁴, Տ. Քոչարյանի⁵⁵, Ա. Ավետիսյանի⁵⁶, Ա. Աթանեսյանի⁵⁷ աշխատություններին, որոնցում վերլուծության է ենթարկվել ժողովրդավարության պայմաններում պաշտպանության կազմակերպման հարցերին, որտեղ կարևոր դերակատարություն ունի քաղաքացիական հասարակության մասնակցությունը:

Այսպիսով, առկա են մի շարք հեղինակների մենագրություններ և հոդվածներ, որոնց շրջանակներում վերլուծության են ենթարկվում ինչպես ազգային անվտանգության, այնպես էլ քաղաքացիական հասարակության հիմնախնդիրներիը, կառուցվածքը, մեխանիզմները, գործունեությունը և այլ հարցեր, սակայն համապարփակ ուսումնասիրություն և վերլուծություն չկա այն խնդիրների շուրջ, թե Հայաստանում քաղաքացիական հասարակությունն իր զարգացման ընթացքում ինչ դերակատարություն է ունեցել ազգային անվտանգության ապահովման գործում. այս համատեքստում չի դիտարկվել՝ պետություն-քաղաքացիական հասարակություն փոխհարաբերության բնույթը ու զարգացման միտումները:

Հետազոտության օբյեկտն է Հայաստանի քաղաքացիական հասարակության զարգացումն ու դերն ազգային անվտանգության համակարգում:

Հետազոտության առարկան է Հայաստանի քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացն ու գործառնությունը << ազգային անվտանգության ապահովման համատեքստում, ինչպես նաև վերջինիս փոխհարաբերության փորձն ու

⁵²Տե՛ս Խանտինգթոն Ս. “Вооруженные силы и демократия: реформирование военно-гражданских отношений”, “Русский журнал”, 29/04/1999;

http://old.russ.ru/ist_sovr/99-04-29/hantin.htm

⁵³Տե՛ս Laura R. Cleary and Teri McConville “Managing Defence in a Democracy”, London and New York, Routledge, 2006;

⁵⁴Տե՛ս Edmunds T., Cottay A., Forste A. “Civil-Military Relations in Post-Communist Europe: Reviewing the Transition”, USA, 2006;

⁵⁵Տե՛ս Քոչարյան Տ. «Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումն ազգային անվտանգության համատեքստում», Երևան, 2014;

⁵⁶ Տե՛ս Ավետիսյան Ա. «Ժողովրդավարությունն ու Զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողությունը», Երևան, 2013, էջ 130-173;

⁵⁷Տե՛ս Աթանեսյան Ա. «Բանակի և զինծառայողների հեղինակության ապահովման հիմնախնդիրները ժամանակակից հասարակություններում», Երևան 2013;

առանձնահատկությունները << պետական մարմինների հետ՝ ուղղված << ազգային անվտանգության ապահովմանը:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է վերհանել քաղաքացիական հասարակության դերն ազգային անվտանգության ապահովման գործում, բացահայտել Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացը, առանձնահատկությունները և գործառնությունն ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից, ինչպես նաև գնահատել պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև փոխհարաբերության փորձն ու հնարավորությունները՝ ուղղված << ազգային անվտանգության ապահովմանը:

Նշված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է հետևյալ խնդիրների առաջադրումն ու լուծումը.

- Վերլուծել ազգային անվտանգության ժամանակակից ընկալումները, և հիմնական մոտեցումներն ազգային անվտանգության համակարգում պետության ու քաղաքացիական հասարակության վերաբերյալ, առանձնացնել քաղաքացիական հասարակության գործառույթներն ազգային անվտանգության ապահովման գործում:

- Բացահայտել Հայաստանում քաղաքացիական հասարակության ձևավորման ու զարգացման առանձնահատկություններն ու ներուժը երկրի անվտանգության ապահովման վրա ազդեցության հնարավորության տեսանկյունից:

- Դիտարկել << նորմատիվ փաստաթղթերում քաղաքացիական հասարակության դրույթներն ազգային անվտանգության ապահովման հարցում:

- Գնահատել սոցիալական մեդիայի դերը Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացման գործում՝ ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից:

- Բացահայտել << պետական կառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության փոխհարաբերության բնույթը, մեխանիզմներն ու առանձնահատկությունները՝ ուղղված << ազգային անվտանգության ապահովմանը:

- Քննության ենթարկել քաղաքացիական հասարակության գործառնությունը << պաշտպանական համակարգում:

Ատենախոսության աղբյուրները: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել նաև ««Սահմանադրությունը» (գործող և փոփոխված տարբերակները), ««ազգային անվտանգության ռազմավարությունը», ինչպես նաև օգտագործվել են ««ռազմական դոկտրին»», ««ՊՆ հանրային իրազեկման հայեցակարգ»», ««Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ռազմավարության հայեցակարգ (նախագիծ)», ««Կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր» փաստաթղթերը, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից հրապարակված «Մարդկային զարգացման զեկույցները», արտասահմանյան հետազոտողների աշխատություններ, տեղական և միջազգային կազմակերպությունների զեկույցներ, օրենսդրական ակտեր, սոցիոլոգիական հետազոտություններ, պետական պաշտոնյաների ելույթներ, ԶԼՄ-ներում առկա վերլուծություններ, ինչպես նաև համացանցային պորտալներ, մասնավորապես՝ քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպությունների և պետական կառավարման մարմինների պաշտոնական կայքերը, սոցիալական ցանցերը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են համագիտական և նեղ մասնագիտական մեթոդներ, մասնավորապես՝ կիրառվել են համալիր և համակարգային ուսումնասիրության մեթոդը, համեմատական վերլուծությունը, քննադատական մոտեցումը, գործընթացային հետազոտության և դիսկուրս վերլուծության մեթոդները, փաստաթղթերի վերլուծության մեթոդը, ինչպես նաև հարցազրոյցներ են անցկացվել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և պետական կառավարման մարմինների ներկայացուցիչների, փորձագետների հետ: Հետազոտության հիմքում դրվել են օբյեկտիվության, համակարգայնության, կոնկրետության, բազմակարծության, պատմականության սկզբունքները:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է ազգային անվտանգության ապահովման հարցում քաղաքացիական հասարակության դերի ուսումնասիրմամբ: Հետազոտության գիտական նորույթը կարելի է ներկայացնել հետևյալ ձևակերպումներով՝

• Առանձնացվել են քաղաքացիական հասարակության հիմնական գործառույթներն ազգային անվտանգության ապահովման հարցում, որոնք դիտարկվում են հիմնականում պետության հետ փոխկապվածության մեջ: Դրանք են արտահայտման, համախմբման, վերահսկման գործառույթները և այլն:

• Առանձնացվել են Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացման երեք փուլեր և ներկայացվել են յուրաքանչյուր փուլի հիմնական առանձնահատկությունները, զարգացման գործոնները, ինչպես նաև ներկայացվում է յուրաքանչյուր փուլին բնորոշ պետություն-քաղաքացիական հասարակություն փոխգործակցությունը՝ ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից: Առաջին փուլում Հայաստանում քաղաքացիական հասարակությունն իրականացնում էր անվտանգության ապահովման գործառույթ ինչպես լայն իմաստով՝ բավարարելով անհատների կենսականորեն կարևոր շահերն ու պահանջմունքները, այնպես էլ նեղ իմաստով, երբ կամավորական միությունները մասնակցում էին արցախյան պատերազմին: Հայաստանում քաղաքացիական հասարակության ձևավորման ու զարգացման երկրորդ փուլում քաղաքացիական հասարակություն-պետություն համագործակցությունը բավականին թույլ է կամ բացակայում է, քանի որ ՀԿ-ները հիմնականում ծառայություններ էին մատուցում՝ ուղղված անհատի անվտանգության ապահովմանը, այսինքն՝ քաղաքացիական հասարակության գործունեությունը դիտարկվում է հիմնականում ազգային անվտանգության լայն սահմանման համատեքստում: Երրորդ փուլում ձևավորվում են պետություն-քաղաքացիական հասարակություն երկխոսության մշակույթը և մեխանիզմները՝ ուղղված ազգային անվտանգության խնդիրների լուծմանը: Քաղաքացիական հասարակությունը փորձում է ապահովել ազգային անվտանգությունը՝ լայն և նեղ ըմբռնումների համաձայն:

• Բացահայտվել են Հայաստանում քաղաքացիական հասարակության գաղափարական և կազմակերպական կարողությունները, որոնք դեռևս սահմանափակ են, սակայն զարգացման միտում ունեն, ինչը պայմանավորում է քաղաքացիական հասարակության գործունեության արդյունավետությունն ու ազդեցության հնարավորությունը, մասնավորապես՝ ազգային անվտանգության հարցադրումների ձևակերպման գործում, գնահատվել է Հայաստանում վերջին

տարիներին քաղաքացիական հասարակության նոր ձևաչափի անցնելու միտումը, որտեղ կարևորվում է ոչ թե ինստիտուտը, այլ մարդկանց միավորումները և առցանց մեդիա-հարթակներում կազմակերպված նրանց գործողությունները, այսինքն՝ քաղաքացիական շարժումներն ու նախաձեռնությունները:

- Հայաստանում քաղաքացիական հասարակության կողմից սոցիալական մեդիայի գործիքների կիրառումը գնահատվել է որպես կառուցողական՝ ազգային անվտանգության տեսանկյունից, քանի որ այն նպաստել է ինչպես քաղաքացիական հասարակության զարգացմանը, այնպես էլ կիրառվել է պետություն-քաղաքացիական հասարակություն համագործակցության արդյունավետության բարձրացման նպատակով՝ նպաստելով երկրի անվտանգության ապահովմանը ռազմական և այլ ոլորտներում:

- Բացահայտվել են << պետական կառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների բնույթը, մեխանիզմներն ու առանձնահատկությունները՝ ուղղված << ազգային անվտանգության ապահովմանը: << պետական կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման և դրանց իրականացման նկատմամբ վերահսկողության գործընթացում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցության ու ազդեցության աստիճանը գնահատվել է բավականին ցածր՝ պայմանավորված կազմակերպությունների սահմանափակ կարողություններով, փոխադարձ վստահության ցածր աստիճանով և այլն:

- Արժևորվել է վերջին տարիներին << զինված ուժերում բարեկիոխումների իրականացման գործում քաղաքացիական հասարակական վերահսկողության դերը. քաղաքացիական հասարակական վերահսկողության մեխանիզմները բավականին զարգացած են, և այդ մեխանիզմների արդյունավետությունն առայժմ տեսանելի է:

- Առաջարկվել են Հայաստանում քաղաքացիական հասարակություն-պետական մարմիններ համագործակցության կատարելագործման հստակ մեխանիզմներ:

Տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ բացահայտվում է քաղաքացիական հասարակությունը՝ որպես ամբողջական դերակատար, որն ազդում է

Երկրի ազգային անվտանգության համակարգի վրա, ներկայացվում է ազգային անվտանգության ապահովման գործում քաղաքացիական հասարակության գործառույթները, ինչպես նաև առանձնացվում է անկախ Հայաստանում քաղաքացիական հասարակության գարգացման փուլեր:

Գործնական նշանակության տեսանկյունից ատենախոսությունը կարելի է կիրառել հանրային ծառայողների, պետական կազմակերպությունների աշխատակիցների վերապատրաստման և որակավորման բարձրացման շրջանակներում, ինչը հնարավորություն կտա Հայաստանի պետական կառավարման քաղաքականության մշակման ու գործադրման դերակատարներին այն դարձնել գործելառ: Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել հետազոտողների և ասպիրանտների կողմից՝ իրենց գիտական աշխատանքները կատարելիս: Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել նաև բուհական համակարգում՝ ազգային անվտանգության համակարգի, Հայաստանում քաղաքացիական հասարակության առանձնահատկությունների և այլ ուսումնական ծրագրերի մեթոդական ապահովման, ինչպես նաև ուսումնական ձեռնարկների պատրաստման համար:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, առաջարկությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 151 էջ է:

ԳԼՈՒԽ 1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 Ազգային անվտանգության հիմնախնդիրները. քաղաքացիական հասարակությունը՝ որպես ազգային անվտանգության ապահովման սուբյեկտ

Ժողովրդավարական ուղի որդեգրած երկրներում քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը երկրի հասարակական-քաղաքական գործընթացներին սերտորեն կապված է երկրի կայուն և անվտանգ զարգացման հետ: « ազգային անվտանգության ռազմավարությամբ՝ քաղաքացիական հասարակության զարգացումը, որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացումը ներքին ավտանգության ռազմավարության կարևորագույն դրույթներից են⁵⁸:

Ազգային անվտանգության ապահովման գործընթացում քաղաքացիական հասարակության դերը հասկանալու համար նպատակահարմար է անդրադառնալ ազգային ավտանգության ոլորտի հիմնախնդիրներին, ինչպես նաև ազգային անվտանգության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերություններին վերաբերող հարցերին:

Անվտանգության խնդիրները մինչև XX դարը նույնացվել են երկրի պաշտպանունակության հետ: Սակայն երկու աշխարհամարտերը երկրներին բավականին մոտեցրեցին միմյանց, ինչպես նաև խճեցին նրանց փոխհարաբերությունները և առաջ բերեցին հակամարտությունների նոր տեսակներ, որի հետևանքով շեղվեցին ավանդական ռազմական բնույթից և ստացան բոլորովին նոր ձև ու բովանդակություն՝ տեղեկատվական, տնտեսական, մշակութային-քաղաքակրթական և այլն, արդյունքում պաշտպանունակությունը վերածելով ազգային

⁵⁸ Տե՛ս « ազգային անվտանգության ռազմավարություն՝ հաստատված Հայաստանի Հանրապետության նախագահի 2007թ. փետրվարի 7-ի թիվ ՆՀ-37-Ն հրամանագրով <http://www.mil.am/files/NATIONAL%20%20SECURITY%20STRATEGYarm.pdf>

անվտանգության հարցերից մեկի⁵⁹: Ազգային անվտանգությանն ուղղված սպառնալիքով հիմնավորվում և արդարացվում են պետությունների սովորաբար դատապարտելի առանձին գործողություններ՝ անկախ նրանից, թե դա արտաքին ազրեսիա է կամ իրավունքների սահմանափակում սեփական երկրում: Առաջին աշխարհամարտը հարուստ պաշար տվեց պետություններին ազգային անվտանգությունը կարևորելու իմաստով, սակայն երկրորդը, այնուհետև նրան հաջորդած սառը պատերազմները երկրներին պարտադրեցին ստեղծել ազգային անվտանգության համակարգեր՝ իրենց օրենսդրությամբ և հատուկ մարմիններով: Անվտանգության համակարգի թուլությունը և դրա կարևորության թերագնահատումն առաջ են բերում մեծ խնդիրներ, ինչպիսիք են ներքին և արտաքին հակամարտությունները, նյութական, հոգևոր և բարոյական արժեքների քայլայումը և այլն:

Ազգային անվտանգություն հասկացությունը ժամանակակից քաղաքական բառապաշտի կարևոր բարկացուցիչներից է: «Ազգային անվտանգություն» եզրույթն անգլերեն «national security» հասկացության թարգմանությունն է, որը մասնագետները թարգմանում են և՛ որպես ազգային, և՛ որպես պետական անվտանգություն: Սակայն աշխատանքի շրջանակներում նպատակահարմար է օգտագործել «ազգային անվտանգություն» եզրույթը՝ հաշվի առնելով այն, որ այդ եզրույթն է օգտագործվում Հայաստանի իրավական փաստաթղթերում, մասնավորապես՝ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում», «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքում, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքում:

«Ազգային անվտանգություն» եզրույթն ի հայտ է եկել հարաբերականորեն վերջերս: Եվրոպան և Ասիան մինչև XX դարի II կեսերը գործնականորեն չեն կիրառել այդ հասկացությունը, այլ հիմնականում գործածության մեջ էին դրված «պաշտպանունակություն», «պետական անվտանգություն» հասկացությունները: Համարվում է, որ առաջին անգամ այդ եզրույթն օգտագործվել է 1904թ. ԱՄՆ Կոնգրեսին ուղղված նախագահ Ռուզվելտի ուղերձում, որտեղ նա հիմնավորում էր

⁵⁹ Տե՛ս Աթոյան Վ. «Ազգային անվտանգության տեսության հարցերի շուրջ», «21-րդ ԴԱՐ», թիվ 2 (48), 2013, էջ 82-94, http://www.noravank.am/upload/pdf/5.Vardan%20Atoian_02_2013.pdf

Պանամայի ջրանցքի անեքսիան՝ որպես ազգային անվտանգության շահ: Իսկ առաջին անգամ ազգային անվտանգության մասին օրենք ընդունվել է Միացյալ Նահանգներում 1947թ., որով ստեղծվել է Ազգային անվտանգության խորհուրդը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՄՆ անվտանգության համակարգը, կամ գոնե նրա արտաքին կաղապարը, օրինակելի է դարձել բազմաթիվ, այդ թվում նախկին ԽՍՀՄ երկրների համար:

Հայաստանում ազգային անվտանգության մասին պատկերացումները ծևավորվում են տարաբնույթ կարծրատիպերի հիման վրա, ինչպիսին, օրինակ, Պետական անվտանգության կոմիտեի մասին հիշողություններն են, որոնցում ազգային անվտանգությունը հիմնականում ասոցացվում է պետական փակ ռեժիմի հետ և ընկալվում՝ որպես այդ ռեժիմին ապահովող քաղաքական ուստիկանություն: Սակայն արդի ժամանակներում արևմտյան գաղափարախոսական ազդեցության մեծացմամբ՝ Հայաստանում ներդրվում են «միջազգային ստանդարտներ», որոնցում ազգային անվտանգությունը հաճախ նույնացվում է գլոբալ կամ տարածաշրջանային կոլեկտիվ անվտանգության հետ:

Խոսելով ազգային անվտանգության սահմանման մասին՝ հարկ է նշել, որ խնդրի հետազոտմամբ զբաղվող արտերկրի և հայրենական տարբեր հեղինակների մոտ կարող ենք հանդիպել տարբեր ծևակերպում ստացած սահմանումների: Այսպես, ԱՄՆ պաշտպանության նախարարության Ռազմական և հատուկ տերմինների բառարանում ազգային անվտանգությունը սահմանվում է՝ որպես «Հավաքական տերմին, որն ընդգրկում է ԱՄՆ ազգային պաշտպանությունը և արտաքին հարաբերությունները: Պայմաններ, որոնք ապահովում են, մասնավորապես՝ ա) ցանկացած պետության կամ պետությունների խմբի նկատմամբ ռազմական կամ պաշտպանական առավելություն, բ) նպաստավոր դիրք արտաքին տնտեսական հարաբերություններում, գ) պաշտպանական քաղաքականություն, որն ի վիճակի է հաջողությամբ դիմակայել թշնամական կամ կործանարար գործողություններին՝ դրսից կամ ներսից, բացահայտ կամ թաքնված»⁶⁰:

⁶⁰ St.'s Department of Defense. Dictionary of Military and Associated Terms. Joint publication 1-02. 12, April, 2001 (As amended through April, 2010), p. 320, www.fas.org/irp/doddir/dod/jp1_02-april2010.pdf

Հ. Քոթանցյանի աշխատություններում ազգային անվտանգությունը սահմանվում է որպես «Ռեալ և հնարավոր արտաքին ու ներքին սպառնալիքներից անձի, ընտանիքի, հասարակության ու պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության վիճակ: Ապահովվում է պետության ռազմական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, բնապահպանական և այլ կարողություններով»⁶¹: Ըստ որում՝ կենսականորեն կարևոր շահերը պահանջմունքների ամբողջությունն է, որոնց բավարարման արդյունքում ապահովվում է անձի, հասարակության և պետության գոյության ու առաջընթաց զարգացման հնարավորությունը:

Անդրադառնալով քաղաքական գործիչների ձևակերպումներին՝ հարկ է առանձնացնել 2005թ. ՀՀ Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության ուղենիշները» գեկուցում տեղ գտած հետևյալ սահմանումը. «Հայաստանի ազգային անվտանգությունը Հայաստանի Հանրապետության և հայ հասարակության անվտանգ գոյությունն է՝ որպես սոցիալական-իրավական պետության և քաղաքացիական հասարակարգի»⁶²:

Իսկ ՀՀ իրավական փաստաթղթերում ազգային անվտանգությունը ձևակերպվում է որպես պետության, հասարակության և անձի պաշտպանվածության վիճակ, մասնավորապես՝ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքով ազգային անվտանգությունը սահմանվում է՝ որպես «պետության և հասարակության այնպիսի կացություն, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին ու

⁶¹ Տե՛ս Քոթանցյան Հ. «Հայաստանի Ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում», Երևան, 2008, էջ 180

⁶² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ուղենիշները», ՀՀ Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի գեկուցումը ՀՀ ԶՈՒ իրամանատարական կազմի համար, ՀՀ պաշտպանության նախարարություն, Երևան, 2005, էջ 11

արտաքին սպառնալիքներից»⁶³: Ազգային անվտանգությունը սահմանված չէ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱԳՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ, ՍԱԿԱՅՆ ԱՅԴ ՎԻԱՍՏԱԹԵՐՈՒՄ ԾԽԱԿԵՐԱՎՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԻՂՎԱԾ ՆԵՐՔԻՆ և ԱՐՏԱՔԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ, ՊՐՈՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐՏՈՐԱԳՈՒՅՆ ԲԱԴԿԱԳՈՒԺԻՆԵՐՆ ԵՆ: Այս առումով ՊԼԱԴՐՈՒԹՅԱՆ Է ԱՐԺԱՆԻ ԱՅՆ, ՈՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱԳՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆՎԵԼ Է 2007թ. և ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐ Է ՎԵՐԱՆԱյԵԼ ՊԱԳՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՍԹՆԵՐԸ, ՔԱՆԻ ՈՐ ԵՐԿՐՈՒՄ, ՏԱՐԱԾԱՉՐՁԱՆՈՒՄ և ԱԺԽԱՐԻՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ԻԲՆԱՄԻԿ ԳՈՐԾՆԹԱԳՆԵՐ՝ ՎԻՌԱՋԻՆԵԼՈՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ Առջև ԾԱՌԱԳՈՅ ՄԱՐՏԱՀԻՐԱՎԵՐՆԵՐՆ ՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ:

Կարելի է եզրակացնել, որ ներկայում գերակայում է անվտանգության ընդլայնված սահմանումը, որն իրենից ներկայացնում է բարդ և բազմաշերտ համակարգ՝ կազմված մի շարք ենթահամակարգերից: Այս համակարգի հիմքն անձն է իր իրավունքներով և ազատություններով, որը միաժամանակ հանդիսանում է այդ համակարգի օբյեկտ և սուբյեկտ, իսկ առանձին անհատների և սոցիալական խմբերի անվտանգության ամբողջական բնութագրմամբ պայմանավորված է տվյալ հասարակության անվտանգությունը: Մինչդեռ պետության անվտանգությունը կապված է պետական իշխանության և տարածքային ամբողջականության, սահմանադրական կարգի, իրավական և կառավարման համակարգերի պաշտպանության հետ, ինչը նոյնաեւ դիտարկվում է անձի պաշտպանության տեսանկյունից: Կարելի է նշել, որ պետությունն իր բոլոր ատրիբուտներով, ինստիտուտներով և մարմիններով ծառայում է յուրաքանչյուր անհատի շահերին:

Տարբեր պետություններում ազգային անվտանգության հայեցակարգերն սկսեցին ծխավորվել և գործառնել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այդ գործնթացն առավել մեծ թափ հավաքեց ԱՄՆ-ում, որի արդյունքն էր արտաքին քաղաքականության մեջ այն փորձի կիրառումը, որը կուտակել էր ղեկավարությունը պատերազմի ժամանակ, ինչպես նաև այն առանձնահատկությունները, որոնք բնորոշում էին Երկրի անվտանգության ապահովման հարցում ամերիկյան մոտեցումները կոնկրետ ժամանակահատվածում: Մյուս Երկրներն արտաքին

⁶³ Տե՛ս «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենք
<http://www.sns.am/index.php/am/nss-today/legislation/61-law-on-security-bodies>

քաղաքականության մեխանիզմի արմատական վերակառուցման չգնացին, այլ ընտրեցին դանդաղ զարգացման ուղին, սակայն բոլոր երկրներն էլ ի վերջո հիմք ընդունեցին անվտանգության վերաբերյալ ամերիկյան հայացքները: «Սառը պատերազմի» ժամանակ ռազմական և գաղափարական ոլորտներում խիստ առճակատումը հանգեցրեց նրան, որ ԱՄՆ-ի ազգային անվտանգության հիմնախնդիրների շրջանակներում առաջնահերթ դարձան արտաքին քաղաքական և ռազմաքաղաքական հարցերը, սակայն Բ. Քինթոնի պաշտոնավարման տարիներին ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարության մեջ տեղ գտան նաև տնտեսական հարցերը: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի ազգային անվտանգության հայեցակարգը կազմում է ամերիկյան ռազմական և արտաքին քաղաքականության տեսական հիմքը: Ի տարբերություն Ռուսաստանի, որի մոտեցումն ազգային անվտանգության հարցերին ապագաղափարախոսականացված է, ԱՄՆ-ն ամրապնդում է իր ազգային անվտանգության հայեցակարգի գաղափարախոսական կողմը՝ հիմք ընդունելով «նոր համաշխարհային կարգի» տեսության սկզբունքները:

XXI դարում ազգային անվտանգության մոտեցումների կարևոր առանձնահատկություն է այն, որ ազգային անվտանգության խնդիրների նկատմամբ կտրուկ շրջադարձ է կատարվել դեպի ներքին խնդիրներ: Մինչ այդ գրեթե ուշադրության չեն արժանանում էկոլոգիական խնդիրները, տեխնածին ու բնական աղետները չեն ներառվում ազգային անվտանգության ռազմավարության մեջ՝ չնայած դրանց գլոբալ ազդեցություններին: Ավելին, Արևմուտքը ներկայում հոչակում է, որ եկել է ժամանակը, որպեսզի ազգային անվտանգության նեղ հասկացությունից անցում կատարվի անհատի անվտանգության համապարփակ հայեցակարգին⁶⁴: Արևմտյան Եվրոպայի երկրներում նույնպես անվտանգությունն սկսել է մեկնաբանվել՝ որպես մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանություն, սոցիալական կայունության ապահովում, անձի ստեղծագործական հնարավորությունների բացահայտմանն ուղղված համապատասխան պայմանների ստեղծում և անվտանգության ապահովում, ինչը համարվում է «կափուկ»

⁶⁴ St. u National security strategy of the United States, May 2010, Washington, DC, 2010, p. 4
http://www.whitehouse.gov/sites/default/files/rss_viewer/national_security_strategy.pdf

անվտանգություն (soft security), իսկ «կոշտ» անվտանգությունն (hard security) իր մեջ ներառում է ազգային անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտները⁶⁵:

Ինչպես Հայաստանի ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները, այնպես էլ երկրի ներքին և արտաքին անվտանգության ռազմավարական հիմնական ուղղությունները, մարտահրավերներն ու առաջնահերթությունները ամրագրված են << ազգային անվտանգության ռազմավարությամբ⁶⁶: Ավելին, << նախարարությունների գործունեության ծրագրերը բխում են << ազգային անվտանգության ռազմավարության դրույթներից⁶⁷: Հայաստանի անվտանգությանը վերաբերող հայեցակարգային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց հիմքում դրվել է ազգային անվտանգության լայն ըմբռնումը, քանի որ հիմնադրույթները կենսագործվում են՝ ապահովելու ինչպես երկրի արտաքին քաղաքական և ռազմական, այնպես էլ տնտեսական, պարենային, էներգետիկ, բնապահպանական, հաղորդակցական և տեղեկատվական անվտանգության, ժողովրդագրական, գիտակրթական, հոգևոր-մշակութային զարգացումները:

Ազգային անվտանգության քաղաքականությունն իրականացվում է ազգային անվտանգության համակարգի միջոցով, որն իրենից ներկայացնում է պետական և հասարակական ինստիտուտների ամբողջությունը, որոնք գործում են անհատի, հասարակության և պետության կենսագործունեության տարբեր ոլորտներում վտանգներից և սպառնալիքներից ազգային շահերն անհրաժեշտ մակարդակով

⁶⁵ С্�в'յ Хмелевский С. В. “Современная система национальной безопасности России: структурно функциональный анализ”, Социально-политические науки, №1, 2011, с. 159

<http://cyberleninka.ru/article/n/sovremennoya-sistema-natsionalnoy-bezopasnosti-rossii-strukturno-funktionalnyy-analiz>

⁶⁶ << ազգային անվտանգության ռազմավարությունը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգն է: Այն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով:

⁶⁷ Հարկ է նշել, որ այդ փաստաթղթերն իրենց բազմազանության մեջ և կարևորությամբ երկրորդն են Սահմանադրությունից հետո: Որոշ երկրներում դրանք ընդունվել են որպես հայեցակարգ (Մոլդովա, Լատվիա, ՌԴ, Էստոնիա), մյուսներում՝ ռազմավարություն (Բուլղարիա, Լեհաստան, Լիտվա): 2005-2007 թթ. Վրաստանը (2005) և Ադրբեյջանը (2007) ընդունեցին որպես հայեցակարգ, իսկ <<-ն (2007)՝ ռազմավարություն: Նշված փաստաթղթերը գործունեության միջինաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր են, որոնք կոչված են համագործակցության հիմքի վրա անվտանգության քաղաքականություն իրականացնելու Հարավային Կովկասի հանրապետությունների կայուն զարգացման համար:

պաշտպանելու նպատակով⁶⁸: Այդ համակարգի տարրերն են ազգային անվտանգության ապահովման սուբյեկտները, որոնք փոխկապված են միմյանց հետ, ազգային անվտանգության ապահովման միջոցներն ու ռեսուրսները, նորմատիվ-իրավական հիմքը:

Ազգային անվտանգության քաղաքականության իրականացման համար XX դարի երկրորդ կեսից բազմաթիվ երկրներ ստեղծեցին անվտանգության խորհուրդներ, որոնց հիմնական խնդիրն է համակարգել ազգային անվտանգության համար պատասխանատու մարմինների գործունեությունը: Օրինակ՝ ԱՄՆ նախագահին կից գործող ազգային անվտանգության խորհուրդը հիմնականում զբաղվում է արտաքին անվտանգության ոլորտի համակարգման աշխատանքներով՝ անմիջականորեն աշխատելով պաշտպանության նախարարության, պետական դեպարտամենտի և հետախուզական ծառայությունների հետ: Ֆրանսիան ազգային անվտանգության խորհրդի գործառույթները հիմնականում փոխանցել է «Ազգային պաշտպանության գխավոր քարտուղարությանը», սակայն այստեղ նախատեսվում է ստեղծել ազգային անվտանգության խորհրդին համանման կառույց՝ չնայած Ֆրանսիայում միաժամանակ գործում են մի շաբթ կառույցներ, որոնք պատասխանատու են ներքին անվտանգության խնդիրների համար: Իսրայելի Ազգային անվտանգության խորհուրդը գործում է երկրի վարչապետի գրասենյակին կից, որի նպատակն իսրայելի վարչապետին ու կառավարությանը՝ որպես ազգային անվտանգության հարցերով կենտրոնական խորհրդատվական մարմին սպասարկումն է: Այդ ինստիտուտը գերազանցապես կենտրոնացած է պաղեստինյան հիմնահարցի, ահաբեկչության դեմ պայքարի ոլորտների վրա⁶⁹: Ի տարբերություն արևմտյան երկրների՝ Ռուսաստանում և Թուրքիայում անվտանգության խորհուրդներն զբաղվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անվտանգության հիմնախնդիրներով, սակայն ուժային կառույցները երկու երկրներում էլ գերակայող են:

⁶⁸Տե՛ս <այաստանի ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ, <այլական բանակ, 2006, թիվ 2 (48), էջ 48-58

⁶⁹Տե՛ս Վերանյան Կ. «Վրաստանի ազգային անվտանգության խորհուրդը», «Նորավանք» գիտակողական հիմնադրամ, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=510#4_t

Ուսումնասիրության համաձայն՝ <<-ում Ազգային անվտանգության խորհրդի⁷⁰ ուշադրության կենտրոնում են արտաքին և ներքին անվտանգության ապահովման հարցերը, իսկ 2015 թ. << Սահմանադրության փոփոխված տարբերակով Անվտանգության խորհրդի գլխավորելու է վարչապետը, իսկ կազմավորման և գործունեության կարգը սահմանվելու է օրենքով: Անվտանգության խորհրդին վերաբերող դրույթների ուսումնասիրությունը հիմք է տալիս նշելու, որ Հայաստանի համար, այնուամենայնիվ, գերակա է ազգային անվտանգության ռազմական բաղադրիչը, քանի որ պաշտպանության ոլորտի հիմնական ուղղությունները սահմանելու է Անվտանգության խորհրդի: Այս առումով կիրառելի է միջազգային հարաբերությունների կոպենհագենյան դպրոցի «անվտանգայնացման» (securitization) տեսությունն ու Բ.Բուզանի և Օ.Վաների առաջ քաշած հայեցակարգը (բնորոշվում է՝ որպես «խուճապի քաղաքականության»/ panic politics): Այս մոտեցման համաձայն՝ որոշակի ժամանակահատվածում անվտանգության բաղադրիչներից որևէ մեկը «անվտանգայնացվում» է՝ ձեռք է բերում առանցքային նշանակություն՝ դառնալով գերակա անվտանգության մյուս բաղադրիչների նկատմամբ, և պետության արտաքին ու անվտանգության քաղաքականության ողջ գործիքակազմն ուղղվում է այդ սպառնալիքների հաղթահարմանն ու ամրապնդմանը⁷¹: Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը շարունակում է մնալ Հայաստանի ազգային անվտանգության առանցքային խնդիրը, հետևաբար՝ Հայաստանի անվտանգության առաջին արտաքին սպառնալիքը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանդեպ զինված ուժի կիրառումն է, որի մասին բացահայտ հնչեցվում է Ադրբեյջանի Հանրապետության քաղաքական ղեկավարության կողմից: Այսինքն՝ Հայաստանում նույնպես գերակա է ազգային անվտանգության ռազմական բաղադրիչը:

Որպես ազգային անվտանգության կարևորագույն բաղկացուցիչ՝ անհրաժեշտ է անդրադառնալ ազգային անվտանգության սպառնալիքներին, որոնք առաջ են գալիս

⁷⁰ Ազգային անվտանգության խորհրդի գործում է << Սահմանադրության 55-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան, որի գործունեությունը կանոնակարգվում է << Սահմանադրությամբ, Ազգային անվտանգության խորհրդի կանոնադրությամբ, << օրենքներով և << Նախագահի իրավական ակտերով:

⁷¹ Տե՛ս Buzan B., Wver O., Wild De J. “Security: A New Framework for Analysis”, Lynne Rienner Pub. 1997, p. 23-26

անվտանգության օբյեկտների շահերի բախումից: Կ. Մարքսը նշել է. «Այս աշխարհը լեցուն է վտանգներով, քանի որ այն հանդիսանում է ոչ թե միակ շահի, այլ բազմաթիվ շահերի աշխարհ»: Մինչդեռ ազգային անվտանգության դինամիկությունը և արձագանքման ճկուն համակարգը կոչված են ընդլայնելու, ամրապնդելու հիմնարար ազգային շահերը, որոնք առանձնահատուկ տեղ ունեն շահերի բազմաբնույթ համակարգում: Ըստ Մ. Մարգարյանի՝ շահը գիտակցված պահանջմունքի համար նպատակադրված գործողությունների և հարաբերությունների ամբողջություն է⁷²: Իսկ Հ. Մորգենթաուի ձևակերպմամբ՝ «Ազգային շահ» հասկացության արժեքային բազմաչափությունը հասարակության գիտակցված, պաշտոնապես արտահայտված օբյեկտիվ պահանջմունք է, որը, հիմնվելով ազգային արժեքների վրա, միտված է հասարակության և պետության անվտանգության ապահովմանը: Ազգային շահը պայմանավորված է նաև տվյալ հասարակության և պետության մեջ առկա գերիշխող արժեքային համակարգով ու աշխարհի հանդեպ ունեցած պատկերացումներով⁷³: Այնուամենայնիվ, գործնականում շահերի իրականացման ընթացքում անհատի, հասարակության շերտերի, դասերի, պետությունների միջև հասարակական զարգացմանն ուղղված փոխազդեցության արդյունքում օբյեկտիվորեն առաջ է գալիս հակասություն, որը տարբեր կերպ է արտացոլվում կենսագործունեության տարբեր ոլորտներում՝ կախված կոնկրետ պայմաններից, որոնցում իրականացվում է անվտանգության այս կամ այն օբյեկտների փոխազդեցությունը: Այդ սպառնալիքները, դրսևորվելով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հարաբերություններում, առնչվում են պետության զարգացման հետ և իրենց բնույթով լինում են համաչափ կամ անհամաչափ: Աշխատանքի շրջանակներում նպատակահարմար է անդրադառնալ անհամաչափ սպառնալիքներին, որոնք հանգեցնում են տեղական, տարածաշրջանային և միջազգային քաղաքական մակարդակներում հասարակական կազմակերպությունների և կառավարական ուժերի (քանակ, անվտանգության

⁷² Տե՛ս Մարգարյան Մ. «Ազգային շահերի արդիականացումը << անվտանգության ապահովման քաղաքականության գործընթացում» , Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 3, Երևան, << ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2011, էջ 106-114, [http://lraber.asj-oa.am/6042/1/2011-3_\(106\).pdf](http://lraber.asj-oa.am/6042/1/2011-3_(106).pdf)

⁷³ Տե՛ս Morgenthau H. J. “Another Great Debate: The national Interest of the United States”, American Political Science Review, University of Chicago, 1952, p. 973

հաստատություններ և այլն) միջև հակամարտության⁷⁴: Շատ դեպքերում այս անհամաչափ սպառնալիքների իրական աղբյուրները այլ պետությունների կառուցներն են, որոնք կարող են ինչպես աջակցել այդ սպառնալիքների իրացմանը, այնպես էլ ոչ կառավարական կազմակերպության միջոցով մասնակցել դրանց իրականացմանը:

Փաստորեն, սպառնալիքների անհամաչափությունը բնորոշվում է այն հանգամանքով, որ պետության, կառավարական հաստատությունների կամ տվյալ ազգի քաղաքացիական հասարակության դեմ ուղղված սպառնալիքների աղբյուրները, ինչպես նաև դրանց իրագործման մեխանիզմներն ու ճանապարհները բնույթով ոչ կառավարական են: Այս տեսանկյունից՝ քաղաքացիական հասարակության կայացման համար անհրաժեշտ օրենսդրական ու վարչահաստատութենական հատկանիշների ձևավորման ոչ բավարար որակն ու տեմպերը հանդիսանում են Հայաստանի ներքին անհամաչափ սպառնալիքներ, ինչն ամրագրված է << ազգային անվտանգության ռազմավարությամբ, այն է՝ մարդու իրավունքների պաշտպանության ոչ լիարժեք համակարգի ձևավորումը, քաղաքացիական հասարակության ոչ բավարար ներգրավվածությունն անմիջական սպառնալիքներ են⁷⁵:

Կարելի է արձանագրել, որ ազգային անվտանգության լայն ըմբռնման պարագայում քաղաքացիները ևս կարող են կազմել ինքնուրույն միավորումներ, ընկերակցություններ՝ մասնակցելու երկրի անվտանգության ապահովման գործընթացին՝ սկսելով զբաղվել բնապահպանության, արտազարդի, մարդու իրավունքների և այլ հիմնախնդիրներով: Արդյունքում փոխվում են նաև անվտանգության ապահովման մեթոդները. ուժային մեթոդներին փոխարինում են ոչ ուժային մեթոդները, ինչպիսիք են՝ բանակցությունները, համատեղ ծրագրերը, պայմանավորվածությունները: Այս պարագայում անվտանգության ապահովումը չի իրականացվում բացառապես մեկ սուբյեկտի՝ պետության կողմից:

Մասնագիտական գրականության մեջ ազգային անվտանգության սուբյեկտները մեկնաբանվում են լայն և նեղ իմաստներով: Լայն իմաստով՝ ազգային

⁷⁴Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», Հայկական Բանակ, <<ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ռազմագիտական հանդես, 2 (48), 2006, էջ 23-24

⁷⁵Տե՛ս << ազգային անվտանգության ռազմավարություն՝ հաստատված Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007թ. փետրվարի 7-ի թիվ ՆՀ-37-Ն հրամանագրով

անվտանգության սուբյեկտն ազգն է, որը, լինելով բարդ օրգանիզմ, գործում է իր բազմաթիվ ներքին սուբյեկտներով: Դրանք են՝ պետությունը, նրա ինստիտուտները՝ բանակը, ֆինանսական հաստատությունները, ոչ պետական կազմակերպությունները՝ ԶԼՄ-ներ, հասարակական կազմակերպություններ, անհատներ և այլն: Իսկ նեղ իմաստով՝ ազգային անվտանգության սուբյեկտներ են ազգի բոլոր այն ներքին սուբյեկտները, որոնք դերակատարություն ունեն ազգային խնդիրների լուծման գործում, ինչն ամբողջովին կամ մասամբ համարում են իրենց պարտականությունը կամ գիտակցում են ազգային անվտանգության խնդիրը, պատրաստակամ են և ունեն հնարավորություն մասնակցելու դրա լուծմանը⁷⁶:

Պետությունն ազգային անվտանգության միակ սուբյեկտ դիտարկելու կողմնակիցների համոզմամբ՝ այն ազգային մանդատ ունեցող միակ կառույցն է, իսկ մյուս սուբյեկտներն այդպիսի մանդատ չունեն, սակայն արդի պայմաններում պետության քաղաքականության վրա քաղաքացիները, քաղաքացիական տարբեր միավորումները նույնպես ազդեցություն ունեն՝ սկսած որոշումների կայացման գործընթացից մինչև քաղաքականության իրականացման նկատմամբ վերահսկողության հաստատումը: Ազգային անվտանգության ապահովումը նաև հասարակության իրավունքն ու պարտականությունն է, ինչը պայմանավորված է հասարակության՝ ազգային անվտանգության սուբյեկտ լինելու հանգամանքով: Բացի այն, որ հասարակությունը, թեկուզ միջնորդավորված, ներգրավվում է ազգային անվտանգության խնդիրների լուծման գործընթացում, յուրաքանչյուր քաղաքացի հանդես է գալիս որպես նեղ իմաստով ազգային անվտանգության սուբյեկտ, եթե պահանջվում է գործել անկախ և կատարել քայլեր ազգային անվտանգություն ապահովելու ուղղությամբ՝ ստանձնելով ողջ պատասխանատվությունը, երբ այդ քայլերը չեն կատարում դրա համար լիազորված մարմինները:

Հասարակության լայն ներգրավվածությունը նաև ապահովում է ազգային անվտանգության համակարգի զարգացումն այն դեպքերում, երբ պետությունը և համակարգի մաս կազմող մյուս ինստիտուտներն իրենց ներքին կազմակերպական ու

⁷⁶ Տե՛ս Աղայան Ա. «Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները», Երևան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2002, էջ 20-22

գաղափարախոսական կաղապարվածության պատճառներով ունակ չեն լինում համարժեք արձագանքել օրվա մարտահրավերներին⁷⁷:

Այսպիսով, յուրաքանչյուր անհատ, կազմակերպություն իրավունք ունի և պարտավոր է մասնակցել երկրի անվտանգության ապահովման գործնթացին, ինչը կարող է դրսնորվել տարբեր ձևերով և տարբեր մակարդակներում⁷⁸: Այդ համատեքստում է. Ռոտշիլդն առաջարկել է պետություն-հասարակություն-անհատ փոխկապվածության հետևյալ քառաչափ մոդելը. «պետությունից ներքև դեպի անհատներ», «վերև պետությունից կենսոլորտ», «ուազմական անվտանգությունից դեպի քաղաքական, տնտեսական, սոցիալական, բնապահպանական անվտանգություն» և «պետությունից վերև դեպի միջազգային ինստիտուտներ, ներքև դեպի տարածաշրջանային և տեղական իշխանություններ, ինչպես նաև ոչ պետական կազմակերպություններ, հասարակական կարծիք և լրատվական դաշտ»⁷⁹:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ «անհատ-քաղաքացիական հասարակություն-պետություն» հարաբերությունների մոդելն իրեալական դեպքում պետք է պարունակի վերոնշյալ տարրերի միջև հետևյալ կապերը. անհատը՝ որպես ազգային անվտանգության հիմնական օբյեկտ, որը միաժամանակ նաև նրա հիմնական սուբյեկտն է, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության տարբեր ինստիտուտների մեխանիզմներով պետությանն օժտում է առավել նշանակայի լիազորություններով, նրա վրա քաղաքացիական վերահսկողության իրականացման միջոցով թույլ չի տալիս ուսնձգություններ նրա անբաժանելի, բոլորի կողմից ընդունված իրավունքների նկատմամբ: Այս համատեքստում անհատը պետության գոյության և զարգացման նպատակն է, որի գործունեության արդյունավետության չափանիշը մարդու իրավունքների և ազատությունների իրական ապահովումն է, նրա կյանքի որակն ու մակարդակը: Այդ իմաստով անհատը բարձրագույն արժեք է, հասարակության բարեկեցության չափանիշը: Պետությունը և

⁷⁷ С্ট'у Шершнев И. Л. “Деятельность общественных объединений в области обеспечения национальной безопасности Российской Федерации”, часть авторефера, Москва, 2003

<http://www.dissercat.com/content/deyatelnost-obshchestvennykh-obedinenii-v-oblasti-obespecheniya-natsionalnoi-bezopasnosti-ro>

⁷⁸ St' u Al-Rodhan N. “Symbiotic Realism: A Theory of International Relations in An Instant and AnInterdependent World”, LIT Verlag, 2007, p. 26

⁷⁹ St' u Rothschild E. “ What is Security?”, Daedalus 1995, Vol. 124, № 3, p. 53-98

քաղաքացիական հասարակությունը հանդիսանում են այդ արժեքի պահպանման և զարգացման համար միջոցներ, իսկ անհատը՝ պետության գլխավոր ռեսուլսն է: Այդ առումով պետության գլխավոր շահն անձի բազմակողմանի (ֆիզիկական, հոգևոր և մտավոր) զարգացումն է, իսկ սահմանադրական կարգի, պետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանությունը, քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունության ապահովումը, օրենքների իրականացումը և կարգուկանոնի հաստատումը, միջազգային համագործակցությունը պետության գլխավոր շահի՝ անհատի բազմակողմանի զարգացման ապահովման միջոցներ են, որոնք ուղղված են անհատի անվտանգության ապահովմանը:

Քաղաքացիական հասարակությունը՝ որպես անհատի և պետության միջև կապող օղակ բազմիցս ուսումնասիրվել է տարբեր ժամանակաշրջանների հետազոտողների կողմից և երկար ճանապարհ է անցել՝ Արիստոտելից մինչև Շ. Հոքս և Ալ. Դե Թոքվիլ: Այդ ողջ ժամանակահատվածում այն ստացել է «բացառապես բազմաչափություն, որում արձանագրված է քաղաքացիական զարգացման և քաղաքացիական ինքնագիտակցության երկար և բարդ ճանապարհը»⁸⁰: Անդրադառնալով այդ հարցին՝ յուրաքանչյուր նոր մտածող յուրաքանչյուր նոր դարաշրջանում նրանում գտել է իր առանձնահատուկ իմաստը, որը «քաղաքացիական հասարակություն» հասկացությանը թույլ է տվել ոչ միանշանակ դեր ունենալ տարբեր տեսական և աշխարհայացքային համակարգերում:

«Քաղաքացիական հասարակություն» հասկացությունը ժամանակակից քաղաքագիտական գրականության մեջ չի կարելի լիովին մշակված համարել: Որոշ հեղինակներ գտնում են, որ «քաղաքացիական հասարակություն» հասկացությունն այնքան հին է, որքան քաղաքագիտությունը, որն սկիզբ է առնում պլատոնյան հասարակություն–պետություն գաղափարից, ցիցերոնյան քաղաքացիական հասարակությունից և այլն: Այլ հեղինակներ նշում են, որ առաջին անգամ XVII դարում Գ. Լեյբնիցի աշխատություններում է հանդիպում այդ եզրույթը: Եղրորդները պնդում են, որ այդ հասկացությունը 1767թ. առաջին անգամ կիրառել է Ա. Ֆերգյուսոնը և այն մեկնաբանել է՝ որպես քաղաքացիություն և քաղաքակրթության հետևանք:

⁸⁰ Ст' у Федоров И. А. “У истоков демократической традиции”, Гражданское общество – в поисках пути, Под редакцией А.Ю. Сунгрова. Приложение к журналу “Северная Пальмира”. СПб., 1997, с. 30-31

Հարկ է նշել, որ հայկական գիտական գրականության մեջ քաղաքացիական հասարակությունը սահմանվել է հետևյալ կերպ. «Համախումբ պետությունից համեմատաբար մեկուսի կամավոր ընկերակցությունների, որոնք գործում են ինքնագործունեության հիմունքներով: Ներառում է՝ անդամակցություն միություններին և շարժումներին, պատրաստակամություն հանդուրժողաբար վերաբերվելու տարբեր քաղաքական հայացքների, ինչպես նաև քաղաքացիների մասնակցությունը տարբեր միություններին, մարդու քաղաքացիական պատասխանատվությունը հասարակության առջև: Առաջին հերթին պաշտպանում է անձի շահերը, իրավունքներն ու ազատությունները պետության ոտնձգություններից»⁸¹: Աշխատանքի շրջանակներում նպատակահարմար է կիրառել այս սահմանումը, սակայն այն միակողմանի է արտացոլում պետության հետ փոխհարաբերության բնույթը, այսինքն՝ չի դիտարկվում պետության հետ համագործակցության հարցը՝ ուղղված ազգային անվտանգության խնդիրների լուծմանը լայն առումով: Մինչդեռ հարկ է նշել, որ ժողովրդավարական կառավարման պարագայում քաղաքացիական հասարակությունը դառնում է անհրաժեշտություն, քանի որ հենց պետությունն է իր քաղաքացիներին օժտում լայն ազատություններով ու իրավունքներով, ազատ արտահայտվելու, սեփական շահերն իրագործելու նպատակով տարբեր կազմակերպություններ ու կառուցներ ձևավորելու, հանուն սեփական շահերի պայքարելու իրավունքով՝ երաշխավորելով այդ ազատություններն ու իրավունքները: Այնպես որ քաղաքացիական հասարակությունն ու նրա խնդիրները անհրաժեշտաբար ենթադրում են ժողովրդավարական սկզբունքներով կառավարվող պետություն և ակտիվ երկխոսություն ու համագործակցություն պետական կառուցների հետ: Իհարկե, վերջին հաշվով պետությունն է քաղաքական իշխանության սուբյեկտը, սակայն ժողովրդավարական երկրներում քաղաքացիական հասարակությունն էլ բավական ուժեղ և ազդեցիկ ինստիտուտ է, որի հետ պետությունը չի կարող հաշվի չնստել:

Քաղաքացիական հասարակության առաջացման դրդապատճառների շարքում առանձնացվում են մի շարք գործոններ, սակայն անվտանգության տեսանկյունից

⁸¹ Տե՛ս Քոթանցյան Հ. «Հայաստանի Ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում», Երևան, 2008, էջ 180

առավել կարևոր է այն, ինչը կապված է անհատների, տարբեր հետաքրքրություններ ունեցող հասարակական այլ շերտերի ու զանգվածների շահերի քաղաքակիրթ ներկայացման և դրանց բավարարման խնդիրների հետ՝ ուղղված անհատի անվտանգության ապահովմանը: Եվ քանի որ ժողովրդավարական պետությունը կոչված է առավելագույնս բավարարել իր քաղաքացիների հետաքրքրություններն ու պահանջները, իսկ տնտեսության և ապրելակերպի բազմակացութաձևության պայմաններում հասարակության մեջ շահերը բազմազան են և տարբեր, ապա պետությունն ու իշխանությունները գործնականում չեն կարող իրազեկ լինել այդ ամենի մասին⁸²: Այդ շահերի միավորման, հասարակական հնչեղության, պետական ուշադրության ու հոգածության ապահովման խնդիրը, որոնք ազգային անվտանգության հարցեր են լայն իմաստով, ևս լուծվում է հասարակական կազմակերպությունների միջոցով: Պետք է նկատել, որ շահերի այդպիսի բազմազանությունը, դրանց շուրջ քաղաքացիների կամավոր միավորման գործընթացն ու ակտիվ գործունեությունը հնարավոր են միայն լայն ժողովրդավարության պայմաններում: Ժողովրդավարությունը ոչ միայն քաղաքացիական կազմակերպությունները դարձնում է կենսականորեն անհրաժեշտ, այլև ստեղծում է բոլոր հիմնական պայմանները դրանց ձևավորման ու զարգացման համար: Այդ պայմանների շարքում կարելի է առանձնացնել սոցիալական ազատությունները, պետական կառավարման ժողովրդավարական ավանդույթները, քաղաքական գործունեության և բանավեճերին հասարակական ոլորտի առկայությունը, հրապարակայնությունն ու քաղաքացիների իրազեկությունը, որոնք թույլ են տալիս իրատեսորեն գնահատել իրավիճակը, նկատել հիմնախնդիրները և գործնական քայլեր ձեռնարկել դրանց լուծման ուղղությամբ: Էապես կարևոր է նաև համապատասխան օրենսդրական դաշտի, քաղաքացիական հասարակության կառույցների գործունեության սահմանադրական երաշխիքների առկայությունը⁸³:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «քաղաքացիական հասարակությունն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ պետության ինստիտուտը

⁸² Տե՛ս <ովհաննիսյան <. «Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները», Երևան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2003, էջ 15-22

⁸³ Տե՛ս “Гражданское общество: истоки и современность”, Науч. ред. И.И. Кальной, И.Н. Лопушанский, с. 31

լավագույն կերպով չի իրականացնում հասարակական հարաբերությունների կանոնակարգման իր գործառույթները, հասունացել է քաղաքացիական փոխհամաձայնության նախադրյալներ, ծևակերպվում է հանրային պահանջ, ծևավորվում է քաղաքացիական ինստիտուտների ամբողջություն, որոնք ի վիճակի են պետության ինստիտուների հետ իրավահավասար երկխոսության մեջ մտնել, յինել պետության հակակշիռ, զսպել մենաշնորհության նրա ձգտումները՝ հասարակության զարգացման ապահովման համակարգից վերափոխվելով ինքնապահովման համակարգի, որտեղ իշխանության հեղինակությունն էականորեն պայմանավորվում է հասարակական կյանքի վիճակով: Մրանք այն հիմնական չափորոշիչներն են, որոնք բնութագրում են տվյալ երկրում քաղաքացիական հասարակության ծևավորման ու զարգացման մակարդակը:

Փաստորեն, քաղաքացիական հասարակության կառուցները կոչված են յինել ժողովրդավարական պետության կայունության և անվտանգության ապահովման միոցներից մեկը՝ իրականացնելով կազմակերպչական, կայունացնող, վերահսկողական և այլ ֆունկցիաներ:

1.2 Քաղաքացիական հասարակության գործառույթներն ազգային անվտանգության ապահովման դեսանկյունից

Արդի ժամանակներում երկրի անվտանգության ապահովման տեսանկյունից անհրաժեշտություն է առաջացել սահմանել պետության, քաղաքացիական հասարակության և անհատի փոխհարաբերությունների այն պարամետրերը, որոնք ապահովում են նրանց ներդաշնակ փոխազդեցությունը՝ ուղղված երկրի կայուն և անվտանգ զարգացմանը: Այս համատեքստում արդիական է ուսումնասիրել և առանձնացնել այն գործառույթները, որոնք իրականացնում է քաղաքացիական հասարակությունը՝ ազգային անվտանգությունն ապահովելու համար:

Հետազոտության արդյունքում կարելի է ամրագրել, որ քաղաքացիական հասարակության կարևոր գործառույթ է այն, որ վերջինս ծևավորում է ազգային անվտանգության ապահովման դերակատարներին: Հենց քաղաքացիական հասարակությունում է տեղի ունենում անհատների սոցիալիզացիան, այդ թվում՝ նրանց

քաղաքական, իրավական և սոցիալգաղայի այլ ձևերը: Այս գործընթացում առավել կարևոր են քաղաքացիական գիտակցության բարձր մակարդակը, նախաձեռնող, ստեղծագործող անձինք, ովքեր տիրապետում են տեղեկատվության, քաղաքական-կառավարչական հմտությունների, անձնային կողմնորոշումների: Հենց այդպիսի անձանցից է կախված անվտանգության ձևավորումն ու իրացումը, քանի որ անվտանգության հիմնախնդիրն անհատի հիմնախնդիրն է, նրա ընտրությունն է իր, հասարակության, պետության նկատմամբ⁸⁴: Այդ պատճառով անվտանգության ապահովումը պետք է հանդիսանա անհատի, հասարակության, պետության առաջնային նպատակն ու ներքին պահանջմունքը:

Միաժամանակ պետք է նշել, որ քաղաքացիական հասարակության գործառնությունը կարող է ծնել նաև այնպիսի երևույթներ և գործընթացներ, որոնք կարող են բերել պետական համակարգի խախտման և հասարակական կյանքի ապակայունացման, որն էլ անխուսափելիորեն կանդրադառնա ազգային անվտանգության վրա: Եթե հասարակությունում առկա է գաղտնի կոնֆիգուրացին ներուժ և այն մշտապես ավելանում է, ապա սոցիալական պայթյունն անխուսափելի է, և դժվար է կանխատեսել ազգային անվտանգության վրա բացասական ազդեցության աստիճանը: Տարբեր հասարակություններում սոցիալական պայթյունի կրիտիկական կետը տարբեր է և պայմանավորված է մի շարք գործոններով (պատմություն, ավանդույթներ և այլն): Հենց հասարակությունը մոտենում է գերլարվածության գագաթնակետին, սկսում է սոցիալական ցնցումների շրջանը: Հետևաբար՝ կայացած քաղաքացիական հասարակությունն ի վիճակի է գործակել պետության հետ՝ ապահովելով երկրի ներքին կայունությունը: Այս տեսանկյունից կարևորվում է միջին խավը, քանի որ միջին խավի գլխավոր գործառույթը կայունության ապահովումն է: Այդ գործառույթի առկայության հիմնական փաստարկն այն է, որ միջին խավի ներկայացուցիչները ցանկացած հասարակությունում այն սոցիալական ուժերն են, որոնք արտացոլում են վերջինիս հավասարակշության միտումները: Ինչ վերաբերում է հետարյունաբերական հասարակություններում միջին խավի ծավալներին, ապա

⁸⁴ Ст'яу Радиков И. “Безопасность человека: реальность или фикция?”, Безопасность человека в контексте международной политики: вопросы теории и практики: материалы научного семинара. М.: Изд. Московского университета, 2011, с. 36

ժամանակակից քաղաքակիրթ հասարակության կառուցվածքը մասնագետները պատկերում են մոտավորապես հետևյալ կերպ՝ հարուստները կազմում են հասարակության 5-6%-ը, աղքատները՝ 14-15%-ը, իսկ միջին խավը՝ 80%-ը⁸⁵: Տեսաբանների պնդմամբ՝ նման սոցիալական կառուցվածքն ապահովում է հասարակության կայունությունը, քանի որ միջին խավը, լինելով հասարակության ամենաստվար հատվածը, հասարակության մեջ կատարում է կայունացնող դեր. մի կողմից՝ կապող օլակ է հասարակության երկու բևեռների՝ հարուստների և աղքատների միջև, իսկ մյուս կողմից՝ ապահովում է վերջիններիս միջև բավարար սոցիալական տարածություն, որպեսզի հասարակությունը խուսափի սոցիալական բախումներից և ճգնաժամերից: Նման իրավիճակը բնորոշ է հետարդյունաբերական բոլոր հասարակություններին:

Ներկայում մի շարք երկրներում միջին խավի կարևորությունը կապվում է նաև Կ. Մարքսի այն թեզի հետ, որ «մարդկության պատմությունը, դասակարգային պայքարի պատմությունն է»: Ժամանակակից սոցիալական և քաղաքական գործնթացների վերլուծությունները, ինչպես նաև դասակարգային պայքարի առանձնահատկությունները ցույց են տալիս, որ տարբեր ինտենսիվությամբ տեղի ունեցող բողոքի ակցիաներում առաջավոր տեղ է զբաղեցնում ոչ թե աշխատավոր դասը, այլ միջին խավը: Հարկ է մատնանշել, որ բացասական սոցիալական և քաղաքական սցենարներ քննարկելիս ամերիկացի սոցիոլոգները եզրակացնում են, որ նշանակալի թվով կրթված գործազուրկները հանգեցնում են անսպասելի բողոքի արտահայտման⁸⁶: Ավելին, ԱՄՆ քաղաքական էլիտան, գնահատելով երկրում տեղի ունեցող ժամանակակից գործնթացները, օգտվում է «դասակարգային պայքար» թեզից: Այսպես, 2012թ. հունվարի սկզբին նախագահ Օբաման իր ավանդական ելույթում օգտագործեց «դասակարգային պայքար» ձևակերպումը, երբ բնութագրում էր ամերիկյան հասարակությունում տեղի ունեցող սոցիալական գործնթացները: Ըստ ուսումնասիրությունների՝ բողոքի ակցիաներին միջին խավի մասնակցությունը

⁸⁵ Տե՛ս Տարսին Մ. “Реальная Россия: Социальная стратификация современного российского общества”, М.: “Журнал Эксперт”, 2006, с. 15

⁸⁶ Տե՛ս “Rising Share of Americans See Conflict Between Rich and Poor, Pew Research Center. Social and Demographic Trends”, Washington, 2012

<http://pu.edu.pk/images/journal/pols/Currentissue-pdf/State%20Relational%20Models.pdf>

հիմնականում պայմանավորված է նրանով, որ միջին խավի հետ նույնականացվող անձին տրվող հնարավորությունները սպասվածից ցածր են: Օրինակ՝ Բուլղարիայում բարձրագույն կրթություն ստացած քաղաքացիների մոտ 50%-ի զբաղվածությունը պահանջում է ավելի ցածր կրթական մակարդակ:

Այսպիսով, կարելի է փաստել, որ սեփական սոցիալական կարգավիճակից բավարարվածության աստիճանն առանձնահատուկ ինդիկատոր է համարվում հասարակության մեջ լատենտ սոցիալական լարվածության բացահայտման համար: Լարվածություն, որը կարող է որոշակի պայմաններում արտահայտվել, ինչպես, օրինակ, դա տեղի ունեցավ «արաբական գարնան»⁸⁷ պարագայում, երբ, ըստ փորձագետների, միջին խավը, որը հիմնականում կազմում էր երիտասարդությունը, հայտարարում էր, որ ցանկանում է տիրապետել ավելի լայն տնտեսական և քաղաքական ռեսուրսների:

Ինչ վերաբերվում է Հայաստանին, ապա միջին խավի ներկայացուցիչների սպասելիքները շատ ավելի լավատեսական են իրենց ճակատագրի, քան ընդհանուր հասարակության և պետության զարգացման հեռանկարների վերաբերյալ: Հայաստանում առկա է տնտեսական և գործառնական առումով կայացած, հասարակության 49.12% կազմող միջին խավ, որը պատրաստ է վճարելու հարկերը, սակայն միաբանված չէ, չի մասնակցում երկրում որոշումների կայացման գործընթացին, չի նույնացնում իր ապագայի հեռանկարները երկրի ապագայի հետ, իսկ ամենամտահոգիչն այն է, որ միջին խավի զգայի հատվածը պատրաստ է արտագաղթել Հայաստանից (շուրջ 72%-ը)⁸⁸:

Այսպիսով, ազգային անվտանգության ապահովման համատեքստում քաղաքացիական հասարակությունն իրականացնում է կայունացման գործառույթ ոչ միայն այն պատճառով, որ ուղղակի և անուղղակի կապված է միջին խավի հետ, որը հասարակության սոցիալական կառուցվածքի կայունության հիմքն է, այլ նաև պայմանավորված է նրանով, որ ձևավորում է կուսակցություններ, հասարակական

⁸⁷ Արաբական գարուն կամ համարաբական ապստամբություն հանուն արաբների ազատականացման (Պրոֆ. Հովհաննիսյան Ն. «Մուամար Քադրաֆիի Անեծքը», 17.09.2015, <http://azg.am/AM/2015091803>)

⁸⁸Տե՛ս Մելքոնյան Յու. «Միջին խավը Հայաստանում», Լրաբեր հասարակական գիտությունների, 3 (629), Երևան, <<ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010, էջ 191-204

<http://lraber.asj-oa.am/701/1/18. Melqumyan - 191.pdf>

կազմակերպություններ, շարժումներ, որոնք իրենց մասնակցությունն են ունենում հասարակական–քաղաքական կյանքում:

Իրականացված հետազոտությունը թույլ է տալիս նշել, որ քաղաքացիական հասարակության գործառույթներն ազգային անվտանգության ապահովման հարցում դիտարկվում են հիմնականում պետության հետ այս կամ այն կերպ փոխկապվածության մեջ: Այսինքն՝ այդ գործառույթները պայմանավորված են քաղաքացիական հասարակության և պետական կառավարման մարմինների միջև հարաբերություններով, որոնք բազմավեկտորային են:

Քաղաքացիական հասարակության և պետության փոխհարաբերությունը բավականին բարդ հարց է, որը որոշակի լարում է պարունակում, ինչն ակնհայտ կամ լատենտ առկա է նոյնիսկ ժողովրդավարական վարչակարգի պայմաններում ձևավորված համագործակցային հարաբերություններում⁸⁹: Հարումը բխում է հենց այս կառույցների էռլեյունից, հանդիսանում այդ հարաբերությունների որոշիչ հատկանիշը, քանի որ փոխադարձ վերահսկողություն և սահմանափակում է ենթադրում:

Ազգային անվտանգության ոլորտում պետություն–քաղաքացիական հասարակություն փոխհարաբերությունն ուսումնասիրողների մի մասն իր հայեցակարգերը ձևավորում է՝ հիմք ընդունելով Ա. Թոքվիլի, Ռ. Պատնեմի և այլ գիտնականների դիրքորոշումները: Իրենց աշխատություններում նրանք ենում են այն բանից, որ քաղաքացիական հասարակության հիմքն անձն է, որը, հանդիսանալով այս կամ այն խմբի մասը, իր բազմակողմ պահանջմունքները բավարարում է այդ միավորումների, ասոցիացիաների և այլ տիպի կազմակերպությունների միջոցով: Դրա համար քաղաքացիական հասարակությունը հնարավորություն է ստանում ազդել պետության ներսում ժողովրդավարական նորմերի կայացման և տարածման վրա: Նման հասարակության գործունեությունը հիմնված է այնպիսի հասկացությունների վրա, ինչպիսին է վստահությունը, համագործակցությունը, հանդուրժողականությունը, հանրային փոխօգնությունը և այլն, որոնց ամբողջությունը հանդիսանում է

⁸⁹ St’u Anjum T. “From Confrontation to Collaboration: Contemporary Discourse on the State-Civil Society Relational Models”, Journal of Political Studies, p. 95
<http://pu.edu.pk/images/journal/pols/Currentissue-pdf/State%20Relational%20Models.pdf>

«սոցիալական կապիտալ»՝ նպաստելով անվտանգ և զարգացած ժողովրդավարական պետության կայացմանը:

Սակայն քաղաքացիական հասարակությունը ձևավորվում է ինչպես պետության կողմից չկարգավորված մասնավոր, առանձին անհատների շահերի պաշտպանությանն ուղղված գործունեության հիման վրա, այնպես էլ քաղաքացիական հասարակությունը ներկայացնող առանձին անձանց, կազմակերպությունների, ասոցիացիաների կենսագործունեության ընթացքում այդ կանոնակարգման արտահայտման հիման վրա: Լ. Ս. Մամուտը նշել է. «Ոչ ոք չի ժխտի այն, որ քաղաքացիական հասարակությունը և պետությունն իրականում տարբեր ֆենոմեններ են: Նրանք տարբեր միջոցներով և գործիքներով ինտեգրում են մարդկանց, որոնք միևնույն մարդկային կոլեկտիվի (հասարակության) բաղկացուցիչներ են: Սակայն ակնհայտ տարբերությունները, որոնք օբյեկտիվորեն առկա են նրանց միջև, ոչ մի դեպքում այդ ֆենոմեններին միմյանցից հարաբերականորեն անկախ չեն դարձնում: Քաղաքացիական հասարակությունը և պետությունը միմյանցից բացարձակ փոխկախված սոցիալական մեծություններ են և սեփական գոյության պահպանման համար նրանք միևնույն չափով անհրաժեշտություն են միմյանց համար»⁹⁰:

Պետություն–քաղաքական հասարակություն փոխհարաբերության մոդելներին անդրադարձել են մի շարք տեսաբաններ: Սունգուրովն առանձնացրել է պետություն–քաղաքացիական հասարակություն փոխհարաբերության 4 մոդել՝ կախված այս երկու դերակատարների քաղաքականությունների նպատակների ու միջոցների համընկնումից կամ հակառակը.

- համագործակցություն (cooperation – նման նպատակներ, նման միջոցներ),
- բախում (confrontation – տարբերվող նպատակներ, տարբերվող միջոցներ),
- փոխլրացում (complementarity – նման նպատակներ, տարբերվող միջոցներ)
- կոռպուտացիա (co-optation – տարբերվող նպատակներ և նման միջոցներ)

⁹⁰ Мамут Л. С. “Гражданское общество и государство: проблема соотношения”, Общественные науки и современность, №5, 2002, с. 101

⁹¹ Сунгурев А. “Модели взаимодействия структур гражданского общества и органов власти: российский опыт”, В сб. Модернизация экономики и глобализации/ Отв.ред. Е.Г.Ясин. В 3-х кн. Книга 3. - М., Изд.дом ГУ-ВШЭ, 2009, с. 503

Առանձնացվում է նաև Էտատիստական մոդելը՝ համաձայն որի քաղաքացիական հասարակությունը, չնայած ֆորմալ կերպով առանձին է պետությունից, սակայն իրականում ենթարկվում է նրան: Մինչդեռ լիբերալ դեմոկրատական մոդելի դեպքում քաղաքացիական հասարակությունն անկախ է պետությունից (մինչև որոշակի սահման) և որոշ ոլորտներում նրա նկատմամբ առաջնահերթություն ունի: Այս մոդելում պետությունն ստեղծում է բավականին լայն իրավական դաշտ, որը պաշտպանում է այն կազմակերպությունների գործունեությունը, որոնք արտահայտում են քաղաքացիական հասարակության կարծիքը, ինչպես նաև առանձին անհատների կամարտահայտման համար պայմաններ է ստեղծում:

Ընդհանրացնելով՝ կարելի է նշել, որ պետության և քաղաքացիական հասարակության հարաբերությունները կարող են կառուցվել տարբեր հարթություններում: Այսպես, որոշակի գործոններով պայմանավորված՝ քաղաքացիական հասարակությունը և պետությունը միմյանց հակադիր ինստիտուտներ են, և այս դեպքում պետությունն օտարված է բնակչության մեծամասնության մասնավոր շահերից, ավելին՝ խիստ վերահսկողություն է իրականացնում և նույնիսկ ճնշում է գործադրում դրանց նկատմամբ: Իր հերթին, քաղաքացիական հասարակությունը թշնամաբար է տրամադրված պետության և նրա ինստիտուտների նկատմամբ՝ պատրաստ լինելով դրանք վերափոխել հեղափոխական ճանապարհով, ինչը կարող է խարիսկել երկրի անվտանգությունը: Այնինչ, ժողովրդավարության պայմաններում քաղաքացիական հասարակությունը և պետությունը ներդաշնակ կերպով համագոյակցում են, այսինքն՝ պետությունն արտահայտում է բնակչության մեծամասնության շահերը, իսկ քաղաքացիական հասարակությունը, որպես կանոն, բոլոր հարցերում աջակցում է պետությանը: Մեկ այլ ձևաչափ է այն, որ քաղաքացիական հասարակությունը և պետությունը գտնվում են մշտապես փոփոխվող կոնֆլիկտային և ներդաշնակ համագոյակցման պայմաններում:

Այնուամենայնիվ, ցանկացած մոդել ենթադրում է, որ քաղաքացիական հասարակությունը պետք է կանխարգելիչ ուժ լինի, որը պետության հետ ակտիվ համագործակցության արդյունքում պաշտպանում է քաղաքացիների իրավունքներն ու շահերը՝ ապահեվելով անհատի անվտանգությունը:

Չնայած ազգային անվտանգության ապահովման գործում միմյանց հետ փոխազդեցության մեջ գտնվող երկու ենթահամակարգերից (պետություն և հասարակություն) պետական համակարգին է տրվում գլխավոր դերակատարությունը՝ այդուհանդերձ, պետության և քաղաքացիական հասարակության ներդրումների հարաբերակցությունն ազգային անվտանգության ամրապնդման հարցում մեծապես կախված է տվյալ երկրի առանձնահատկություններից, ինչպես նաև իրենց առջև դրած խնդիրներից: Այդ պատճառով, հետազոտվող հիմնահարցը կարող է դիտարկվել տարբեր հարթություններում:

Մի կողմից՝ դիտարկվում է քաղաքացիական հասարակության դերն ազգային անվտանգության ապահովման համակարգում, որը հնարավոր է ձևակերպել՝ որպես գոյություն ունեցող և մշտապես ձևավորող տարբեր մակարդակի հասարակական կառուցների ամբողջություն, որն իրականացնում է ընդհանուր քաղաքացիական անվտանգության գործառույթ, որոնց դերը որոշվում է մի շարք այլ գործառույթների իրականացման հնարավորությամբ: Դրանք են՝ սոցիալական վտանգների, կոնֆլիկտների, ճգնաժամային իրավիճակների և սպառնալիքների առաջացման նախազգուշացում, քաղաքացիների և կազմակերպությունների սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանություն, հասարակական կարծիքի ձևավորում և դրա վրա ազդեցություն, պետական իշխանության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացում, իր անդամների մորիլիզացում՝ անվտանգության ոլորտում խնդիրների լուծման գործընթացի վրա ազդելու համար, քաղաքացիական գիտակցության զարգացում, սոցիալական համերաշխության և համաձայնության հաստատում, քաղաքացիների քաղաքական ակտիվության և իրավական մշակույթի բարձրացում, ընտրությունների կազմակերպման և իրականացման վրա հասարակական վերահսկողության զարգացում: Մյուս կողմից՝ քաղաքացիական հասարակությունն ազդում է ազգային անվտանգությանն ուղղված պետական քաղաքականության իրականացման և որոշումների կայացման վրա:

Ուսումնասիրության հիմնա վրա կարելի է առանձնացնել ևս մի քանի գործառույթներ: Այդպիսին է արտահայտման գործառույթը, երբ քաղաքացիական

հասարակությունն արտահայտում է շահերի խմբեր, որոնք պետք է գիտակցվեն, արտաքերվեն և հասցեն պետական համապատասխան կառուցներին: Քաղաքացիական հասարակությունն այս պարագայում միջնորդ է հանդիսանում քաղաքացու և պետության միջև: Քաղաքացիական հասարակությունը, իրականացնելով արտաքերման, արտահայտման (արտիկուլյացիա) գործառույթը, միաժամանակ կուտակում և փոխանցում է իր անդամների շահերի և պահանջմունքների լայն շրջանակ: Այդ շահերն ու պահանջմունքներն այնքան բազմաթիվ, բազմազան և տարբերակված են, որ պետությունն օբյեկտիվորեն չի կարող իմանալ և բավարարել: Դրա հետ կապված՝ քաղաքացիական հասարակությունը, ամեն դեպքում, տեղեկացնում է պետությանը քաղաքացիների այն շահերի ու պահանջմունքների մասին, որոնք հնարավոր են բավարարել միայն պետության ուժերով, ազդանշանում է հասարակական ոչ բարեկեցիկ կյանքի մասին:

Առանձնացվում է նաև համախմբման գործառույթը, երբ քաղաքացիներին կոնսոլիդացնելով տարբեր ասոցիացիաների, ոչ կառավարական, ոչ ֆորմալ միավորումների միջոցով՝ քաղաքացիական հասարակությունը խոչընդոտում է նրանց մասնատման, փոխադարձ օտարման գործընթացներին: Առաջարկելով սոցիալական կոռպերացիաների բազմաթիվ ձևերի, նոր միավորումների ստեղծումը՝ քաղաքացիական հասարակությունն անհատներին թույլ է տալիս առաջ գնալ սոցիալական, գործնական, ստեղծագործական, ընկերական կապերի օգտագործմամբ, որն էլ բավականին կարևոր է ազգային անվտանգության ապահովման համար, քանի որ նվազագույնի է հասցնում հասարակության մեջ կոնֆլիկտների ներուժը:

Հարկ է նշել, որ քաղաքացիական հասարակության նպատակը ոչ միայն քաղաքացիների շահերի և պահանջմունքների արտահայտումն ու նրանց միավորումն է, այլ նաև պետության կողմից դրանց բավարարման հասնելը: Եվ քանի որ քաղաքացիական հասարակությունը հանդես է գալիս՝ որպես անձի իրավունքների և ազատությունների երաշխավոր, այն ստիպում է պետությանն իր իշխանական գործունեության մեջ մշտապես շտկումներ իրականացնել, ինչպես նաև պետությանը թույլ չի տալիս մենաշնորհայնացնել կառավարչական գործառույթը: Քաղաքացիական

հասարակությունը զսպում է այդ գործառույթի ծայրահեղ կենտրոնացման և բյուրոկրատացման միտումը: Նման գործողությունը կարևոր է այնտեղ, որտեղ պետության իշխանական գործառույթները դուրս են գալիս անհրաժեշտ նպատակահարմարության սահմաններից, վերածվում են ադմինիստրատիվ նկրտումների և սկսում են ակնհայտ սահմանափակել քաղաքացիների իրավունքները, որն էլ բացասական ազդեցություն է ունենում նրանց անձնական անվտանգության վրա:

Ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից ուշադրության է արժանի քաղաքացիական հասարակության վերահսկողական գործառույթը: Քաղաքացիական հասարակությունը բազմաթիվ միջոցներով վերահսկողություն է իրականացնում պետության գործունեության նկատմամբ՝ դրանով իսկ կատարելով այն մեխանիզմի դերը, որն ապահովում է հասարակության և պետության ուժերի միջև հավասարակշռությունը: Քաղաքացիական հասարակությունը «զսպումների» և «հակակշիռների» համակարգում կարևոր և գործուն ինստիտուտներից մեկն է քաղաքական իշխանության՝ բացարձակ տիրապետության ձգտման ճանապարհին: Այդ առաքելությունն իրականացնելու համար կան որոշակի միջոցներ՝ ընտրական գործընթացներին և հանրաքեներին ակտիվ մասնակցությունը, հասարակական կարծիքի ձևավորման մեծ հնարավորությունները, զանգվածային լրատվամիջոցներով հասարակական կարծիքի ձևավորումը և այլն:

Ընդհանուր համագործակցության, երկխոսության, համաձայնողական խորհրդատվությունների միջոցով քաղաքացիական հասարակությունը ստեղծում և աջակցում է ամբողջ սոցիալական համակարգի ներքին հավասարակշռությանը: Իդեալական ձևում սոցիալական սուբյեկտների՝ անձի, պետության և քաղաքացիական հասարակության միջև պետք է լինի քաղաքակիրթ հարաբերությունների եռամիասնություն: Արդյունքում պետությունն ու անձը, որոնք ի սկզբանե թվում են անհամատեղելի սոցիալական միավորներ, զարգացած քաղաքացիական հասարակության պայմաններում դառնում են մեկ արժեքավոր մեծություն: Իսկ դա, իր հերթին, նպաստում է ազգային անվտանգության համակարգի ամրապնդմանը:

Ուսումնասիրության շրջանակներում նպատակահարմար է առանձնացնել նաև քաղաքացիական հասարակության ինքնակարգավորման գործառույթը։ Քաղաքացիական հասարակությունն ընդունակ է կյանքի կոչել, գործնական դաշտ ներմուծել «ներքնից» առաջացող զանգվածների սոցիալական նախաձեռնությունները և դրանով ապահովել ինքնակարգավորման գործընթացը։ Քաղաքացիական հասարակությունն իշխանության կողմից հաստատված ուղղահայաց իշխանական հարաբերությունները լրացնում է հորիզոնական սոցիալական կապերով, որոնք գործառնում են ինքնակարգավորման սկզբունքների հիման վրա։ Ընդ որում՝ մի շարք նման նախաձեռնություններ անմիջականորեն ուղղված են ազգային անվտանգության ապահովմանը։

Կարևոր է ընդգծել, որ ազգային անվտանգության ապահովման վերոնշյալ ենթահամակարգերը պետք է գործառնեն միասնության մեջ՝ միմյանց լրացնելով ներդաշնակ ձևով։ Չնայած պատմության մեջ միշտ չէ այդպես լինում։

Առանձին ազգերի պատմության ընթացքում ճգնաժամային իրավիճակներում (պատերազմ, լայնամասշտաբ սոցիալական ցնցումներ և այլն), երբ պետության համար բավականին դժվար շրջան է, քաղաքացիական հասարակության ինստիտուտները կարող են օգնել պետությանը վերականգնվել, սակայն, հակառակը, կարող են նաև գործել «հրիր ընկնողին» սկզբունքով կամ էլ պետական մեքենայի լարված իրավիճակի նկատմամբ մնալ անտարբեր։ Մարդկության պատմության ընթացքում նման արձագանքման օրինակները քիչ չեն։ Օրինակ՝ 1789 և 1917թթ. Ֆրանսիսայում և Ռուսաստանում հեղափոխությունները, 1991թ. ԽՍՀՄ փլուզումը և այլն։ Դրա համար բավականին կարևոր է, որ ազգային անվտանգության ապահովման ինչպես պետական, այնպես էլ հասարակական համակարգերն ունենան ընդհանուր նպատակ և ակտիվորեն փոխգործակցեն միմյանց հետ՝ երկրի անվտանգությանը հասնելու համար։

Քաղաքացիական հասարակության և պետության փոխհարաբերություններում որոշիչ դեր ունի հասարակական կազմակերպությունների արդյունավետ աշխատանքը։ Կազմակերպությունները պետությանն են դիմում տարբեր նախաձեռնություններով, առաջարկություններով ու դիտողություններով, իսկ

իշխանություններն էլ ուսումնասիրում են դրանք և նպատակահարմարության դեպքում կյանքի են կոչում: Հարվարդի Քենեդիի անվան կառավարման դպրոցի դեկան Ժոզեֆ Նայը «ՀԿ-ների ուժի մեծացումը» հոդվածում գրում է. «Հասարակական կազմակերպությունները նոր նորմեր են զարգացնում, որոնց միջոցով կարողանում են ուղղակիորեն ճնշում գործադրել կառավարությունների, գործարարների վրա, որպեսզի վերջիններս փոխեն իրենց քաղաքական ուղին: Հասարակական կազմակերպությունները նաև կարող են անուղղակիորեն հասարակական կարծիք ձևավորել այն խնդրի շուրջ, թե ինչ փոփոխություններ պետք է անեն կառավարություններն ու գործարարները: Հասարակական կազմակերպությունները, իհարկե, չունեն «կոշտ ուժ» գործադրելու հնարավորություն, սակայն նրանք հաճախ կիրառում են «փափուկ ուժ», որը ենթադրում է ոչ թե հակադրվելով, այլ գրավելով ցանկալի արդյունքների հնարավորությունը: Եվ քանի դեռ հասարակական կազմակերպությունները համախոհներ ունեն, կառավարությունները ստիպված են հաշվի նստել նրանց հետ»⁹²: Նա նաև նշել է, որ շատ կարևոր է, որպեսզի հասարակական կազմակերպություններն անընդմեջ, այլ ոչ թե մի որևէ կարճ ժամանակահատվածում ներգրավված լինեն սեփական երկրի բարեփոխման մեջ⁹³:

Ուշագրավ է նաև այն, որ որոշ ուսումնասիրողներ (Թ. Կոզերը, Դ. Ֆերնանդոն և Ա. Հեսթոնը) մատնանշում են քաղաքացիական հասարակության ապակառուցողական գործունեությունն ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից, քանի որ տարբեր քաղաքական խմբավորումներ ձգտում են իրենց շահերն ու պահանջմունքները բավարարել ցանկացած հասանելի եղանակով: Դ. Ռայլին նման օրինակ է բերում հտալիայում երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ ազգայնական շարժումներին⁹⁴: Քննադատական դիրքերից խոսելով՝ Հանթինգթոնը նշում է, որ քաղաքականացված սոցիալական ուժերն ունակ են ոչ միայն գերիշխող օրակարգեր ստեղծել, այլև խաթարել քաղաքական կայունությունն ու կառավարության՝ խնդիրներ լուծելու կարողությունը և գտնում է, որ քաղաքական

⁹²Տե՛ս Joseph N. S. “The Rising Power of NGO's”, “Project Syndicate” տեղեկատվական կենտրոն, <https://www.project-syndicate.org/commentary/the-rising-power-of-ngo-s?barrier=true>

⁹³Տե՛ս Հռվիաննիսյան Վ. «ՀԿ-ներ և հեղափոխություններ», Երևան, «Վան Արյան», 2005, էջ 75-77

⁹⁴Տե՛ս Յաшина Ա. Բ. «Гражданское общество как субъект обеспечения национальной безопасности: опыт России и США», грамота, № 11 (25), 2012, с. 218-221, www.gramota.net/materials/3/2012/11-2/53.html

ինստիտուտները պետք է իշխեն այդ «հում սոցիալական ուժերին» հասարակության կայունությունը պահպանելու համար⁹⁵: Հետաքրքիր է նաև Գրամշիի մոտեցումը, ով քաղաքացիական հասարակությունը հասկանում էր որպես հանրային ոլորտ, որտեղ ընթանում է գաղափարների և համոզմունքների ծևավորում և քաղաքական պայքար դրանց համար⁹⁶: Ամփոփելով՝ կարելի է նշել, որ քաղաքացիական հասարակության ինստիտուտներն ազդում են երկրում քաղաքականության վրա նաև քաղաքական հարցերում ներգրավված լինելու առումով, և այդ իմաստով պետք է որ ուղղված լինեն նաև հանրության տարբեր շերտերին գաղափարապես գրավելուն:

Ժամանակակից հասարակական-քաղաքական գործնթացների վերլուծությունը ցույց է տալիս, որ հասարակություններում առկա են մի շարք ճգնաժամային երևույթներ, որոնցից մեկը կոչվում է պետության ճգնաժամ, որը գլոբալ գործնթացների ազդեցությամբ կորցնում է քաղաքացիների անվտանգության ապահովման իր դիրքերը, և արդյունքում ի հայտ է գալիս քաղաքական ապատիա կամ բնակչության քաղաքացիական անհանդուրժողականություն: Կ. Մակֆերսոնը նկարագրել է ժամանակակից քաղաքական իրավիճակը՝ որպես «քաղաքական ընտրախսավի և անտարբեր ընտրողների միջև մրցակցության համակարգ»⁹⁷: Ինչպես գրում է Սթրաթֆոր վերլուծականը՝ մեկ շաբաթվա ընթացքում հազարավոր բողոքի ակցիաներ են իրականացվում աշխարհում⁹⁸, որոնց շարքում են կրոնական հիմնադիրների, Ուոլ Սթրիթի գործազրուկների շարժումները: Սակայն միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ նման բողոքի ակցիաները, հանդիսանալով քաղաքացիական հասարակության որոշակի խմբի դիրքորոշման արտահայտությունը, բացասական հետևանքներ կարող են ունենալ ազգային անվտանգության տեսանկյունից, քանի որ սկզբում բողոքի ակցիաները կարող են կրել ապաքաղաքական դրսւորումներ՝ բնապահպանական, մշակութային, մարդու իրավունքների պաշտպանության և այլն, սակայն դնթագրում սահմանավորվում

⁹⁵ St'u Huntington S. "Political Order in Changing Societies", Yale University Press, 1968, P. 55.

⁹⁶ St'u Hoare Q. and Smith G. N. "Selections from the prison notebooks of Antonio Gramsci", ElecBook, London, 1999, p. 506

⁹⁷ Ст'и Макферсон К. Б. "Жизнь и времена либеральной демократии". М., Изд. дом Гос. ун-та - Высшей школы экономики. 2011. с. 174

⁹⁸ St'u West B. "Protest Movements as Political Strategy", Stratfor global intelligence, 05/07/2012 <http://www.stratfor.com/weekly/protestmovements-political-strategy>

Են այն կառուցները, որոնք հետագայում ունենալու են այլ դերակատարում: Այդ նախնական «քաղաքացիական խմբերի» շուրջն են աստիճանաբար հավաքվելու ուսանողները, հասարակական կազմակերպությունները, և նրանք հայտնվելու են քաղաքական ուժերի ուշադրության կենտրոնում: Հարկ է նշել, որ հասարակական շարժումները վայելում են հասարակության համակրանքն ու աջակցությունը՝ որպես անշահախնդրորեն հասարակության իրավունքների համար պայքարող և հաղթանակող խմբեր, որոնք ունեն սեփական, երեսմ նոր իշխանություններից հստակորեն տարանջատվող լիդերներ և «անկախ» հեղափոխականի մշտական կարգավիճակ. «Մենք պայքարում ենք ոչ թե իշխանության դեմ, այլ հասարակության համար...»:

Այս համատեքստում ուշադրության են արժանի այն աշխատությունները, որոնց շրջանակներում դրանց հեղինակները (Է. Գիդենս⁹⁹, Կ. Կրաուչ¹⁰⁰) պնդում են, որ հեղափոխությունների և հասարակական շարժումների տեսություններն անխուսափելիորեն հատվում են: Այսինքն՝ հասարակական շարժումները դիտարկվում են՝ որպես համընդհանուր շահերի իրականացման կոլեկտիվ փորձ կամ կոլկտիվ գործողության արդյունքում համընդհանուր նպատակին հասնելու փորձ՝ հաստատված ինստիտուտների շրջանակներից դուրս: Եվ եթե հասարակական շարժումները մարդկային զանգվածներում արձագանք են ստանում, ապա այն մեծանում է, քանի որ պահանջները տեղ են գտնում հասարակ մարդկանց մտքերում և խոսակցություններում»: Այդ դեպքում պետությունը՝ ի դեմս իշխող քաղաքական ընտրախավի, կոնֆլիկտի մեջ է գտնվում քաղաքացիական հասարակության խմբերի հետ, ինչը բերում է պետության և հասարակության ապակայունացմանը: Որպես օրինակ կարող են հանդիսանալ արաբական աշխարհում իրար հաջորդող բողոքի ակցիաները, որոնք արդյունքում վերածվեցին բաց հակամարտության և բերեցին քաղաքացիական պատերազմի:

Այս համատեքստում արդիական է նաև քաղաքացիական հասարակության գործառնության վրա ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների

⁹⁹ Ст'и Гидденс Э. “Социология”, Пер. с англ.; науч. ред. В. А. Ядов; общ. ред. Л. С. Гурьевой, Л. Н. Посилевича. – Москва, Эдиториал УРСС, 1999, с. 446

¹⁰⁰ Ст'и Крауч К. “Постдемократия”, Москва, Изд. дом Гос. ун-та - Высшей школы экономики, 2010, с. 192

ազդեցության դիտարկումը, ինչը սերտորեն կապված է երկրի անվտանգության ապահովման հարցի հետ: Քաղաքացիական հասարակության և նոր տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների փոխազդեցության ռատումնասիրության հիման վրա կարելի է փաստել, որ ժամանակակից քաղաքացիության մեջ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը քաղաքացիական հասարակության վրա գնահատվում է «կիբերլավատեսության» և «կիբերվատատեսության» սահմաններում¹⁰¹: Կիբերվատատեսության կողմնակիցները գտնում են, որ համացանցը փոխել է պետության և քաղաքացիական հասարակության հարաբերությունների հավասարակշռությունը, սակայն առավել ուշագրավ է կիբերլավատեսական մոտեցումը՝ ըստ որի համացանցն այն հարթակն է, որտեղ կարելի է քննարկել սոցիալական, հասարակական, քաղաքական բազմաթիվ, այդ թվում՝ անվտանգության հարցեր: Ավելին, համացանցը հնարավորություն է տալիս պետության և քաղաքացիական հասարակության միջև կառուցել երկխոսություն: Սակայն հարկ է նշել, որ քաղաքացիական հասարակության ավանդական կազմակերպությունները տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման հարցում բավականին պահպանողական են: Այդ կազմակերպությունների կողմից չի կիրառվում համացանցի ներուժն ամբողջությամբ և չեն գրավում մարդկանց ուշադրությունը ներկայացվող հիմնախնդրի վրա: Օրինակ՝ պաշտոնական կայքերը կիրառվում են նոր ֆինանսական ռեսուրսների հայթայթման կամ մամլո հաղորդագրությունների հրապարակման համար, այլ ոչ թե տվյալ կազմակերպության առաքելութամբ ամրագրված հիմնախնդիրները քննարկելու և լուծումներ առաջարկելու համար: Միաժամանակ, ներկայում ձևավորվում են քաղաքացիական խմբեր կամ շարժումներ, որոնք գոյատևում են տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների գործիքների կիրառման շնորհիվ և դրանց բնութագիրը տարբերվում է համացանցից դուրս գործող խմբերի բնութագրից: Տեղեկատվական տեխնոլոգիների ոլորտի շարունակական և արագ զարգացումը բերում է նրան, որ դժվարություններ են ստեղծվում քաղաքացիական հասարակության և շահագրգիռ մարմինների միջև հաղորդակցության գործում՝ պահանջելով մշտապես

¹⁰¹ Бакутина Н.С. “Гражданское общество и новые информационно-коммуникационные технологии”, Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского, 2015-№2, с. 79-80

մշակել նոր ռազմավարություններ: Այս պարագայում պետությունից պահանջվում է ճկունություն և արագ արձագանքելու կարողություն քաղաքացիական հասարակության կողմից բարձրացվող հարցերին՝ կանխարգելելու և չեզոքացնելու հասարակության մեջ լարվածության առաջացման հնարավորությունը:

Վերոնշյալը թույլ է տալիս նշել, որ քաղաքացիական հասարակությունը ոչ միշտ է իհմք հանդիսանում ժողովրդավարության և հասարակության անվտանգության համար, քանի որ այն կարող է նպաստել ավտորիտար քաղաքական վարչակարգի հաստատմանը, որի համար առավել նախընտրելի են քաղաքացիական հասարակության այն ինստիտուտները, որոնք առաջ են քաշում այնպիսի հարցեր, ինչպիսիք են բարեգործությունը, Էկոլոգիան և այլն, այլ ոչ թե հասարակության անդամների իրավունքներին և քաղաքական կյանքին ուղղված հարցեր: Այնուամենայնիվ, քաղաքական իշխանության կողմից բացարձակ իշխանության ձգտման համակարգում քաղաքացիական հասարակությունը զսպումների և հակակշիռների արդյունավետ մեխանիզմ է: <Ետևաբար՝ ազգային անվտանգության ապահովման համար անհրաժեշտ են իշխանության մարմինների նկատմամբ քաղաքացիական հասարակության ազդեցության այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք կապահովեն ինչպես սոցիալական հիմնախնդիրների լուծումը, այնպես էլ կնպաստեն պետության, հասարակության, անհատի կայուն և անվտանգ զարգացմանը: Իսկ հիմնախնդիրների լուծմանն ուղղված պետության դիրքի թուլացումը հնարավոր է վերականգնել համագործակցության զարգացման միջոցով:

Վերլուծելով «պետություն–քաղաքացիական» հասարակություն» փոխհարաբերությունների մոդելները՝ կարելի է փաստել, որ ժողովրդավարական քաղաքական ռեժիմի պայմաններում ամենաարդյունավետ սխեման հանդիսանում է համագործակցությունը, գործընկերությունը: Այդ մոդելի գոյության կարևորագույն չափանիշն է պատասխանատու մարմինների կողմից հասարակական վերահսկողության կարևորության գիտակցումը¹⁰²: Այս համատեքստում հետաքրքիր է ԱՄՆ-ի փորձը, որը ժողովրդավարության կառուցման և քաղաքացիական

¹⁰² Се'у Сунгуроев А. «Модели взаимодействия структур гражданского общества и органов власти: российский опыт», В сб. Модернизация экономики и глобализации, Отв.ред. Е.Г.Ясин. В 3-х кн. Книга 3. Москва.: Изд.дом ГУ-ВШЭ, 2009, с. 502

հասարակության ձևավորման ոլորտում երկար պատմություն ունի: ԱՄՆ Ազգային անվտանգության ռազմավարության¹⁰³ մեջ մանրամասնորեն ներկայացված է քաղաքացիական հասարակության մասնակցության հնարավորությունը ու մեխանիզմները ազգային անվտանգության ապահովման գործընթացին: Ներկայում առավել քան 70% քաղաքացիներ մասնակցում են պետության կյանքին տարբեր ոլորտներում՝ հանդիսանալով անվտանգության ապահովման համակարգի լիարժեք սուբյեկտներ. նրանց լրկալ և գլորալ մակարդակներում որոշակի լիազորություններ են տրված¹⁰⁴: Միավորումները և հասարակական կազմավորումները ոչ միայն անվտանգությունն ապահովող մարմիններ են, այլև ազգային անվտանգության նոր քաղաքականության ձևավորողներ: Քաղաքացիական հասարակության ինստիտուտները, քաղաքացիները ԱՄՆ-ում հանդիսանում են քաղաքականության լիիրավ սուբյեկտներ՝ մասնակցելով քաղաքական ռազմավարություններին: Պաշտպանության նախարարության ստորաբաժանումներում, ռազմական ուղղվածության գիտական հաստատություններում և զինված ուժերում աշխատում են քաղաքաթիվ քաղաքացիական մասնագետներ: Բիզնեսի, գիտահետազոտական ինստիտուտների, հասարակական կազմակերպությունների կադրերի մշտական ռոտացիա է տեղի ունենում ռազմաքաղաքական ընտրախավում և հակառակը, որի արդյունքում քաղաքացիական և ռազմական ոլորտները կապվում են ընդհանուր գործնական և մարդասիրական շահերով, որն էլ դրական ազդեցություն է ունենում քաղաքացիական հասարակության և պետության փոխհարաբերության զարգացման վրա: Դրա հետ մեկտեղ, այդ սիեման իր մեջ պարունակում է նաև ռիսկեր, քանի որ թերի ժողովրդավարական համակարգի պայմաններում կարող է դիտարկվել կոռուպցիա, մասնավոր անհատների շահերի լոքինգ և այլն: Նման իրավիճակը հնարավոր է կանխել արդյունավետ քաղաքացիական վերահսկողության իրականացման միջոցով՝ թույլ չտալով պետությանը, իշխող ընտրախավին կայացնել որոշումներ, որոնք կվտանգեն ազգային անվտանգությունը: ԱՄՆ-ի ազգային անվտանգության ռազմավարությամբ առաջարկվում է իրականացնել անվտանգության

¹⁰³ Տե՛ս National security strategy of the United States. May 2010. Washington, DC, 2010
http://www.whitehouse.gov/sites/default/files/rss_viewer/national_security_strategy.pdf

¹⁰⁴ Տե՛ս Carothers T. “The Concept of Civil Society Is a Recent Invention”, p. 26
<http://www.carnegieendowment.org/pdf/CivilSociety.pdf>

համակարգի «թափանցիկ կառուցվածք», որպեսի հնարավոր լինի վերահսկողություն իրականացնել ԱՄՆ դաշնային բյուջեի և անվտանգությունն ապահովող պետական պաշտոնյաների գործունեության նկատմամբ: ԱՄՆ վերջին ռազմավարության նորմուծությունն այն է, որ վերջինս ուղղված է պետության և քաղաքացիական հասարակության համագործակցության տեխնոլոգիային՝ որպես ազգային անվտանգության ապահովման առավել արդյունավետ դերակատարի, բացի խոշոր պետական կառուցները: Հատուկ կարևորություն է տրվում անվտանգության արժեքային հիմքի ձևավորմանը, այդ թվում՝ անվտանգության մշակույթին:

ԵՄ անդամ Երկրների իշխանության կառուցներում նույնպես գործում են հատուկ օղակներ, որոնք զբաղվում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ կապերով, այդ ասպարեզում տարվող քաղաքականության համակարգմամբ: Օրինակ՝ Էստոնիայի ներքին գործերի նախարարության տարածաշրջանային հարցերի վարչությունը, որը պատասխանատու է քաղաքացիական հասարակության զարգացման համար¹⁰⁵:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցոյց է տալիս նաև, որ հաճախ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներն ընդգրկվում են կառավարությունների կազմում, ընտրվում պատգամավոր: Հասարակական կազմակերպությունների և իշխանության օղակների նման «փոխներթափանցվածությունը» նպաստում է արդյունավետ երկխոսությանն ու համագործակցությանը:

Ամփոփելով վերոնշալը՝ կարելի է ամրագրել, որ քաղաքական որոշումների մշակման և կայացման գործընթացում պետության քաղաքացիների մասնակցության, ինչպես նաև վերահսկողության իրականացման հնարավորությունը հանդիսանում է ժողովրդավարական քաղաքական համակարգի կարևորագույն չափանիշ, ինչն էլ միակ ճանապարհն է խուսափելու պետական ճգնաժամից, հասարակության կազմալուծումից և ժողովրդավարության կողծանումից: Այդ իրավիճակում շատ բան կախված է նաև նրանից, թե որքանով են աղեկված կերպով քաղաքացիական հասարակության ինստիտուտներն արտացոլում բնակչության պահանջմունքները և

¹⁰⁵ Տե՛ս Էստոնիայի Հանրապետության ներքին գործերի նախարարության պաշտոնական կայք, Այցելություն 14/01/2016, <https://valitsus.ee/ru>

համապատասխանում են արդյոք պետության շահերին երկրի անվտանգության շրջանակներում:

Այսպիսով, քաղաքացիական հասարակությունը միանշանակ ազդում է ինչպես առանձին անհատի, այնպես էլ ամբողջ պետության անվտանգության վրա: Ժամանակակից աշխարհում այն հանդիսանում է անվտանգության սուբյեկտ և իր շուրջը ձևավորում նոր սոցիալ-քաղաքական տարածություն՝ պաշտպանելով իր շահերն ու պահանջմունքները: Եթե պետության և քաղաքացիական հասարակության համագործակցությունը խախտված է և չունի հստակ իրավական մեխանիզմ, իսկ նրանց հակասությունը չի լուծվում ժողովրդավարական ինստիտուտների միջոցով, ապա իրավիճակը դուրս է գալիս իրավական դաշտի շրջանակներից, և ելք են հանդիսանում բռնի ակցիաները: Դրա հետ մեկտեղ, միջազգային փորձը ցույց է տալիս, որ քաղաքացիական հասարակության և պետության գործընկերային համագործակցության մոդելի և ժողովրդավարական մեխանիզմների մշակումը կարող են արդյունավետ լուծել ազգային անվտանգության խնդիրներն անհատների և քաղաքացիների տարբեր ձևերի ինքնակազմակերպվող համակարգի միջոցով:

Ազգային անվտանգության ապահովման գործում քաղաքացիական հասարակության գործառույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական հասարակությունն իրականացնում է կայունության, ինքնակարգավորման, վերահսկողական և այլ գործառույթներ, սակայն քաղաքացիական հասարակության գործառույթներն ազգային անվտանգության ապահովման հարցում դիտարկվում են հիմնականում պետության հետ այս կամ այն կերպ փոխկապվածության մեջ: Այսինքն՝ այդ գործառույթները պայմանավորված են քաղաքացիական հասարակության և պետական կառավարման մարմինների միջև հարաբերություններով, որոնք բազմավեկտորային են: Եվ այդ գործառույթների իրականացումը հնարավոր է զարգացած և կայացած քաղաքացիական հասարակության պայմաններում:

ԳԼՈՒԽ 2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ «ԱՇԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՆԵՐԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆ»

2.1 Քաղաքացիական հասարակության զարգացման առանձնահարկությունները Հայաստանում և ազդեցության հնարավորությունն ազգային անվտանգության վրա

Երկրի ներքին մարտահրավերների և սպառնալիքների հակազդմանն ուղղված կայուն երաշխիքների ձևավորման հարցում ծանրակշիռ դեր ունի քաղաքացիական հասարակությունը՝ վերահսկելով պետական կառավարման գործընթացը և ապահովելով բարեփոխումների իրականացման ընթացքի հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Այս համատեքստում կարելի է նաև փաստել, որ քաղաքացիական հասարակության զարգացումը սերտորեն կապված է երկրի անվտանգության ապահովման հետ, որն ամրագրված է « ազգային անվտանգության ռազմավարությամբ¹⁰⁶: Վերոնշյալ փաստաթղթում քաղաքացիական հասարակությանը վերաբերող դրույթները, այն է՝ քաղաքացիական հասարակության զարգացումը, որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացումը, կարևորվում են Հայաստանի ներքին անվտանգության ռազմավարության իրականացման տեսանկյունից՝ ապահովելով պետական կառավարման արդյունավետությունը:

Հայաստանում քաղաքացիական հասարակության՝ որպես ազգային անվտանգության ապահովման սուբյեկտի զարգացումն ու ներուժը պարզելու համար առաջարկում ենք նախ ուսումնասիրել Հայաստանում քաղաքացիական հասարակության ձևավորմանը և զարգացմանը նպաստող հասարակական-քաղաքական գործընթացները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և քաղաքացիական շարժումների¹⁰⁷ կարողություններն ու երկրի անվտանգության վրա ազդեցության հնարավորությունները:

¹⁰⁶ Տե՛ս « ազգային անվտանգության ռազմավարություն՝ հաստատված Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007թ. փետրվարի 7-ի թիվ ՆՀ-37-Ն հրամանագրով <http://www.mil.am/files/NATIONAL%20%20SECURITY%20STRATEGYarm.pdf>

¹⁰⁷ Քաղաքացիական հասարակության կազմակերպությունը ոչ պետական, շահույթ չհետապնդող և առևտրային շահ չներկայացնող իրավաբանական անձ է, որը հետապնդում է հանրային շահից բխող ընդհանուր նպատակ:

(Annex III specific provisions related to “Research for the benefit of specific groups”, Version 2, 01/12/2009, <http://ec.europa.eu/research/participants/data/ref/fp7/92973/annex3cso>)

Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության հիման վրա կարելի է առանձնացնել Հայաստանում քաղաքացիական հասարակության երեք հիմնական փուլեր:

Ժամանակակից հայաստանյան քաղաքացիական հասարակության հետքերը նշմարվում են ուշ 1980-ականներում, երբ, ըստ Ա. Իշխանյանի, «հայերը հավատում էին քաղաքացիական հասարակության իդեալներին և խորհրդային համակարգը ժողովրդավարացնելու հնարավորությանը: Այս իդեալիզմը հարյուր հազարավոր մարդկանց դուրս բերեց Երևանի փողոցներ... բազմաթիվ անտարբեր սովետական քաղաքացիներից կերտեց հասարակական և քաղաքական ակտիվիստների»¹⁰⁸: Այս երևոյթն սկսվեց 1988թ. Վերակառուցմամբ և մեկնարկեց Հայաստանի հասարակության ներսում հասարակական միավորումների ձևավորումը, որոնք կարևոր էին այդ տարիներին կառավարության քաղաքականության ինչպես մշակման, այնպես էլ դրա վրա ազդեցության տեսակետից: Օրինակ՝ 1989թ. շարքային քաղաքացիները կարողացան ազդել հանրային քաղաքականության վրա՝ մասնակցելով բնապահպանական շարժմանը, որի արդյունքում շրջակա միջավայրն աղտոտող մի քանի արդյունաբերական ձեռնարկություններ փակվեցին¹⁰⁹: Այսինքն՝ քաղաքացիները նախնառաջ սկսեցին հետաքրքրվել Էկոլոգիական անվտանգության հարցերով՝ մասնակցելով այդ ոլորտում իրականացվող քաղաքականությանը: Դրան հաջորդեց մի շարք արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության շղթայական դադարեցումը, այդ թվում ռազմական արդյունաբերական համալիրի, որոնք պարունակում էին գիտական հիմքի վրա ձևավորված հարուստ փորձ ու ժառանգություն: Եվ այս ամենը հանգեցրեց Հայաստանում տնտեսության անկմանը:

1991թ. քաղաքացիական հասարակությունն սկսեց արագորեն, բայց քառսային ձևով ինքնակազմակերպվել՝ առանց պետությունից կամ մասնավոր հատվածից որևէ

Քաղաքացիական նախաձեռնության տակ հասկանում ենք չգրանցված քաղաքացիական խմբերը և շարժումները, որոնք ձևավորվել են որպես հանրային շահը պաշտպանող կոլեկտիվ ջանք:

¹⁰⁸Տե՛ս՝ Իշխանյան Ա. «Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը և բնապահպանական ակտիվիզմը՝ Հայաստանում», «Սոցհոստկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոն հասարակական կազմակերպություն, 2013, էջ 19-20

¹⁰⁹ Տե՛ս՝ Մարգարյան Ա. «Քաղաքացիական հասարակության էվոլյուցիոն զարգացումը՝ Հայաստանում», Հանրային կառավարում գիտական հանդես, Երևան, 2013, էջ 75

<http://paara.am/wp-content/uploads/2012/04/HK-2013-1.pdf>

Էական աջակցություն ստանալու, ինչը կապված էր Երկրում տեղի ունեցող մի քանի զարգացումների հետ: Դրանք են՝ 1988-ի Երկրաշարժը, ինչը հանգեցրեց բարեգործական հիմնադրամների և միությունների ստեղծմանը, դարաբառյան շարժումը, որի շրջանակներում ստեղծվեցին հայրենակցական միություններ (օրինակ, 1993թ. ստեղծված «Երկրապահ Կամավորականների Միություն» հասարակական կազմակերպությունը¹¹⁰), անկախության համար մղվող պայքարը, որի համար ստեղծվեցին սոցիալական, քաղաքացիական և ազգային միավորումներ, ավելցուկային աշխատուժի կրճատումները, որի արդյունքում ստեղծվեցին արհեստակցական միություններ, և պետական անկախության ձեռքբերումը, որի արդյունքում հիմնվեցին նոր մշակութային, կրոնական, երիտասարդական և կանանց կազմակերպություններ¹¹¹:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս փուլում քաղաքացիական հասարակության զարգացման գործում կարևոր դերակատարություն է ունեցել սփյուռքը, քանի որ 1988թ. Երկրաշարժից և դարաբառյան պատերազմից հետո սփյուռքի շահագրգուվածությունն ու հետևողական մասնակցությունն սկսեց ընկալվել որպես նորանկախ պետությանը գլխավոր առաջ մղող գործոն: 1991թ. դրույթամբ՝ հայկական սփյուռքը սկսել էր ակտիվ դեր խաղալ Հայաստանում վերակառուցման և մարդասիրական տարատեսակ ծրագրերի իրականացման գործում:

Հատկանշական է այն, որ այս փուլում քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ստեղծվեցին տարերայնորեն՝ ի պատասխան հրատապ խնդիրների՝ առանց նախասահմանված առաքելությունների, ռազմավարական պլանների կամ կազմակերպական կառուցվածքի: Այս փուլում քաղաքացիական հասարակության տարբեր տեսակներն ունեին ֆինանսավորման հարուստ միջավայր, սակայն նրանց ունեցած ազդեցությունը համարժեք չէր ակնկալված արդյունքին: Դա պայմանավորված էր խորհրդային փորձի ժառանգության հանգամանքով: Ըստ

¹¹⁰ Միության հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝ աջակցել հայրենիքի բարգավաճման և հայ ժողովրդի անվտանգության ապահովման գործին, օժանդակել << զինված ուժերի հզորացմանը, դեռահասների ու երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությանը, նպաստել հաշմանդամ, զրիված և անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքների սոցիալական պայմանների բարելավմանը և այլն:

¹¹¹Տե՛ս «Մարդկային զարգացման գեկույց. մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում», Երևան, 1999, էջ 54-58

Հովարդի՝ պետության կողմից վերահսկվող կազմակերպություններում պարտադիր մասնակցությունը, ակտիվ մասնավոր ցանցերի զարգացումը և կենսունակությունը, ինչպես նաև կոմունիզմի անկումից ի վեր տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ խորը հիասթափությունը հետխորհրդային քաղաքացիների մեծ մասի մոտ առաջացրին հասարակական գործունեությունից օտարման տևական զգացում¹¹²:

Մեկ այլ գործոն է «հասարակական կազմակերպությունների» սոցիալ-հոգեբանական բեռը, ինչն իր ազդեցությունն է ունենում նման կազմակերպությունների նկատմամբ հանրային վստահության և նրանց ցուցաբերվող աջակցության վրա¹¹³: Իրավապաշտպան կազմակերպությունները մեղադրվում էին արտաքին շահերին ծառայելու և գումարի դիմաց «դրսի պատվերներ» կատարելու մեջ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ անկախ Հայաստանի քաղաքացիական հասարակության ձևավորման առաջին փուլն ընդգրկում է 1988 թվականից մինչև 1999 թվականն ընկած ժամանակահատվածը, որի ընթացքում մեծ ակտիվություն էին ցուցաբերում կանանց, էթնոմշակութային միությունները և որոշ բարեգործական կազմակերպություններ՝ ծնողազուրկ երեխաներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին և երկրաշարժից տուժած քաղաքացիներին օգնելու համար: Այս փուլում պետություն–քաղաքացիական հասարակություն փոխհարաբերությանը բնորոշ է «էտատիստական պատերնալիզմը» (պետության վերաբերմունքը ժողովրդի նկատմամբ՝ հայր-զավակ տարբերակով), երբ պետությունն իր գործառույթներն այնքանով է հանձնում քաղաքացիական հասարակությանը, որքանով նա պատրաստ է և պետության աջակցությամբ կարող է իր վրա վերցնել այդ գործառույթները: Այս համատեքստում կարելի է խոսել այն մասին, որ քաղաքացիական հասարակությունն իրականացնում էր անվտանգության ապահովման գործառույթ ինչպես լայն իմաստով՝ բավարարելով անհատների կենսականորեն կարևոր շահերն ու պահանջմունքները, այնպես էլ նեղ իմաստով, երբ կամավորական միությունները մասնակցում էին արցախյան պատերազմին: Քաղաքացիական հասարակությունն անվտանգության ոլորտում իրականացնում էր իր անդամների մորիլիզացման գործառույթը՝

¹¹² Տե՛ս Howard M. M. “The Weakness of Civil Society in Post-Communist Europe”, Cambridge University Press, 2002, p. 122

¹¹³ Տե՛ս «Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1997», Երևան, 1997, էջ 58

մասնակցելով անհատի և պետության անվտանգության հետ կապված հիմնախնդիրների լուծման գործընթացին:

Հայաստանում քաղաքացիական հասարակության ձևավորման ու զարգացման հաջորդ փուլին բնորոշ է հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ <Կ>) թվաքանակի աճը, երբ այդ կազմակերպությունները, ի տարբերություն նախորդ փուլի, ստեղծվում էին՝ ունենալով հստակ մշակված կանոնադրություն, կառուցվածք, առաքելություն և այլն: Այդ կազմակերպությունների անուններն էին նույնիսկ բնութագրում ժամանակի հասարակական, քաղաքական, սոցիալ-մշակութային և քաղաքացիական պահանջները: Օրինակ՝ «Եվրոպական ինտեգրացիա», «Կանանց ռեսուրս կենտրոն» և այլն: Այս փուլում <Կ> սեկտորն սկսեց հետ մղել դաշտում մինչ այդ գործող քաղաքացիական տարրերն ու դարձավ դոմինանտ տեսակ: Այսպես, եթե 1994թ. Հայաստանում գրանցված էր մոտ 44 <Կ>, ապա 2008թ. դրանց թիվը հասնում էր 4,500-ի¹¹⁴: Թերևս այս գործընթացում էր, որ քաղաքացիական հասարակությունն սկսեց հանգեցվել մասնագիտացված ծառայություն կամ շահերի պաշտպանություն իրականացնող <Կ>-ների, և դրանք սկսեցին ձևավորվել հասարակական հնչեղություն ունեցող որևէ խնդրի շուրջ, դարձան <<Հ>>-ում միջազգային կազմակերպության մասնաճյուղ կամ ստեղծվեցին ակտիվ քաղաքացիների նախաձեռնությամբ¹¹⁵: Սակայն այս փուլում <Կ>-ներն իրականացնում էին հիմնականում դոնորների կողմից նախանշված քաղաքականությունը և հազվադեպ էին միջնորդ հանդիսանում պետության և անհատի միջև: Միգուցե տվյալ <Կ>-ների կողմից իրականացվող ծրագրերն անողակիորեն կապված էին ազգային անվտանգության խնդիրների լուծման հետ, այնուամենայնիվ, պետության հետ թույլ երկխոսությունը բերում է պետության և քաղաքացիական հասարակության օտարման՝ հանգեցնելով լարվածության մեծացման: Մեկ այլ խնդիր է այն, որ <Կ>-ները քաղաքացիական հասարակության կարևոր, բայց ոչ միակ քաղադրիչն են: Այս փուլում քաղաքացիական հասարակության զարգացման վրա ազդող հիմնական գործոններից էր դեռևս

¹¹⁴Տե՛ս Ishkanian A. “From inclusion to exclusion: Armenian NGOs participation in the PRSP”, Journal of international development, 18 (5),, 2006, p. 729-740

¹¹⁵Տե՛ս Aslanyan S., Adibekyan A., Ajabyan N., Barbara A. C. “Civil Society in Armenia: From framework to reality”, An assessment of Armenian civil society (2003-2006), CIVICUS civil society index report for Armenia, Yerevan, 2006, p. 28-29

ինստիտուցիոնալ ընկալման գերիշխումը, և, մեծ հաշվով, ծրագրային լեզվի մակարդակում քաղաքացիական հասարակությունը հանգեցվում էր գործող ու ֆինանսավորվող ՀԿ-ներին, սակայն վերջին տարիների միտումն անցումն է քաղաքացիական հասարակության նոր ձևի, որտեղ սկսում է կարևորվել ոչ թե ինստիտուտը, այլ մարդկանց միավորումները և առցանց մեդիա-հարթակներում կազմակերպված նրանց գործողությունները:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս փուլի ընթացքում ևս քաղաքացիական հասարակության կողմից քաղաքականության վրա ազդելու նրանց կարողությունը եղել է սահմանափակ, քանի որ այդ հատվածի ձեռքբերումները հիմնականում գրանցվել են բնակչության մի փոքր հատվածի մասնակցությամբ ու աջակցությամբ, ինչպես նաև այդ կազմակերպությունները հիմնականում իրականացնում էին ծառայությունների մատուցման գործառույթ: Այսինքն՝ այս փուլը բնութագրվում է քաղաքացիների սոցիալական և քաղաքական ներգրավվածության ցածր մակարդակով, հատկապես ազգային անվտանգության հարցերի շուրջ: Դա պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Դրանցից մեկը ՀԿ-ների նկատմամբ հասարակության վստահության ցածր աստիճանն էր (2007 թ. Հայաստանի բնակչության միայն 18%-ն էր վստահում տեղական ՀԿ-ներին¹¹⁶), որի պատճառն այն էր, որ ՀԿ-ները հաճախ լրատվամիջոցներում ներկայացվում էին որպես առևտրային կազմակերպություններ, որոնք զբաղված են դրամաշնորհների սպառմամբ՝ առանց լայն հանրությանը որևէ իրական օգուտ ապահովելու: Սոցիալական և քաղաքական ցածր մասնակցության պատճառներից մեկն էլ հանրային ընկալումներն էին՝ կապված քաղաքացիների կողմից հասարակական-քաղաքական գործընթացների վրա ազդեցության հնարավորության հետ: 2004թ. տվյալներով¹¹⁷ հարցվածների 64%-ը կարծում էր, որ իրենց նման մարդիկ փոքր ազդեցություն ունեն կամ ընդհանրապես ազդեցություն չունեն Հայաստանում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացների վրա: Ավելին, հարցվածների 36%-ի կարծիքով՝ պետական պաշտոնյաների վրա ներգործելու որևէ եղանակ գոյություն չունի: Նույն գեկուցի

¹¹⁶Տե՛ս Գութբրոդ Հ. «Տվյալների հավաքագրման նախաձեռնություն - 2007»:

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՇԿ), Երևան, 2008

¹¹⁷Տե՛ս «Քաղաքացիաների իրազեկությունը և մասնակցությունը Հայաստանում» հարցում, IFES, 2004, էջ 23

համաձայն՝ հարցման ենթարկվածների 85.9%-ը երբեք բոյկոտի գործողությունների չեն մասնակցի, իսկ 70.7%-ը երբեք չի մասնակցի խաղաղ ցուցերի: Ամփոփելով՝ կարելի է ամրագրել, որ քաղաքական և սոցիալական ակտիվության ցածր մակարդակը գիտակցված ընտրություն է:

Հարկ է նաև նշել, որ հենց այս փուլում է (2001թ. դեկտեմբերի 4-ին) ԱԺ-ն ընդունել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը¹¹⁸, որտեղ սահմանվում է հասարակական կազմակերպություն հասկացությունը:

Վերոնշյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ այս փուլը ՀԿ-ների ակտիվացման շրջան է, այսինքն՝ քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալացման փուլ, երբ քաղաքացիական հասարակություն-պետություն համագործակցությունը բավականին թույլ է կամ բացակայում է, քանի որ ՀԿ-ները հիմնականում ծառայություններ էին մատուցում՝ ուղղված անհատի անվտանգության ապահովմանը: Օրինակ՝ հաշմանդամների, կանանց իրավունքների պաշտպանությունը: Այս փուլում քաղաքացիական հասարակության գործունեությունը դիտարկվում է հիմնականում ազգային անվտանգության լայն սահմանման համատեքստում:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս 2008թ. նախագահական ընտրությունները համարել քաղաքացիական հասարակության զարգացման երրորդ փուլի սկիզբը, երբ տեղի ունեցավ Հայաստանի նորագույն պատմության սոցիալ-քաղաքական հերթական ցնցումը: Այս ժամանակաշրջանում Հայաստանում քաղաքացիական հասարակության կողմից երկրի անվտանգության վրա ազդեցության հնարավորության վերաբերյալ անդրադարձ է կատարվել «Հայաստան-2009» զեկուցում, որտեղ նշվում է, որ իշխանության և ընդդիմության քայլերն այնպիսի տպավորություն էին ստեղծում, որ հասարակությանն ազդանշան ուղարկելու փոխարեն նրանք ազդանշաններ էին ուղարկում բացառապես միմյանց՝ հասարակությանը թողնելով դիտորդի կարգավիճակում¹¹⁹: Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացման ակտիվացման, դրանից բխող քաղաքացիական

¹¹⁸ Տե՛ս «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2001թ. դեկտեմբերի 4-ին, հոդ. 1, 3, Այցելություն 07/08/2014, <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1295>

¹¹⁹ Տե՛ս «Հայաստան 2009. խոստում և իրականություն» զեկուցյաց, «Սիվիլիթաս» հիմնադրամ, Երևան, 2009, էջ 47-49

շարժումների թվաքանակի աճի պատճառների հիմքում ընկած է այն, որ 2009թ. ընթացքում ներքաղաքական վիճակը տարբերվում էր անորոշության խորացմամբ, որը դրսևորվեց 2008թ. ընտրություններից հետո: Մի կողմից, քաղաքական տարածությունը խոստացավ առարկայական բանավեճերի դաշտ ստեղծել, որի արդյունքում հնարավորություն կստեղծվեր առավել հանգիստ պայմաններում կենտրոնանալ հիմնարար խնդիրների լուծման վրա, որոնք խորացել էին ներքաղաքական ճգնաժամի, խորը տնտեսական ճգնաժամի, ինչպես նաև արտաքին քաղաքական դաշտում անհանգստություն առաջացնող իրադարձությունների պատճառով՝ ազդելով երկրի ներքին կայունության վրա: Այս ամենը պահանջում էր հասարակական և քաղաքական ռեսուրսների համախմբման ճանապարհով արդյունավետ լուծումների մշակում և իրականացում: Սակայն, մյուս կողմից, 2009թ. այդ հնարավորությունը մնաց անիրականանալի, և քաղաքական խնդիրների նկատմամբ նոր մոտեցումներ չդրսևորվեցին: Արդյունքում այդ ժամանակաշրջանում, երբ իրավիճակը բավականին լարված էր և պետության համար բավականին դժվար շրջան էր, քաղաքացիական հասարակության ինստիտուտները պետական համակարգի նկատմամբ անտարբեր չմնացին: Զնավորվեցին տարբեր քաղաքացիական շարժումներ, ծավալվեցին քննարկումներ, ֆորումներ՝ նպաստելով սոցիալական կարգի հաստատմանն ու կայունացմանը և դրանով իսկ ազգային անվտանգության ամրապնդմանը:

Այդ ժամանակաշրջանում Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացման անհրաժեշտությունն ազգային անվտանգության տեսանկյունից ընդգծվել է Հայաստանում դիվանագիտական կառույցների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից: 2011թ. ԱՄՆ դեսպանը երիտասարդությանն ուղղված իր գեկույցում նշել է, որ ցանկացած պետության թիվ մեկ գերակայությունն իր քաղաքացիների անվտանգության ապահովումն է, սակայն երբ քաղաքացիները չեն հավատում, որ իրենց կառավարությունը ներկայացնում է իրենց շահերը, ապա չի կարող ապահովել իրական անվտանգություն, իսկ իրական անվտանգությունը սուսկ բոնության բացակայությունը չէ, այլ հնարավորությունների

առկայությունը մասնակցել քաղաքական գործընթացին¹²⁰: Քաղաքացիական հասարակության զարգացումն ու իրավասություններով օժտված լինելը ոչ միայն Հայաստանի ժողովրդավարության ու բարօրության առանցքն է, այլ նաև կենսական նշանակություն ունի երկրի ազգային անվտանգության համար:

2008թ. հետո Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացմանը, ինչպես նաև անվտանգության հարցերին քաղաքացիական հասարակության մասնակցությանը նոր որակ է հաղորդում «Արևելյան գործընկերության» Ազգային պլատֆորմի ձևավորումը,¹²¹ քանի որ «Արևելյան գործընկերություն» ծրագրի շրջանակներում ամենակարևոր շեշտադրումն այն է, որ «քաղաքացիական հասարակությունը կարող է դեր խաղալ հակամարտությունների կարգավորման հարցում խաղաղ գոյակցության սկզբունքի ամրապնդման միջոցով»¹²²: Սա նշանակում է, որ փորձ է արվում քաղաքացիական հասարակությանը ներգրավել ոչ միայն ներքին անվտանգության հիմնախնդիրների լուծմանը (մարդու իրավունքների պաշտպանություն, արդյունավետ կառավարում), այլ նաև ուշադրության կենտրոնում պահել Հայաստանի արտաքին անվտանգության առանցքային հարցեր՝ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) հակամարտության խաղաղ և արդար կարգավորման խնդիրը: Օտարարկոյա դիվանագետները հավատացած են, որ արցախյան հակամարտության կարգավորման գործընթացում հակամարտող երկրների քաղաքացիական հասարակությունները կարող են ազդել խնդրի խաղաղ հանգուցալուծմանը, որի մասին 2016թ. մայիսի 6-ին կայացած «Տարածաշրջանային անվտանգությունը և արցախյան հակամարտության կարգավորման հիմնախնդիրը» թեմայով միջազգային գիտաժողովի ընթացքում բարձրաձայնել է Հայաստանում 2009 - 2012թթ. Գերմանիայի Դաշնության դեսպան Հանս-Յոհան Շմիդթը՝ ասելով, որ կողմերը ոչ

¹²⁰ Տե՛ս Յովանովիչ Մ. «Կարևոր է ձևավորել կառավարություն, որը լսում է մարդկանց և հաշվետու է նրանց առջև», «Լրագիր» լրատվական գործակալության կայք, 28/02/2011, Այցելություն 02/02/2016 <http://www.lragir.am/index/arm/0/politics/53367/44679>

¹²¹ Տե՛ս Ավագյան Ս. «Քաղաքացիական ինստիտուտները կարող են միանալ Ազգային պլատֆորմի նախաձեռնությանը», «Հետք» լրատվական գործակալության կայք, 31/03/2010, Այցելություն 15/06/2014 <http://hetq.am/arm/news/43995/qaxaqaciakan-institutnery-karox-en-mianal-aazgayin-platformi-nakhadzernutyany.html>

¹²² Տե՛ս «Ռոմանեց ընդգծել է քաղաքացիական հասարակության մասնակցության կարևորությունը ՀՀ խնդրի կարգավորման հարցում», NEWS.am լրատվական-վերլուծական գործակալության կայք, 04/07/2012, Այցելություն 16/12/2015, <http://news.am/arm/news/112140.html>

միայն պետք է լրջորեն աշխատեն երկու երկրների շահերից բխող փոխգիշումային լրության հասնելու ուղղությամբ, այլ նաև կողմերի հասարակություններին պետք է պատրաստեն հնարավոր փոխգիշումներին, ինչը ենթադրում է քաղաքական ռիսկ: Այսինքն՝ քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը ռազմական անվտանգության ոլորտում որոշումների կայացման գործընթացում մեծապես կարևորվում է այս փուլում:

Այս փուլում լրամշակման է ենթարկվել նաև քաղաքացիական հասարակության իրավական դաշտը: << Սահմանադրությամբ ամրագրված է, որ «յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք, ինչպես նաև յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք»¹²³: Իսկ փոփոխված տարբերակում¹²⁴ վերոնշյալից զատ ընդգծվում է նաև այն, որ հավաքների և միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Փաստորեն, սահմանադրորեն լայն ազատություններ են տրվում քաղաքացիներին՝ արտահայտելու սեփական կամքը՝ միաժամանակ ընդգծելով նեղ իմաստով ազգային անվտանգության ապահովման առաջնայնությունը:

Արծարծվող թեմայի շրջանակներում էական է այն, որ քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացը բնորոշ է բոլոր հետխորհրդային երկրների համար, որի նկատմամբ պետական իշխանության արձագանքի ձևերից է համապատասխան հայեցակարգային փաստաթղթերի ընդունումը: Օրինակ՝ 2002թ. Էստոնիայում խորհրդարանի մակարդակով ընդունվեց Էստոնիայի քաղաքացիական հասարակության զարգացման հայեցակարգը: << կառավարության 2014թ. սեպտեմբերի 25-ի նիստի N 40 արձանագրային որոշման համաձայն՝ հաստատվեց «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման

¹²³ Տե՛ս <այսատանի Հանրապետության Սահմանադրություն՝ փոփոխված հանրաքվեով 27.11.2005, հոդ. 28, 29, Այցելություն 07/07/2014, <http://www.parliament.am/parliament.php?id=constitution&lang=eng>

¹²⁴ Տե՛ս <այսատանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություն՝ փոփոխված հանրաքվեով 06.12.2015, հոդ. 44, 45, Այցելություն 22/01/2016, <http://www.president.am/hy/constitution-2015/>

ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգ»-ը, որի մշակումն արդիական է Հայաստանի համար, քանի որ, չնայած Հայաստանում անկախության տարիների ընթացքում քաղաքացիական հասարակության հաստատությունների ձևավորման առումով բազմաթիվ քայլեր են իրականացվել և կան ձեռքբերումներ, սակայն քիչ չեն նաև լուծում պահանջող հիմնախնդիրները¹²⁵, օրինակ՝ քաղաքացիական գիտակցության զարգացման ու մասնակցության խթանման, հասարակական գործընթացների վրա ունեցած ազրեցության, որոշումների կայացմանը մասնակցության անհրաժեշտությունը: Առկա խնդիրների մի զգայի մասը պայմանավորված է ոլորտում իրակացվող քաղաքականության և գործողությունների միասնական հայեցակարգի ու ռազմավարության բացակայությամբ: Այս փաստաթղթի վերլուծությունը ցույց է տալիս, որ ուշադրությունից դուրս են մնացել ազգային անվտանգության ապահովման հարցում քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանն ուղղված դրույթները. քաղաքացիական հասարակության կազմակերպություններ – պետական իշխանության մարմիններ հարաբերությունների համակարգը, պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող քաղաքականության մշակման, որոշումների կայացման գործընթացներին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցության կառուցակարգերի բարելավման ու կատարելագործման հիմնահարցերը: Այսինքն՝ փաստաթղթում չի դիտարկվել ազգային անվտանգության ապահովմանն ուղղված քաղաքացիական հասարակության հիմնական գործառույթներից մեկը, որը կապված է պետության հետ կառուցողական համագործակցության հետ:

Օրենսդրական գործընթացքում քաղաքացիական հասարակության մասնակցության հնարավորության մասին է վկայում այն, որ 2011թ. քաղաքացիական հասարակության կազմակերպությունների օրենսդրության բարելավման նպատակով <<Կառավարության և Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությամբ համատեղ աշխատանքային խումբ է ստեղծվել¹²⁶: Սակայն հարկ է

¹²⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության հաստատությունների գարգացման ռազմավարության հայեցակարգ» նախագիծ, Այցելություն 10/10/2013

<http://www.publiccouncil.am/hy/documents/item/2012/10/22/program1/>

¹²⁶ Տե՛ս «2011թ. ՔՀԿ կայունության ցուցանիշՀայաստան», ԱՄՆ Միջազգային Զարգացման Գրասենյակ, 15-րդ խմբագրություն, 2012, էջ 3

նշել, որ այս օրենքում պետության և հասարակական կազմակերպությունների փոխհարաբերություններին վերաբերող միակ դրույթը սահմանում է, որ հասարակական կազմակերպությունները կարող են պայմանագրային կամ փոխադարձ համաձայնության այլ ձևերով ամբողջությամբ իրականացնել կամ մասնակցել պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալական, առողջապահական, կրթական, դաստիարակչական, մշակութային, մարզական և այլ հասարակական նշանակություն ունեցող ծրագրերի, այլ միջոցառումների: Այս դրույթը բավականին թույլ է արտահայտում երկրի քաղաքական որոշումների մշակման և կայացման գործընթացում պետության քաղաքացիների մասնակցության, ինչպես նաև վերահսկողության իրականացման հնարավորությունն ու մեխանիզմները, ինչը ժողովրդավարական քաղաքական համակարգի կարևորագույն չափանիշն է և թույլ է տալիս խուսափել պետական ճգնաժամից, հասարակության կազմալուծումից:

Քաղաքացիական հասարակության կայացման աստիճանը նախնառաջ բնութագրվում է կազմակերպությունների քանակով, բազմազանությամբ և կենսունակությամբ, ինչպես նաև երկրի քաղաքական և սոցիալական կյանքում նրանց ունեցած ազդեցությամբ: Այս առումով կարելի է նշել, որ 2015թ. ապրիլի 1-ի տվյալներով ՀՀ-ում գրանցված են 4188 հասարակական կազմակերպություններ, 1200-ից ավելի զանգվածային լրատվամիջոցներ, 932 հիմնադրամներ, իրավաբանական անձանց 212 միություններ¹²⁷: Չնայած դրան, ըստ փորձագետների, ներկայում քաղաքացիական հասարակության զարգացմանը խոչընդոտող մի շարք գործոններ կան, որոնցից է արտագաղթը և աղքատությունը¹²⁸: Արտագաղթը քաղաքացիական հասարակության զարգացման վրա բացասական ազդեցություն է ունենում այն տեսանկյունից, որ երկրից ցանկանում են հեռանալ միջին խավի ներկայացուցիչները, ովքեր ազգային անվտանգության ոլորտում իրականացնում են կայունության գործառույթ: Այդ մասին են վկայում երիտասարդների շրջանում իրականացված հարցումները՝ համաձայն

<http://www.cdpf.am/file/Armenia%206-20%20FORMATTED.pdf>

¹²⁷ Տե՛ս «ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գրանցած կազմակերպությունների վիճակագրությունը՝ 01.04.2015թ. դրությամբ, <http://www.justice.am/legal/view/article/784/>

¹²⁸ Հարցազրույց Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի տնօրեն, քաղաքագետ Ռիչարդ Կիրակոսյանի հետ

որոնց հարցված Երիտասարդների 78.5%-ը հնարավորության դեպքում տարբեր նպատակներով կմեկներ Հայաստանից, իսկ 36.8%-ը կմեկներ ընդմիշտ¹²⁹: Այսինքն՝ Երկրից հեռացողները կամ հեռանալ ցանկացողները կարող են լրացնել Հայաստանում ձևավորվող ակտիվ և ոչ անտարբեր Երիտասարդության շերտը: Միաժամանակ, պետք է նշել, որ այս գործընթացներում մեծ է նաև քաղաքացիական հասարակության դերը, բայց որպեսզի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների գործողություններն ավելի թիրախավորված, նպատակային և ազդեցիկ լինեն, անհարժեշտ է ունենալ ավելի բարձր իրավագիտակցություն, իրազեկել մարդկանց իրենց իրավունքների մասին և համագործակցել մամուլի հետ՝ ինստիտուցիոնալ փոփոխություններ իրականացնելու նպատակով¹³⁰:

Միաժամանակ, աղքատության բարձր մակարդակը, հասարակության մեջ անհանդուժողականության մթնոլորտի ձևավորումը նույնպես մարտահրավերներ են և խոչընդոտում են քաղաքացիական հասարակության զարգացմանը: Պաշտոնական տվյալները ցույց են տալիս (2014թ. աղքատության մակարդակը կազմել է 30%, այսինքն՝ Երկրի 10 բնակչից 3-ը ամսական վերին աղքատության գծից ցածր են գտնվել¹³¹), որ Երկրում շարունակվում են տեղ գտնել սոցիալական բևեռացումը, անհավասարությունը, աղքատությունը, որոնք լարվածություն են ձևավորում հասարակության մեջ: Եթե համարենք, որ սեփական սոցիալական կարգավիճակից բավարարվածության աստիճանն առանձնահատուկ ինդիկատոր է դիտարկվում հասարակության մեջ լատենտ սոցիալական լարվածության բացահայտման համար, ապա Հայաստանում և՝ արտագաղթի ծավալները, և՝ աղքատության մակարդակը թույլ են տալիս խոսել հասարակության մեջ առկա գաղտնի կոնֆլիկտային ներուժի մասին, որն աստիճանաբար կարող է ավելանալ և հասնելով գերլարվածության

¹²⁹ Տե՛ս «Երիտասարդների միգրացիան այս տարվա Երիտասարդության միջազգային օրվա թեման է. ասուլիս ՄԱԿ-ի գրասենյակում», ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ Հայաստանի պաշտոնական կայք, 12/07/2013, <http://unfpa.am/pr-iyd-2013>

¹³⁰ Տե՛ս «Հայաստանի բնակչության թվի անկումը. ճգնաժամի ակունքները և դրանց հաղթահարման ուղիները» գեկուց, Երևան, «Հրայր Մարուխյան» հիմնադրամ, 2013, էջ 66

http://www.depop.am/wp-content/uploads/2013/10/THE-DEPOPULATION-CRISIS-OF-ARMENIA_THE-KOOLIAN-FOUNDATION_ARM_Oct2013.pdf

¹³¹ Տե՛ս «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», (2014թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հիմնական արդյունքները) գեկուց, << ազգային վիճակագրական ծառայություն, 23/11/ 2015, <http://www.armstat.am/am/?nid=80&id=1716>

գագաթնակետին՝ առաջ բերել սոցիալական ցնցումներ՝ ապակայունացնելով հասարակական կյանքը և պետական համակարգը:

Ուսումնասիրության համաձայն՝ վերջին տարիներին նկատվում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կազմակերպչական կարողությունների որոշակի բարելավում, քանի որ նախորդ տարիների համեմատ՝ այդ կազմակերպություններն ավելի շատ են ուազմավարական ծրագրեր և գործողություններ մշակում ալանավորման կարևորությունը գիտակցելու շնորհիվ։ Բացի այդ, համացանցի հասանելիությունը հեռավոր մարզերում այդ կազմակերպություններին հնարավորություն է տալիս հաղորդակցության և կառավարման համար օգտվել Էլեկտրոնային գործիքներից¹³²։ Բարելավվել է նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև ոլորտային համագործակցությունը, ինչը նշանակում է, որ վերջիններս սկսել են ավելի ակտիվ համագործակցել՝ կիսելով իրենց փորձը և ռեսուրսները։ Քաղաքացիական հասարակության գործընկերության ցանցը, Քաղաքացիական հասարակության զարգացման ցանցը, ինչպես նաև Հանրային ցանցը հիմնադրվել են որպես փորձի, նոու-հասուի և ռեսուրսների փոխանակման արդյունավետ հարթակներ, ինչպես նաև մասնակցում են անդամ պետությունների համատեղ նախաձեռնություններին և համագործակցությանը։ Օրինակ՝ Սյունիքի ու Վայոց Զորի 18 կազմակերպություններ հիմնադրել են համայնքային զարգացման խնդիրներով զբաղվող ցանց¹³³։

Ինչ վերաբերվում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության թափանցիկությանն ու հաշվետվողականությանը, ապա նրանք անմիջապես դոնորներին են ներկայացնում իրենց ֆինանսական և գործունեության մասին գեկուցները։ Միաժամանակ, նրանց ֆինանսական և այլ գեկուցները կարող են տեղադրվել նաև www.azdarar.am պաշտոնական իրապարակումների կայքում, ինչը կիրառվում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների

¹³²Տե՛ս «2014թ. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունության ցուցանիշ-Հայաստան», ԱՄՆ Միջազգային Զարգացման Գրասենյակ, 2015

[http://www.cdpf.am/file/Armenia+%20\(2\).pdf](http://www.cdpf.am/file/Armenia+%20(2).pdf)

¹³³Տե՛ս «2011թ. ՔՀԿ կայունության ցուցանիշ-Հայաստան», ԱՄՆ Միջազգային Զարգացման Գրասենյակ, 2012, էջ 5, <http://www.cdpf.am/file/Armenia%206-20%20FORMATTED.pdf>

մեծամասնության՝ 69.2%-ի կողմից¹³⁴: Սակայն հիմնական խնդիրներից է այն, որ այդ կազմակերպությունները հաշվետվություն չեն ներկայացնում իրենց անմիջական շահառուներին կամ ներկայացնում են ոչ այնքան համապարփակ և ընդգրկուն:

Անդրադառնալով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության արդյունավետությանն ու ազդեցությանը՝ հարկ է նշել, որ վերջիններիս աշխատանքի արդյունավետությունը գնահատվում է տարբեր կերպ՝ հաշվի առնելով նրանց նախաձեռնողական և դիմադրողական գործունեությունը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների նախաձեռնողական գործողությունները դրական մեծ արդյունք չեն գրանցում՝ ի տարբերություն դիմադրողական գործողությունների, որոնք առավել արդյունավետ են կառավարության որոշումներին, գործողություններին արձագանքելու պարագայում: Նախաձեռնողական գործողությունների այլ տեսակի համար, ինչպիսին, օրինակ, մարդու իրավունքների կամ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներն են, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հիմնականում որևէ ազդեցություն չեն ունենում, այլ լրացնում են տեղեկատվության պակասը, հսկողություն են իրականացնում հիմնահարցերի նկատմամբ, բարձրացնում են խնդիրներ: Այս ձևաչափը կարող է նշանակել, որ նրանք ի վիճակի չեն քննադատող և աջակցող լինել միևնույն ժամանակ, քանի որ կառուցողական քննադատությունը, հիմնախնդիրների բացահայտումը ենթադրում է նաև լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում: Այսինքն՝ պետության հետ հարաբերություններում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են հաջողություններ արձանագրել, եթե զբաղվեն իրազեկվածության բարձրացմամբ, փաստերի մանրամասնորեն ուսումնասիրմամբ, համապատասխան փաստարկների զարգացմամբ՝ դառնալով ավելի կառուցողական: Իսկ կառավարությունն էլ իր հերթին մասնակցային գործընթացը պահպանում է ձևական մակարդակում, նկատելի է համագործակցության փորձի և մշակույթի պակաս կառավարության պաշտոնյաների հետ: Օրինակ՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն ուղղակիորեն ներգրավված

¹³⁴Տե՛ս «Քաղաքացիական հասարակությունը և համագործակցությունը պետական կառույցների հետ» խորհրդատվական փաստաթուղթ, ԵՄ խորհրդատվական խումբ Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2012, էջ 35

չին Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովում, որի պատճառներից էր համարվում այն, որ հիմնականում քաղաքացիական հասարակության ձայնը ներկայացնող կազմակերպությունների մոտ պակասում են մասնագիտական հմտություններ և միշտ չեն, որ իրավական դաշտի բոլոր ՀԿ-ները փորձագիտական գիտելիքներ ունեն սահմանադրական բարեփոխումների ոլորտում¹³⁵:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ֆինանսական կենսունակության հարցն անմիջական առնչություն ունի երկրի անվտանգության հետ, քանի որ ֆինանսավորման հիմնական աղբյուր են հանդիսանում միջազգային դոնորները: Ըստ հարցումների՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների 18.6%-ի եկամուտների միակ աղբյուրը արտաքին դոնորի ֆինանսավորումն է: Ավելին, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ևս 21.3%-ն իրենց բյուջեի մեծագույն մասը (60-90%) ապահովում է արտաքին ֆինանսավորման միջոցով¹³⁶: Միջազգային դոնորների կողմից ֆինանսավորումը կարող է դիտարկվել որպես Հայաստանում «փափուկ ուժի» կիրառման հնարավորություն, քանի որ հետխորհրդային տարածքում իշխանության զավթման նպատակով ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող արմատական հասարակական-քաղաքական երևույթների ուսումնասիրության ժամանակ առանձնացվում են ֆինանսական, կազմակերպական և գաղափարական աջակցությամբ ակտիվորեն հանդես եկող ինչպես քաղաքականապես հետաքրքրված երկրները, այնպես էլ քաղաքականապես հետաքրքրված միջազգային կառույցները: Չնայած ցանկացած երկիր ունի իր առանձնահատկությունները՝ այդուհանդերձ, երկրում հասարակական-քաղաքական ակտիվություն սկսելու նախապատրաստական հիմնական փուլը կապերի հաստատումն է այդ պետությունների հասարակական, երիտասարդական, ուսանողական կառույցների հետ: Ժ. Նայը հենց դրանով է պայմանավորում այն իրողությունը, որ ամերիկյան ռազմական հաստատությունները հաճախ ֆինանսավորում են տարբեր երկրներում բազմաթիվ հասարակական

¹³⁵Տե՛ս «Ի՞նչ է քաղաքացիական հասարակությունը ստանալու Սահմանադրական բարեփոխումներից», «Իրավաբան.net» լրատվական կայք, 15/04/2015, Այցելություն 16/04/2015

<http://iravaban.net/83649.html#ad-image-0>

¹³⁶«Քաղաքացիական հասարակությունը Հայաստանում. անցումային փուլից դեպի կայունություն», Վերլուծական գեկույց, CIVICUS Քաղաքացիական հասարակության ինդեքս, Երևան, 2010, էջ 44

կազմակերպությունների՝ դրանով իսկ կիրառելով «փափուկ ուժ» (soft power)¹³⁷: Ըստ նրա՝ վերջինս պայմանավորված է նրանով, որ «փափուկ ուժ»-ը բավականին արդյունավետ է գործում միջազգային ասպարեզում՝ ի տարբերություն իր կողմից առանձնացված մյուս երկու ուժերի՝ ռազմական հզորության և տնտեսական հաջողության¹³⁸: Ժ. Նայն առաջիններից էր, որ գիտականորեն հիմնավորեց և պրակտիկորեն շրջանառության մեջ դրեց «փափուկ ուժ»-ի հայեցակարգը, որում վերջինս սահմանում է որպես «մյուաների վրա ազդելու կարողություն՝ գրավչության և համոզելու միջոցով ցանկալի արդյունքի հասնելու համար»: Հետագայում նա ավելացրեց նաև «խելացի ուժ» (smart power) գաղափարը՝ սահմանելով որպես արդյունավետ իշխանության ռազմավարության մեջ կոշտ և փափուկ ուժերի ռեսուրսների միավորման կարողություն¹³⁹: Այս առումով ուշագրավ է 2004թ. հուլիսին ԱՄՆ նախագահ Ջ. Բուշի ելույթը, որում նա նշել է, որ USAID-ից հասարակական կազմակերպությունների միջոցով օգնություն ստացողները պետք է պատկերացում ունենան ամերիկյան գումարներով օգնության մասին և հասկանան, որ այդ օգնությունը հանդիսանում է ԱՄՆ արտաքին քաղաքականության մի մասը¹⁴⁰: Հայաստանում այս ոլորտում գլխավոր դերակատարներն են ԱՄՆ Միջազգային զարգացման գրասենյակը և զարգացման պետական այլ գործակալությունները, Կանադայի միջազգային զարգացման գործակալությունը, Նորվեգիայի և ԱՄՆ դեսպանատները, ինչպես նաև Եվրոպական Միությունը:

Ֆինանսավորման պակասը բարդություններ է ստեղծում նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար՝ պրոֆեսիոնալ անձնակազմ վարձելու և պահելու առումով, որի արդյունքում շատ կազմակերպություններ հույս են դնում կամավորների վրա, ովքեր կազմում են անձնակազմի 78.8%-ը¹⁴¹: Ներկայումս

¹³⁷ Տե՛ս Գալստյան Խ. “Мягкая сила” в действии: диалоговые площадки публичной дипломатии России”, «Սոյուզինֆո» տեղեկատվական-վերլուծական կայք, Այցելություն 29/05/2015

http://www.soyuzinfo.am/rus/analitics/detail.php?ELEMENT_ID=1035

¹³⁸ Տե՛ս Nye J. S. “Soft Power: The Means to Success in World Politics”, Public Affairs, New York, 2004, p. 5

¹³⁹ Տե՛ս S. Nye J. “The future of Power”, Public Affairs, New York, 2011, p. 23

¹⁴⁰ Տե՛ս Դինմոր Գ. “В США проведут реформу USAID”, «Ведомости» լրատվական գործակալություն, 13/12/2005, Այցելություն 15/05/2016

<http://www.vedomosti.ru/newspaper/articles/2005/12/13/dengi-razdast-gosdep>

¹⁴¹ Տե՛ս «Քաղաքացիական հասարակությունը Հայաստանում. անցումային փուլից դեպի կայունություն», Վերլուծական գեկույց, CIVICUS Քաղաքացիական հասարակության ինդեքս, Երևան, 2010, էջ 29

ավելի ու ավելի շատ կազմակերպություններ են գիտակցում իրենց ռեսուրսները բազմազանեցնելու անհրաժեշտությունը: Հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ֆինանսական կենսունակության խնդիրը երկար ժամանակ վերագրվել է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ու կառավարության միջև թույլ երկխոսությանը և համագործակցությանը, ինչը նվազագույնի է հասցնում պետական ֆինանսավորման հնարավորությունը: Հարցվողներից մեկի բնութագրմամբ՝ «քաղաքացիական հասարակության կազմակերպության համար պետական պաշտոնյան առնվազն կաշառակեր և օլիգարխ է, իսկ պետական ներկայացուցչի համար քաղաքացիական հասարակության կազմակերպությունը՝ առնվազն ոչ կոմպետենտ»: Չնայած դրան՝ պետական բյուջեից քաղաքացիական հասարակության կազմակերպություններին հատկացումներ արվում են: Այսպես, 2013-2014թթ. ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից ֆինանսավորվել է մոտ 65 հասարակական կազմակերպություն՝ ընդհանուր 164.060.274 ՀՀ դրամով, ինչը երկու անգամ ավելին է՝ 2010-2013թթ. համեմատ¹⁴²: Այս համատեքստում կարելի է արձանագրել, որ համագործակցությունը պետական մարմինների և շահույթ չհետապնդող կազմակերպությունների միջև Հայաստանում թևակոփել է զարգացման որակապես նոր փուլ, այսինքն՝ նկատելի է սոցիալական պատվիրակման երևոյթը, որն ապահովվում է պետական ֆինանսավորման և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներդրումների միջոցով:

Ամփոփելով կարելի է արձանագրել, որ Հայաստանում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից պետական մարմիններին տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնելու պրակտիկան¹⁴³ կապված է երկրի անվտանգության ապահովման խնդրի հետ, քանի որ քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ավելի շատ իրականացնում են իրենց սեփական կամ դոնորների օրակարգը, քան հանրային շահը, որն էլ կարող է հակասել

¹⁴² Տե՛ս «Պետական միջոցներից ՀԿ-ների ֆինանսավորման գործընթացը բարելավվել է», «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության պաշտոնական կայք, 21/05/2015, Այցելություն 29/10/2015, <http://www.foi.am/hy/articles/item/1460/>

¹⁴³ Հայաստանում հասարակական կազմակերպությունների հաշվետվողականության հարցը կարգավորվում է Հասարակական կազմակերպությունների մասին օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ ենթակետով:

Հայաստանի ազգային շահերին: Չնայած նրան, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մեծ մասը հրապարակում են իրենց գործունեության և ֆինանսական հաշվետվությունը, սակայն օրենքի նշված դրույթը մեծ տարածայնության տեղիք է տվել՝ որպես ավտորիտար քաղաքական վարչակարգ ունեցող երկրին բնորոշ: Այդ դրույթն առկա է Արևմտյան և Արևելյան Եվրոպայի երկրների օրենսդրությունում: Մամուլում տարեկան հաշվետվությունը հրապարակելու դրույթներ են ամրագրված Սլովակիայի «Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների մասին» օրենքի 34-րդ հոդվածով, Լատվիայի «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 21-րդ հոդվածով, Հունգարիայի «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 19-րդ հոդվածով, Բուլղարիայի «Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների մասին» օրենքի 40-րդ հոդվածով և այլն¹⁴⁴: Նույնիսկ որոշ երկրներում այդ կազմակերպությունները պարտավոր են հրապարակել ոչ թե իրենց կողմից կազմված, այլ առողջիւ ծառայության արդյունքները: Փաստորեն, ինչպես միջազգային պրակտիկայում, այնպես էլ Հայաստանում կիրառվող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմ է պետական կարգավորիչ համակարգը: Ըստ Էռլիքյան՝ այս մեխանիզմը կարևոր է երկու տեսանկյունից՝ երկրի անվտանգության ապահովման և ոլորտի նկատմամբ հանրային վստահության բարձրացման:

Այս համատեքստում մեկ այլ կարևոր հարց է այն, որ տարբեր օտարերկրյա ինստիտուտներ (կառավարություն, իմնադրամներ, կազմակերպություններ և այլն) տվյալ պետության քաղաքականության վրա ազդելու և հասարակական կարծիք ծնավորելու համար հավասարաչափ ֆինանսավորում են ինչպես քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, այպես էլ տվյալ երկրի կառավարությանը: Այսպես, 2013 թ. Հայաստանն արտաքին դոնորներից ստացել է 13.3 մլրդ դրամ կամ մոտ 32 մլն դոլար գերմանական KfW բանկից, Եվրամիությունից, EBRD-ից, USAID-ից և ԱՄՆ այլ կառույցներից, IFAD-ից, Ավստրիական զարգացման գործակալությունից:

¹⁴⁴Տե՛ս «Քաղաքացիական հասարակությունը և համագործակցությունը պետական կառույցների հետ» խորհրդատվական փաստաթուղթ, ԵՄ խորհրդատվական խումբ Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2012, էջ 16-17

Եվս 5.2 մլրդ դրամն ստացվել է Հայաստան-ԵՄ 2007-2010թթ. համատեղ գործողությունների ծրագրերի շրջանակներում անցկացվելիք միջոցառումների նպատակով¹⁴⁵: Վերոնշյալ տեղեկատվությունը թույլ է տալիս փաստել, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությունը չի կարելի սահմանափակել՝ իիմնավորելով, որ վերջիններս հանդիսանում են «փափոկ ուժի» կիրառման օբյեկտ, քանի որ ինչպես Հայաստանում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, այնպես էլ պետական կառավարման մարմինները ֆինանսական աջակցություն են ստանում գրեթե նույն դոնոր կազմակերպություններից: Այս առումով կարևոր դերակատարություն ունի պետությունը, որը քաղաքացիական հասարակության հետ մշտապես համագործակցության, ինչպես նաև նրանց հաշվետվությունների ուսումնասիրման միջոցով ուշադրության կենտրոնում կպահի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության ուղղությունները՝ բացահայտելու, կանխարգելելու կամ չեզոքացնելու Հայաստանի ազգային անվտանգությանն ուղղված վտանգներն ու մարտահրավերները:

2008թ. Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացման համար շրջադարձային էր նաև ակտիվորեն ձևավորվող և զարգացող քաղաքացիական շարժումների և նախաձեռնությունների առումով: Այդ շարժումները ձևավորվել են՝ սկսած 2008թ., մեծապես ընդլայնվել՝ 2011թ., և գործընթացը շարունակվում է այսօր: Ընդհանուր առմամբ՝ 2008թ. մինչև 2015թ. կազմակերպվել է մոտ 37 քաղաքացիական նախաձեռնություն, որոնք վերաբերել են հանրային ու մշակութային տարածքների պահպանությանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, բնապահպանական, մշակութային, քաղաքական և սոցիալական խնդիրներին, որոնք վերաբերում են ազգային անվտանգության տարբեր բաղադրիչներին:

Այս ալիքի համար բնութագրական է ներքևից ձևավորված շարժումների առաջացումն ու աճը, որոնք տեղում հայտնի են որպես «քաղաքացիական նախաձեռնություններ»: Այդ շարժումների առանձնահատկությունն այն է, որ ներքևից ձևավորված, կամավորական, անկուսակցական խմբեր են, որոնք համախմբվում են՝

¹⁴⁵ Տե՛ս «2013 թվականին Հայաստանն արտաքին դոնորներից ստացել է մոտ 32 մլն դոլար», «iLur.am» լրատվական կայք, 26/05/2014, Այցելություն 26/01/2016, <http://www.ilur.am/news/view/29938.html>

միասին առաջ քաշելու կոնկրետ հիմնախնդիր և բարձրացնելու հանրության իրազեկվածությունը դրա վերաբերյալ: Քաղաքացիական նախաձեռնությունների մեծամասնությունը կամ տեղակայված է Երևանում, կամ ներառում է Երևանաբնակ քաղաքացիների գործուն մասնակցությունը, իսկ տարիքային խումբը՝ 20-45, որոնց թվում առավել ակտիվ են մոտ 25-35 տարեկանները: Քաղաքացիական նախաձեռնությունների մեծամասնությունը բաղկացած է որոշակի խումբ կազմող ակտիվ քաղաքացիների միջուկից, որտեղ գոյություն ունի ոչ ֆորմալ առաջնորդություն առանց հիերարիխիայի, ինչը նշանակում է, որ կառուցվածքը հորիզոնական է, և որոշումների ընդունումը հիմնված է համաձայնության (consensus) վրա դեմ առ դեմ կամ ֆեյսբուքի փակ խմբերում ընթացող ըննարկումների միջոցով¹⁴⁶:

Հայաստանում քաղաքացիական նախաձեռնությունների ծևավորմանը նպաստող հիմնական գործոնների շարքում կարելի է առանձնացնել սերնդափոխությունը, նոր տեխնոլոգիաների օգրգացումը, գլոբալ միտումները և այլն: Սերնդափոխության հարցում կարևորվում է հետխորհրդային Հայաստանում ծևավորված նոր սերունդը, ով տարբեր ընկալումներ ունի պետության և քաղաքացիների հետ նրա փոխհարաբերության մասին, այսինքն՝ ձերբագատված է խորհրդային մարդուն բնորոշ կարծրատիպային մտածողությունից և վարքագծից: Պատճառների թվում նշվում է նաև սոցիալական մեղիայի ի հայտ գալը: Կարևոր է համարվում նաև 2011թ. աշխարհում և հետխորհրդային մի շարք երկրներում նկատվող քաղաքացիական նախաձեռնությունների ու սոցիալական շարժումների աշխատացումը: 2011թ. ամբողջ աշխարհում քաղաքացիական անհնազանդության, բողոքների և շարժումների գագաթնակետն էր, որոնք մղվում էին հանուն ժողովրդավարության և ընդդեմ խստացումների: 2011թ. խստացումների դեմ ուղղված գլոբալ շարժման (ինչպես, օրինակ, «Occupy Wall Street»-ը, «Indignados»-ը Իսպանիայում և այլն) և Արաբական գարնան՝ հանուն ժողովրդավարության շարժումների հետ միասին տեղի էր ունենում նաև քաղաքացիական ակտիվության աճ

¹⁴⁶ Տե՛ս Իշխանյան Ա. «Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը և բնապահպանական ակտիվիզմը Հայաստանում», «Սոցիոսոկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոն հասարակական կազմակերպություն, 2013, էջ 28-29

որոշ նախկին խորհրդային երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, Մոլդովայում, Ռուսաստանում, Վրաստանում և Ուկրաինայում¹⁴⁷:

Մեկ այլ կարևոր գործոն է համարվում այդ տարիներին ինտելեկտուալ տարբեր միջավայրերում աշխուժացած դիսկուրսները, որոնցում առանցքային թեմաներից են եղել Հայաստանում առկա քաղաքական ու քաղաքացիական հիմնախնդիրները: Դիսկուրսի շրջանակներում քննարկվել է նաև այն, որ հայ հասարակության վիճակն այնպիսին է, որտեղ բացակայում են հասարակական բարեկեցություն և սոցիալական արդարություն հասկացությունները՝ ստեղծելով տարբեր տիպի ցնցումների համար սնուցման միջավայր: Այստեղից էլ առաջ է եկել «քաղաքացիական հասարակության ձևավորման գիտելիքին տիրապետելու» խնդիրը:

Առաջին քաղաքացիական նախաձեռնությունը՝ «Փրկենք Թեղուտը», բնապահպանական է, այսինքն՝ զբաղվում են էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրներով, որն ունի մեծ հասարակական հնչեղություն¹⁴⁸: Քաղաքացիական նախաձեռնությունների պատմության մեջ թերևս շրջադարձային նշանակություն ունեցավ «Մաշտոցի պուրակի» պահպանման ուղղված շարժումը, որի կարևոր առանձնահատկություններից էր այն, որ վերջինս հասարակության որոշակի խավերում առաջացրեց հանրային շահի գիտակցում՝ համախմբելով տարբեր խավերի մարդկանց¹⁴⁹: Դրանով քաղաքացիական նախաձեռնությունը ոչ միայն իրականացնում է համախմբման գործառույթը, այլև ազդում է քաղաքացիական գիտակցության զարգացման վրա, հաստատում է սոցիալական համերաշխություն և համաձայնություն, ինչպես նաև քաղաքացիներին մոբիլիզացնում է՝ պայքարելու այնպիսի երևոյթների և գործընթացների դեմ, որոնք խանգարում են վերջիններիս ապահովմանը: Այս պարագայում քաղաքացիական նախաձեռնությունը ոչ միայն քաղաքացիների շահերն ու պահանջմունքներն արտահայտեց և միավորեց քաղաքացիներին, այլև լեգիտիմ միջոցներով պաշտպանեց երկրի քաղաքացիների իրավունքները պետական-

¹⁴⁷ Տե՛ս Իշխանյան Ա. «Քաղաքացիական նախաձեռնությունների զարգացումը Հայաստանում», «Diskurs.am» կայք, 24/01/2014, Այցելություն 02/02/2016, <http://diskurs.am/2014/01/210/>

¹⁴⁸ Տե՛ս «Վերլուծական. Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություն», Երևան, Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտ (ՄիԺԻ), 2012, Այցելություն 06/01/2016 <http://organize-now.am/am/?p=3476>

¹⁴⁹ Տե՛ս Թաղեսրսյան Ա. «Քաղաքացիական նախաձեռնությունները և նոր տեխնոլոգիաները Հայաստանում», Երևան, Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան, 2013, էջ 5-10

բյուրոկրատական ապարատի կամայականություններից՝ ստիպելով պետությանը հոգալ անհատի անվտանգության մասին:

Քաղաքացիական նախաձեռնությունների գործունեության վերլուծությունները թույլ են տալիս առանձնացնել քաղաքացիական նախաձեռնությունների ուժեղ և թույլ կողմերը, որոնք հնարավորություն են տալիս կամ սահմանափակում են նրանց գործունեությունն անվտանգային հարցրի շուրջ: Քաղաքացիական շարժումների ուժեղ կողմերից է այն, որ վերջիններս նպաստեցին քաղաքացիական կյանքում ռեֆլեքսիվ պրակտիկաների ձևավորմանն ու զարգացմանը¹⁵⁰: Հարկ է նշել, որ ինչպես քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, այնպես էլ քաղաքացիական հասարակության շարժումները հիմնականում եղել են դիմադրողական բնույթի, սակայն նկատելի են նաև խնդիրներ բարձրացնելու դրսնորումներ, ինչը տեղի ունեցավ հանրային տրասպորտի թանկացման դեմ ուղղված պայքարի ընթացքում: Մեկ այլ կարևոր ձեռքբերում է քաղաքացիական նախաձեռնությունների ազդեցությունը իշխանության ներկայացուցիչների հետ փոխհարաբերությունների ընդունված մշակույթի փոփոխության վրա:

Ինչ վերաբերվում է քաղաքացիական նախաձեռնությունների թույլ կողմերին, ապա կարելի է նշել, որ նրանց հիմնական ջանքերը կենտրոնացված են գործողությունների իրականացման վրա, ինչի արդյունքում թույլ է իրականացվում վերլուծությունը: Անվտանգության տեսանկյունից ուշագրավ է այն, որ քաղաքացիական նախաձեռնությունների մի մասն ունի ծայրահեղական բնույթ, որոնք ոչ թե փորձում են առաջարկ ներկայացնել կառավարությանը և հետո բանակցությունների ու փոխգիշումների եղանակով հասնել լուծումների, այլ հիմնականում առաջանում են որպես որոշումներին դիմակայելու նպատակով: Քաղաքացիական գրագետ պայքար իրականացնելու գիտելիքի ձեռք բերման անհրաժեշտություն է նկատվում, քանի որ դրա բացակայությունը բերում է քաղաքացիական ու քաղաքական բնույթի հարցադրումների հստակ ձևակերպման բացակայությանը: Իսկ ամենակարևոր

¹⁵⁰Տե՛ս Հովհաննիսյան Զ. «ՀՀ Աժ 2012թ. մայիսի 6-ի ընտրությունները և հետընտրական իրավիճակի մոդելավորման առանձնահատկությունները», Ամսագրային հոդվածների տարեգիրք, Թիվ 2, Երևան, 2012, էջ 25

խնդիրներից է ռեսուրսների սակավությունը, որի արդյունքում մշտապես նույն մարդիկ են հայտվում պայքարի կենտրոնում:

Քաղաքացիական շարժումների թույլ կողմերը հանգեցնում են այն բանին, որ սահմանափակվում է նրանց լայն ներգրավվածությունը ազգային անվտանգությանն առնչվող հարցերի քննարկմանը: Այդ մասին է վկայում 2015թ. հունիսին Երևանի Բաղրամյան պողոտայում էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ բողոքի ակցիաների հանգուցալուծումը, երբ << Նախագահը #ElectricYerevan անվանումն ստացած քաղաքացիական շարժման ներկայացուցիչներին առաջարկեց ներգրավվել էներգետիկ անվտանգության ոլորտում իրականացվող առողջարական, ինչպես նաև բարեփոխումների գործընթացում¹⁵¹, սակայն քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները չմասնակցեցին հետագա քննարկումներին՝ մեկնաբանելով, որ դա իրենց խնդիրը չէ¹⁵²: Այս իրադարձության վերլուծությունը թույլ է տալիս քաղաքացիական հասարակության ներկայիս փուլը որակել՝ որպես երկխոսության մշակույթի ձևավորման փուլ:

Եվ, չնայած քաղաքացիական նախաձեռնությունների գործունեությունը համակարգային փոփոխությունների միտված չէ, սակայն քաղաքացիական պրակտիկաների տարածումը կարող է նպաստել համակարգի պրակտիկաների փոփոխմանը՝ ձևավորելով իշխանության հետ փոխհարաբերությունների մարտավարությունները: Արդյունքում ստեղծված համագործակցության, երկխոսության, համաձայնողական խորհրդատվությունների միջոցով քաղաքացիական հասարակությունը կարող է ապահովել ամբողջ սոցիալական համակարգի ներքին հավասարակշռությանը: Այսինքն՝ պետությունն ու անձը, որոնք ի սկզբանե թվում են անհամատեղելի սոցիալական միավորներ, զարգացած քաղաքացիական հասարակության պայմաններում դառնում են մեկ արժեքավոր մեծություն՝ նպաստելով ազգային անվտանգության համակարգի ամրապնդմանը:

¹⁵¹ Տե՛ս «Նախագահը խորհրդակցություն է անցկացրել հանրապետության տնտեսական քաղաքականության պատասխանատունների հետ», << Նախագահի պաշտոնական կայք, 27/06/2015, Այցելություն 19/12/2015

<http://www.president.am/hy/press-release/item/2015/06/27/President-Serzh-Sargsyan-meeting-with-economic-block/>

¹⁵² Տե՛ս «Ոչ թալանին» նախաձեռնության մամուլի ասուլիսը, 13/07/2015, Այցելություն 10/01/2016
<https://www.youtube.com/watch?v=sQj63N7k6fk>

Քաղաքացիական հասարակության զարգացման տեմպերն ու միտումները, ինչպես նաև ազդեցության հնարավորությունները տեղ են գտել Երկրի ղեկավարության դիսկուրսում: Այսպես, << Վարչապետը 2013թ. հուլիսի 25-ին կայացած կառավարության նիստում նշել է. «...Մենք տեսնում ենք, որ Հայաստանում ձևավորվում է ուժեղ քաղաքացիական հասարակություն, և մենք պարտավոր ենք հաշվի առնել այս իրողությունը պետական որոշումներ կայացնելիս և պետք է շատ ուշադիր լինենք քաղաքացիական հասարակության ձևավորման բոլոր խնդիրների նկատմամբ»¹⁵³:

Ուսումնասիրության հիման վրա կարելի է եզրակացնել, որ այս փուլում քաղաքացիական հասարակության կազմակերպություններն աչքի են ընկնում կարողությունների զարգացմամբ, սակայն դեռևս թույլ են Երկրի անվտանգության հարցերում նախաձեռնողական քայլեր իրականացնելու առումով: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և նախաձեռնությունները հիմնականում դիմադրողական բնույթի են և Երկուակի դեպքում էլ բացակայում է առաջարկներ ներկայացնելու հնարավորութունը: Սակայն հարկ է նշել, որ այս փուլում ձևավորվում են պետություն-քաղաքացիական հասարակություն Երկխոսության մշակույթը և մեխանիզմները՝ ուղղված ազգային անվտանգության տարբեր ասպեկտների խնդիրների լուծմանը: Հատկանշական է, որ քաղաքացիական հասարակությունը փորձում է ապահովել ազգային անվտանգությունը լայն և նեղ ըմբռնումների համաձայն:

Ամփոփելով Երեք փուլերի ուսումնասիրությունը՝ կարելի է եզրակացնել, որ յուրաքանչյուր փուլում քաղաքացիական հասարակության զարգացումն ունի իր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են որոշակի գործոններով, սակայն կան նաև օրինաչափություններ: Այսպես, բոլոր փուլերում կան խնդիրներ, որոնք մշտապես գտնվում են ուշադրության կենտրոնում, ինչպիսին, օրինակ, Էկոլոգիական անվտանգության հարցերն են: Ավելին, աշխատանքի շրջանակներում ուշադրության է արժանի այն, որ առաջին և երրորդ փուլերում կարևորվում է

¹⁵³ Տե՛ս «Մենք տեսնում ենք, որ Հայաստանում ձևավորվում է ուժեղ քաղաքացիական հասարակություն», << Վարչապետ Տիգրան Սարգսյանի ներածական խոսքը << կառավարության նիստում, << Կառավարության պաշտոնական կայք, 25/07/2013, Այցելություն 02/09/2013 <http://gov.am/am/news/item/10574/>

քաղաքացիական հասարակության մասնակցությունը ռազմական անվտանգության ապահովման գործընթացին: Քաղաքացիական հասարակության զարգացման դինամիկան ցույց է տալիս, որ պետություն - քաղաքացիական հասարակություն փոխհարաբերություններում երկխոսության և համագործակցության մշակույթի ձևավորման և զարգացման միտում կա:

2.2 Սոցիալական մերիայի դերը Հայասպանի քաղաքացիական հասարակության զարգացման գործում ազգային անվտանգության ապահովման համարեքսպում

Քաղաքացիական հասարակության իրավիճակի գնահատականի որոշակի լրացում կարող է համարվել քաղաքացիական հասարակության տրամադրությունն ակտիվութեն արտացոլող, ինչպես նաև դրա վրա նշանակալի ազդեցություն ունեցող այնպիսի կարևոր բաղադրիչը, ինչպիսին զանգվածային լրատվության միջոցն է (այսուհետ՝ ԶԼՄ): Այդ առումով հետաքրքրություն են ներկայացնում “IREX” միջազգային կազմակերպության կողմից իրականցվող «Զանգվածային լրատվության միջոցների կայունության ինդեքս» ամենամյա հետազոտության արդյունքները: Տվյալ կազմակերպության փորձագետների եզրահանգմամբ՝ Հայաստանը 2011թ. զանգվածային լրատվության միջոցների զարգացման համար ամենանպաստավոր միջավայրն էր Կովկասյան և Կենտրոնական Ասիայի երկրների շրջանում: Հետազոտության մեջ չափազանց բացասական էր այն թեզը, որ Հայաստանում ԶԼՄ-ները, ինչպես նաև կինոարտիստները, հեռու են չորրորդ իշխանության դերից և նման դիրք են գրավում ոչ թե այն բանի համար, որ ԶԼՄ-ներն ազդեցություն չունեն հասարակական կարծիքի վրա, այլ պատճառն այն է, որ հասարակական կարծիքը դեռևս նշանակալի ազդեցություն չունի քաղաքական գործընթացների վրա: Իսկ 2015թ. գեկուցի համաձայն՝ մամուլի ազատությունը հետընթաց է ապրել բոլոր հինգ մայրցամաքներում՝ պայմանավորված պատերազմներով, ցույցերի ժամանակ բռնություններով և տնտեսական ճգնաժամային իրավիճակներով¹⁵⁴:

¹⁵⁴ Տե՛ս Media Sustainability Index (MSI), Այցելություն 03/02/2016
<https://www.irex.org/sites/default/files/2015-msi-armenia.pdf>

Հարկ է նշել, որ վերջին տարիներին Հայաստանի ԶԼՄ դաշտում կարևոր գործոն դարձան առցանց լրատվամիջոցները: Այժմ դրանք էլ ավելի նպաստավոր իրավիճակում են՝ պայմանավորված համացանցից օգտվողների թվաքանակի մեծացմամբ: Տեղեկատվական անվտանգության փորձագետ Ս. Մարտիրոսյանի տվյալներով՝ 2015թ. Հայաստանում համացանցից օգտվողների թիվը հասել է 60%-ի՝ հաշվարկված 14 և բարձր տարիքի մարդկանց շրջանում¹⁵⁵: Դեռևս 2012թ. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ) «Կովկասյան բարոմետր» ծրագրի¹⁵⁶ շրջանակներում իրականացված հարցումների տվյալներով՝ Հայաստանում հետազոտված տնային տնտեսությունների շուրջ 40%-ն ունի համացանցի հասանելիություն: Համացանցից լայն իմաստով տեղեկատվություն է որոնում օգտվողների 44,3%-ը (ընդհանուր հարցվողների 19,5%-ը), համացանցային սոցիալական ցանցերից օգտվում է 50,0%-ը (ընդհանուր հարցվողների 22%-ը), կարդում-դիտում է լրատվություն 25,4%-ը: Սոցիալ-քաղաքական տեղեկատվություն ստանալու աղբյուրների շուրջ մի փոքր այլ տեսանկյունով 2010, 2012 և 2013թթ. ուսումնասիրություն իրականացրած IPSC կազմակերպության տվյալների համաձայն¹⁵⁷՝ 2013թ. հունվարի դրությամբ սոցիալ-քաղաքական տեղեկատվություն հասարակության 91%-ը ստանում է հեռուստատեսությունից, 37%-ը՝ համացանցից, 14%-ը տպագիր մամուլից և 12%-ը՝ ռադիոյից: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ, չնայած հասարակության համար տեղեկատվության ստացման հիմնական աղբյուրը հեռուստատեսությունն է, 2010թ. համեմատ ամենանշանակալի փոփոխությունը տեղի է ունեցել համացանցի՝ որպես աճող լսարան ունեցող աղբյուրի հետ, ինչպես նաև նկատելիորեն նվազել է տպագիր մամուլի լսարանը:

Հետխորհրդային տարածությունում ակտիվություն ցուցաբերող «Բաց հասարակություններ» հիմնադրամի փորձագետները նշում են, որ եթե Հայաստանում

¹⁵⁵ Մարտիրոսյան Ս. «Վերջին 10 տարում ՀՀ-ում համացանցից օգտվողների թիվը ավելացել է 55%-ով», «Թերթ Եյ Էմ» լրատվական կայք, 18/01/2016, Այցելություն 15/01/2016,
<http://www.tert.am/am/news/2016/01/18/samvel-martirosyan/1902302>

¹⁵⁶ Տե՛ս «Հարավկովկասյան երկրներում քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացումների հանրային ընկալումը», Երևան, ՀՌԿԿ-Հայաստան, 2013
<http://www.crrc.am/caucasusbarometer/documentation?lang=hy>

¹⁵⁷ Տե՛ս «Հարցում. պատկերը Հայաստանում նախագահական ընտրություններից առաջ», Երևան, «Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, 2013
<http://www.eufoa.org/uploads/POLL20130125AM.pdf>

շարունակվի համացանցի տարածման ներկայիս տեմպը, ապա երկիրը կհայտնվի մի իրավիճակում, որտեղ մարդիկ, իրենց համակարգիչների դիմաց նստած, կարող են փոփոխությունների նախաձեռնող լինել պետության ներսում:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները Հայաստանում որպես միակ անկախ և ազատ լրատվության տեսակ համարում են համացանցային ՀՀՄ-ները, ինչն արտացոլում են նաև Կովկասի ինստիտուտ կազմակերպության կողմից իրականացված հետազոտության արդյունքները՝ համաձայն որոնց առցանց լրատվամիջոցը համարվում է ոչ միայն ամենաանկախը և չեզոքը, այլև լավագույնն իր օպերատիվությամբ: Քաղաքացիական հասարակությունը չի վստահում տպագիր մամուլին և այն գնահատում է ընդամենը որպես տեղեկատվության ստացման աղբյուր, որը կարելի է համեմատել այլ աղբյուրներից ստացածների հետ եզրակացություններ անելու համար¹⁵⁸:

Հատկանշական է, որ արդի պայմաններում համացանցը դարձել է տեղեկատվաքարոզական հիմնական միջոցը՝ զգայի առավելություններ ունենալով ավանդական լրատվամիջոցների համեմատ: Նախ՝ եթե ավանդական լրատվամիջոցներն առանձնանում են իրենց ներ ուղղվածությամբ (ռադիոն՝ ձայնային ներազմամբ, մամուլ՝ տեքստային և մասամբ պատկերային տեղեկատվությամբ, հեռուստատեսությունը՝ պատկերային և առլիոձայնային միջոցներով), ապա համացանցում ներկայացված է միջոցների բոլոր տեսակներով մատուցվող տեղեկատվություն՝ պատկերային, տեքստային և ձայնային, որոնք համակցված են տարբեր համաչափությամբ: Համացանցում հնարավոր է շփում հաստատել աշխարհի ցանկացած կետում գտնվող ինտերնետ-օգտատերերի հետ, մեծ արագությամբ տարածել ցանկացած տեղեկատվություն մեծաթիվ լսարանների համար, անմիջապես տեղադրել սեփական նախաձեռնությամբ պատրաստված տեղեկատվությունը (օրինակ՝ բջջային հեռախոսով նկարահանված սյուժեն) և դրա շուրջ քննարկում ծավալել¹⁵⁹:

¹⁵⁸Տե՛ս Գյուլխանդանյան Է., Խոկանդարյան Ն. «Հանգվածային լրատվության դաշտը և ՀՀՄ-ի հանդեպ վերաբերմունքը Հայաստանում», Կովկասի ինստիտուտի հետազոտական գրառումներ, N1, Երևան, 2010, էջ 7-8

¹⁵⁹Տե՛ս Աթանեսյան Ա. «Համացանցը որպես ԼՂՀ ազգային անվտանգության տեղեկատվական պաշտպանության հարթակ», «21-րդ ԴԱՐ», թիվ 6 (52), Երևան, 2013, էջ 47, 45-61

Առանձնացվում է նաև բլոգների ոլորտը՝ որպես տեղեկության ստացման վստահելի աղյուր, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ ՀՀ-ներն ի վիճակի չեն տալու իրադարձություններին արագ արձագանք և հասարակությանը արագ տեղեկացնելու, թե ինչ իրադարձություններ տեղի ունեցան: Իր բնույթով բլոգը ցանկացած քաղաքացու հնարավորություն է տալիս ազատորեն և առանց խոչընդոտների կատարելու որևէ իրադարձության շուրջ գրառում կամ մասնակցելու նմանատիպ քննարկումներին: Բլոգները հնարավորություն են տալիս տարածելու նաև չստուգված տեղեկատվություն, ինչի արդյունքում առավել արագ է ներկայացվում տեղեկատվությունն իրադարձությունների մասին, իսկ ավանդական ՀՀ-ներին հարկավոր է ժամանակ որևէ կարևոր իրադարձության հավաստիությունն ստուգելու և իրապարակելու համար: Միաժամանակ, բլոգները շատ արագ թարմացվում են մեկնաբանությունների շնորհիվ, և որևէ իրադարձության մասին նորությունն անմիջապես հայտնվում է բոլորի ուշադրության կենտրոնում և արժանանում քննարկումների:

Այսպիսով, Հայաստանում կարելի է սպասել համացանցային լրատվամիջոցների լսարանի աճի՝ հեռուստատեսության որոշակի կայունության պահպանմամբ և դրա դերի փոխակերպմամբ, իսկ տպագիր մամուլը հետզհետե նվազում է: Համացանցի ներկայիս զարգացումը հանգեցրել է այն բանին, որ այլընտրանքային լրատվամիջոցներն սկսել են ինչպես մրցակցել, այնպես էլ լրացնել ավանդական ՀՀ-ներին: Վերջին տարիների գլոբալ փորձը ցույց է տալիս, որ քաղաքացիական կամ մասնակցային լրագրությունը որոշակի իրավիճակներում շատ ավելի արդյունավետ են, քան ավանդական լրատվամիջոցները: Արդյունքում ավանդական ՀՀ-ն փորձում է հնարավորինս ավելացնել իր ներկայությունը սոցիալական մեդիայում (սոցիալական մեդիան իր մեջ ներառում է սոցիալական ցանցերը, բլոգային ծառայությունները (բլոգինգ), միկրոբլոգային ծառայությունները, ինֆորմացիայի փոխանակման սոցիալական համակարգերը և այլն)¹⁶⁰՝ դառնալով տեղեկատվության հավաստի աղյուր տեղեկատվական այդ միջավայրում¹⁶⁰:

¹⁶⁰ Տե՛ս Մարտիրոսյան Ս. «Այլընտրանքային և ավանդական մեդիան Հայաստանում», «Նորավանք» ԳԿՀ կայք, 02/12/2010, Այցելություն 03/02/2016
http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5182

Սակայն հարկ է նշել, որ համացանցային գործիքների, այդ թվում՝ սոցիալական մեդիայի կիրառմամբ առավել արագ և արդյունավետ կարող են կազմակերպվել ինչպես խաղաղ հանրահավաքներ, այնպես էլ բողոքի ակցիաներ, որոնք կարող են հանգեցնել անկարգությունների, հեղափոխությունների՝ սպառնալով երկրի անվտանգությանը: Այսպես, իրադարձությունների ակտիվացման պարագայում, երբ ներկա են բլոգերներ կամ համացանցային սոցիալական ցանցերից օգտվողներ, որոնք տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկացնում են առցանց ռեժիմում, իրավիճակը հանգեցնում է մեկ ուղղությամբ տեղեկատվության կտրուկ ավելացման: Այսինքն՝ սոցիալական ցանցերի միջոցով հնարավոր է միաժամանակ տեղեկատվություն փոխանցել հարյուր հազարավոր մասնակիցների, մտքեր փոխանակել և արդիական թեմաներ քննարկել (նաև՝ թեմաներն արդիականացնել ցանցում դրանց լայն տարածման և քննարկման միջոցով), ինչպես նաև, օրինակ, զանգվածային միջոցառումներ, այդ թվում՝ ցույցեր և հանրահավաքներ կազմակերպել¹⁶¹: Օրինակ՝ Թունիսում, ըստ փորձագետների, հեղափոխության իրականացման գործընթացում օգտագործվել են նորարար տեխնոլոգիաներ և նոր մարտավարություն, ինչպես Ֆեյսբուք, Թվիթեր ցանցերը, SMS հաղորդագրությունները հանրահավաքներ կազմակերպելու համար, այն դեպքում, երբ համացանցից օգտվողները կազմում էին բնակչության 10%-ը, որոնք հիմնականում երիտասարդներն էին:

Իրանական իրադարձություններն այս առումով ևս շրջադարձային էին: Իշխանությունների և ընդդիմության հակամարտությունը երկու կողմերի համար դարձել էր ճակատամարտ տեղեկատվական դաշտի համար: Իրանական իրադարձությունների տեղեկատվական առավել լուրջ բաղադրիչն էին Թվիթերը¹⁶² և Ֆեյսբուքը¹⁶³: Սկզբում այս սոցիալական ցանցերն օգտագործվում էին երկրի ներսում տեղեկատվության օպերատիվ փոխանցման, ակտիվիստներին ներգրավելու, հանրահավաքներ և բողոքի ակցիաներ կազմակերպելու համար: Բայց կապված այն

¹⁶¹Տե՛ս Աթանեսյան Ա. «Համացանցը որպես ԼՂՀ ազգային անվտանգության տեղեկատվական պաշտպանության հարթակ», «21-րդ ԴԱՐ», թիվ 6 (52), Երևան, 2013, էջ 56

¹⁶²Տե՛ս Թվիթեր – անվճար սոցիալական ցանց. միկրոբլոգերի համակարգ է, որն օգտվողներին թույլ է տալիս կարճ տեքստային նշումներ (մինչև 140 նիշ) ուղարկել:

¹⁶³Տե՛ս Ֆեյսբուք – հանրահայտ սոցիալական ցանցի վեբ-կայք, որն սկսեց աշխատել 2004թ. :

բանի հետ, որ ընտրություններից հետո առաջին իսկ օրերին իշխանություններն սկսեցին սահմանափակել արտասահմանյան ՀՀՄ գործունեությունն այնտեղ, ուր բախումներ էին տեղի ունենում, սոցիալական ցանցերը դարձան վերջին նորությունների աղբյուր և դրանց փոխանցման միջոց: Մամովի նկատմամբ կիրառվող արգելքներն ստիպեցին ընդդիմությանը շրջանցող ուղիներ փնտրել և գործի դրվեցին մոբիլ սարքերը. դա դարձել էր գլխավոր տեղեկատվական գենքը¹⁶⁴:

Սոցիալական մերիայի հասարակական-քաղաքական հնարավոր ազդեցությունը նկատելի է նաև 2009թ. Քիշնում տեղի ունեցած ապրիլյան իրադարձությունների օրինակում: “The New York Times” թերթի տվյալների համաձայն՝ մասսայական բողոքի ակցիաների կազմակերպիչներից մեկը հայտարարել է, որ «փողոց դուրս գալու համար կարողացել ենք մոբիլիզացնել 15000 մարդու՝ ունենալով զինանոցում 6 մարդ, 10 րոպե՝ ուղեղների գրոհի համար, ինչպես նաև մի քանի ժամ՝ սոցիալական ցանցերով, բլոգերով, էլեկտրոնային հասցեներով և sms-ներով տեղեկատվությունը տարածելու համար»: ԶՀՄ-ներում այդ գործընթացն ստացել է ցանցային մոբիլիզացիա անվանումը:

2011թ. հունվարի 25-ին Եգիպտոսում սկսված մասսայական բողոքի ակցիան ևս այս տեսանկյունից արդիական է: Փողոցներում հիմնականում երիտասարդներն ու ուսանողներն էին, որոնք իրենց հայտարարություններում նշել են, որ չեն ունեցել ո՛չ մեկ միասնական կենտրոն, ո՛չ էլ աջակցություն ընդդիմադիր դաշտից: Այստեղ ևս ի հայտ է եկել դժգոհների մոբիլիզացման նոր գործիք՝ Թվիթերը և Ֆեյսբուքը, այն դեպքում, երբ Եգիպտոսի 80 մլն բնակչությունից միայն 19 մլն մարդ կարող է միանալ ցանցին, իսկ 26 մլն. մարդ՝ օգտվել մոբիլ կապից:

Համացանցային սոցիալական ցանցերը, ինչպիսին Ֆեյսբուքը և Թվիթերն են, ինչպես նաև բջջային հեռախոսները արաբական հեղափոխությունների ժամանակ գերազանց տեխնիկական աջակցություն են ցուցաբերել լայն շրջանակներում անվտանգային հարցերի դիսկուլսի կառուցման և կուտակման հարցում¹⁶⁵:

¹⁶⁴ Մարտիրոսյան Ս. «Իրան. այլընտրանքային հաղորդակցություններ», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կայք, 03/08/2009, Այցելություն 11/04/2012

http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2211

¹⁶⁵ Ste'v Atanesyan A. «Human Security Issues in the Context of the Current Social Movements in the Arab World», Bulletin of Yerevan State University, Sociology and Economics Series, N 134.5, 2011, p. 29,

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է նշել, որ սոցիալական մեղիան ոչ միայն հնարավորություն է տալիս հանրությանն օպերատիվ տեղեկանալ երկրում տեղի ունեցող հասարակական-քաղաքական իրադարձությունների մասին, այլև այն հարթակ է անվտանգային հարցերի շուրջ քննարկումներ կազմակերպելու համար: Սոցիալական մեղիան միաժամանակ գործիք է բողոքի ակցիաներ կազմակերպելու համար, որոնք կարող են վերափոխվել բաց հակամարտության և բերել քաղաքացիական պատերազմի՝ ազդելով հասարակության ու պետության կայունության վրա:

Հայաստանում նույնպես համացանցն այն ոլորտն է, որտեղ ընթանում են քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման գործընթացներ:

Սոցիալական ցանցերից Ֆեյսբուքն է Հայաստանում դարձել քաղաքացիական ակտիվության կարևոր գեներատոր՝ Հայաստանի բնակչության սոցիալապես ակտիվ մասի քաղաքացիական ակտիվության գործիք, քանի որ այն մարդկանց ընձեռում է լայն հնարավորություններ միմյանց գոյության մասին տեղյակ լինելու, միասնական հարթակ ունենալու համար: Դա առաջին ակամա գործողությունն է, որ կարող են նրանք անել՝ մտածել մի տարածքում, մի հրապարակում:

Հայաստանում, ըստ Ֆեյսբուք սոցիալական ցանցի գովազդային համակարգի տվյալների, հայաստանցի ակտիվ օգտատերերի թվաքանակն ամսական կտրվածքով հասնում է արդեն 800.000-ի: Այսպես, 2014թ. դեկտեմբերին ցանցում հայաստանցի օգտատերերի թիվը հասնում էր 740.000-ի: Եվ եթե երկու՝ հոկտեմբերից դեկտեմբեր ամիսների ընթացքում էր արձանագրվել 60.000 օգտատերերի աճ, ապա նոյն աճը դիտվել է արդեն 2014թ. դեկտեմբերից մինչև 2015թ. հունիս ժամանակահատվածում (արդեն վեց ամսվա ընթացքում), ինչը նշանակում է, որ Facebook-ը մոտենում է իր առավելագույնին¹⁶⁶:

Հայաստանի կյանքում համացանցային սոցիալական այդ ցանցը 2010թ. դարձավ չկաղապարված մտածողության տեր մարդկանց, միտք կրողների մեկտեղման օպերատիվ հրապարակ: Հենց Ֆեյսբուքի և բլոգոսֆերայի միջոցով են առաջ եկել քաղաքացիական այնպիսի նախաձեռնություններ, ինչպիսիք են «Մոսկվա»

<http://www.psaa.am/images/PDFs/A. Atanesyan.pdf>

¹⁶⁶Տե՛ս Մարտիրոսյան Ս. «Սոցիալական ցանցերը Հայաստանում (2015թ. տվյալները)», Նորավանք գիտակրթական իիմնադրամի կայք, 09/07/2015, Այցելություն 21/01/2016

http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13686

կինոթատրոնի ամառային դահլիճը քանդելու և օտարալեզու դպրոցներ բացելու դեմ շարժումները: Ֆեյսբուքի միջոցով է նաև իր գործունեությունը համակարգում այն խումբը, որը պայքարում է Երևան քաղաքի կանաչ գոտու վերացման դեմ: Այդ խմբերը բազմաթիվ են և գործում են սոցիալական, քաղաքացիական ակտիվության նպատակառությամբ ձևաչափով: Օրինակ՝ Մե՛նք ենք այս քաղաքի տերը /8813 - գրանցված մասնակից/¹⁶⁷, Փրկենք Թեղուտը /8458-գրանցված մասնակից/¹⁶⁸, Պահպանենք Թոշկանի ջրվեժը /4587-գրանցված մասնակից/¹⁶⁹ և այլն:

Նման խմբերի լսարանը համեմատելի է հայկական հիմնական առցանց լրատվական ռեսուրսների լսարանի հետ: Համապատասխանաբար, նման խմբերի տեղեկատվական արժեքը կոնկրետ հարցերի շուրջ երբեմն դառնում է որակապես ավելի բարձր, քան ավանդական լրատվամիջոցներինը: Իր հերթին, մամուլի համար նման խմբերում որպես տեղեկատվական աղբյուր ներկա լինելը կարևոր է դառնում, ինչը թույլ է տալիս մեծացնել լսարանը:

Սակայն հարկ է նշել, որ հասարակական շարժումների գործողությունը համացանցում հնարավոր է որոշակի ժամակահատվածի համար, որի սպառումից հետո կարող է սկսվել ճահճացումը: Համատեղ մտածելու գործողությունը պահանջում է համատեղ գործունեության ձևերի ընդլայնում, այսինքն՝ Ֆեյսբուքում ստեղծված քաղաքացիական շարժումները կարող են ունենալ դրսևորումներ վիրտուալ տարածությունից դուրս: Հարցն այն է, որ այդ շարժումներն էլ արդեն պահանջում են հաջորդ մակարդակ, հաջորդ աստիճան և կարևոր է հասկանալ այդ հաջորդ մակարդակը. այն կշարունակի՝ մնալ կառուցողական քաղաքացիական բնույթի սահմաններում, թե՛ կսկսի կիրառել քաղաքական ձևաչափեր:

Ուսումնասիրության համաձայն՝ համացանցում սկիզբ առած և հաջողություն արձանագրած առաջին շարժումներից մեկն ուղղված էր «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի պաշտպանությանը: Շարժման մասնակիցներին 2010թ. գարնանը

¹⁶⁷ Տե՛ս «Մե՛նք ենք այս քաղաքի տերը» ֆեյսբուքյան էջ, Այցելություն 21/04/2015
<https://www.facebook.com/groups/119537174725392/>

¹⁶⁸ Տե՛ս «Փրկենք Թեղուտը - Save Teghut» ֆեյսբուքյան էջ, Այցելություն 21/04/2015
<https://www.facebook.com/groups/207369279360129/>

¹⁶⁹ Տե՛ս «Պահպանենք Թոշկանի ջրվեժը» ֆեյսբուքյան էջ, Այցելություն 03/10/2012
<https://www.facebook.com/groups/259531000744522/>

հաջողվեց կասեցնել ամառային դահլիճը քանդելու և դրա տեղը եկեղեցի կառուցելու՝ կառավարության որոշումը։ Շարժման դրական արդյունքը պայմանավորված էր նրանով, որ որպես կազմակերպիչներ ներգրավված էին ճարտարապետներ, որոնք ապահովում էին շարժման գաղափարական հենքը, թույլ չէին տալիս, որ ապատեղեկատվություն պարունակող կամ շփոթեցնող լուրերը ներթափանցեն թեմայի շուրջ ծավալվող քննարկումներում¹⁷⁰։

Քաղաքացիական ակտիվության մեկ այլ վառ օրինակ, որը նույնպես սկսվեց բլոգներում և Ֆեյսբուքում՝ օտարալեզու դպրոցների վերաբացման դեմ շարժումն էր։ Այն նախաձեռնողներին հաջողվեց կես տարվա ընթացքում այս թեման դարձնել ամենաքննարկվողներից մեկը հասարակության մեջ, բավականին լուրջ փոփոխություններ մտցնել ԱԺ-ում քննարկման դրված օրենսդրական փաթեթում, սակայն օրենքի ընդունումն ամբողջությամբ կասեցնել չհաջողվեց։ Այս օրինակում առաջին անգամ վառ դրսևորվեց այսպես կոչված «քլիքթիվիզմ» (clicktivism, slacktivism), երբ մարդիկ, առցանց սոցիալական ցանցերում մի քանի գործողություն կատարելով, իրենց պարտքը համարում են կատարած, սակայն շարժումը չի ստանում համապատասխան մարդկային, կամային ներուժ, և հիմնական բեռը մնում է մի քանի իրական ակտիվիստների վրա¹⁷¹։

Ազդեցիկ էր նաև հηի կանաց նպաստների փոփոխության դեմ բողոքի շարժումը։ Կառավարության համապատասխան որոշումը բողոքի ալիք բարձրացրեց ինչպես հηի կանաց, այնպես էլ այլ քաղաքացիների շրջանում։ Ֆեյսբուքյան խումբն աճեց արագ տեմպերով՝ իր մեջ ներգրավելով ինչպես հիմնական շահառուներին, այնպես էլ մտահոգ քաղաքացիների, որոնք անմիջապես անցան գործողությունների՝ ցուցերի, ԶԼՄ-ներում հարցը բարձրաձայնելուն և այլն։

Ամենազանգվածային ցանցային շարժումը, սակայն, 2015թ. հունիս-հուլիս ամիսներին ընթացող Էլեկտրաէներգիայի թանկացման դեմ հասարակական պայքարն

¹⁷⁰ Տե՛ս «23.400 ստորագրություն՝ «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի պահպանման համար», «Հետք» լրատվական գործակալության կայք, 01/10/2010, Այցելություն 12/10/2012

<http://hetq.am/arm/news/44010/23400-storagrutyun-moskva-kinotatroni-amarayin-dahlitchi-pahpanman-hamar.html>

¹⁷¹ Տե՛ս «Սոցիալական մեդիան մարդու իրավունքների պաշտպանության գործում» փորձագիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2012, էջ 6-18

Էր: Այստեղ ձևավորվեց շարժում, որն ինքնաբուխ կառավարվում էր սոցիալական ցանցերի միջոցով: Եվ եթե մինչ այս ընթացող բոլոր շարժումները հիմնականում հիմնված էին Ֆեյսբուք սոցիալական ցանցի գործիքների վրա, ապա այս անգամ մեծ ազդեցություն ունեցան նաև այլ սոցիալական ցանցերը: Այսպես, Յութուբն ուղիղ հեռուստաեթեր ստանալու հիմնական աղբյուրներից մեկն էր: Բացի այդ, տեղեկատվություն տարածելու, այլ երկրների լրագրողներին և հետաքրքրված անձանց տեղեկատվություն տալու հարթակ առաջին անգամ հանդիսացավ Թվիթերը, որը մինչև վերջերս Հայաստանում թույլ ակտիվություն ուներ: Տեղեկատվություն տարածելու հարթակ էր նաև լրասանկարներ և տեսանյութեր տեղադրելու համար կիրառվող ինստագրամ հավելվածը¹⁷²:

Համացանցի տարածմանը և արագությունների աճմանը զուգընթաց՝ վիդեոն համացանցում, որպես մարդու իրավունքների պաշտպանության գործիք, ավելի ու ավելի շատ է օգտագործվում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից: Հայաստանում ակտիվ քաղաքացիների պատրաստած տեսանյութերի տարածումը սկսվել է 2008թ.-ից, երբ Հայաստանում համացանցը դեռ բավականաչափ տարածված չէր: 2008թ. նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցող բողոքի ցույցերի, հանրահավաքների ու երթերի մասին տեսանյութերի տարածման հիմնական հարթակը Յութուբն էր: Տեսանյութեր էին նկարահանում և համացանցով տարածում ինչպես առցանց լրատվամիջոցները (հատկապես «Ա1+»-ը), այնպես էլ անհատները՝ ընդդիմության կամ իշխանության կողմնակիցները, բլոգերները: 2010թ., երբ Հայաստանոմ համացանցն արդեն բավականաչափ տարածում ուներ, Յութուբով տարածված տեսանյութերը նախնական քննարկվում էին սոցիալական ցանցերում, հատկապես Ֆեյսբուքում, հետո էլ տեղափոխվում էին ավանդական մեդիա՝ թերթեր, այդ թվում՝ առցանց, հեռուստատեսություն և այլն: 2012թ. բանակում զինվորների նկատմամբ ուժի կիրառման ապացույց հանդիսացող տեսանյութը տարածվեց նախ Յութուբով, հետո քննարկվեց Ֆեյսբուքում, դարձավ հոդվածների, համացանցային հրապարակումների, ուղղութապորտաժների ու

¹⁷² Տե՛ս Մարտիրոսյան Ս. «Հայաստանի քաղաքական և քաղաքացիական շարժումները համացանցում», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կայք, 28/09/2015, Այցելություն 20/12/2015 http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13832

հեռուստատեսային նյութերի թեմա: Բջջային հեռախոսով նկարահանված տեսանյութի հիմքով քրեական գործ հարուցվեց, պատժվեց մեղավոր զինվորականը¹⁷³: Սկանդալային տեսանյութի գործով հետաքննությունը, բանակում սպա-զինվոր փոխհարաբերությունները երկար ժամանակ գտնվում էին ավանդական և նոր մեղիայի ուշադրության կենտրոնում, իսկ տեսանյութի հեղինակն ու այն տարածողները նպաստեցին մեկ գործով արդարության վերականգնմանը:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից իրադարձությունների վայրից օպերատիվ տեսագրումները և սոցիալական տեսահոլովակների, արդիական տեղեկատվություն պարունակող նյութերի հանրայնացնումը հնարավորություն են տալիս իրազեկել մարդկանց տեղի ունեցող իրադարձությունների մասին, ընդլայնել մասնակցության ձևերը այդ միջոցառումներին: Զևավորվում է նաև առցանց մասնակցության ձևեր՝ տեղեկատվությունը տարբեր ցանցերում տարածելով և հիմնախնդիրներն ավելի լայն հասարակական շրջանակների իրազեկմանը հասցնելով, հասարակական կարծիք ձևավորելով և այլն: Փորձը ցույց է տալիս, որ որոշ իշխանության կոշտ հակադրման պրակտիկաներից անցում է կատարվում փափուկ հակադրման պրակտիկաների, ինչպես նաև որոշ դեպքերում իշխանությունը ստիպված է լինում մի կողմ թողնել սեփական պրակտիկաները և փոխառել քաղաքացիականներինը: Օրինակ՝ ուղեվարձերի թանկացման հետ կապված քննարկումների ժամանակ երևանի փոխստիկանապետն ստիպված եղավ ենթարկվել քաղաքացիական ակտիվիստների սահմանած կանոններին և Մաշտոցի պուրակում կազմակերպված քննարկման ժամանակ հանդես գալ բոլորի համար ընդհանուր ռեգլամենտի կանոններով¹⁷⁴: Դրանով իսկ նա ընդունեց հորիզոնական փոխհարաբերման ձևը՝ ի հակադրություն հիերարխիկ իշխանություն կիրառելու սեփական պրակտիկաների:

Քաղաքացիական հասարակության զարգացման գործում տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջինս հնարավոր

¹⁷³ Տե՛ս «Youtube»-յան ողիսականը, “armtimes.com” «Հայկական ժամանակ» օրաթերթի կայք, 30/09/2012, Այցելություն 05/04/2013, <http://www.armtimes.com/hy/150>

¹⁷⁴ Տե՛ս «Քաղաքը զարթնել է ու արդեն ընդվզում է», հարցազրույց հրապարակախոս Զարուհի Հովհաննիսիսի հետ, «Lragir.am» լրատվական կայք, 12/08/2013, Այցելություն 10/11/2013 <http://www.lragir.am/index/arm/0/interview/view/86700>

է դարձնում նաև հաղորդակումը միջազգային փորձի հետ: Դա կարող է դրսնորվել քաղաքացիական շարժումների համաշխարհային փորձի պատմությանը ծանոթանալու մեջ: Այն նաև այլ երկրների երիտասարդական և քաղաքացիական շարժումների հետ կապերի ծևավորումն ու փորձի փոխանակումն է, ինչպես նաև սփյուռքի հայերի հետ համագործակցությունը և առցանց ակտիվությունների կազմակերպումը: Չնայած մասնագետները պնդում են, որ միջազգային քաղաքացիական շարժումների ու նախաձեռնությունների հետ համագործակցությունը կարող է ավելի ուժեղացնել այն, սակայն դա կարող է նաև բացասական ազդեցություն ունենալ, քանի որ հայկական քաղաքացիական նախաձեռնություններն ուղղված են լուծելու հայաստանյան հիմնախնդիրները և պետք է հաշվի առնվեն տեղական առանձնահատկությունները՝ չվնասելով երկրի անվտանգությանը:

Անդրադառնալով Հայաստանում պետություն-քաղաքացիական
հասարակություն հաղորդակցության ընթացքում համացանցային գործիքների կիրառմանը՝ հարկ է նշել, որ վերջին տարիներին նկատելի է դրական միտում: Այսինքն՝ պետական կառավարման մարմիններն արդիականացրել են իրենց պաշտոնական կայքերը, որոնց միջոցով հնարավոր է ապահովել հետադարձ կապ երկրի քաղաքացիների հետ: Սակայն ուշադրության է արժանի այն, որ պետական կառավարման մարմինները տարբեր մակարդակներով ներկայացված են ֆեյսբուք սոցիալական ցանցում, ինչը հնարավորություն է տալիս սեփական գործունեության մասին տեղեկետվություն տրամադրելուց բացի մշտապես կապի մեջ լինել օգտատերերի հետ՝ քննարկելով նաև ազգային անվտանգությանը վերաբերող հարցեր: Այսպես, 2016թ. ապրիլյան պատերազմի ընթացքում իրավիճակի վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն էր տրամադրում << պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Ա. Հովհաննիսյանը, ինչպես նաև արագ արձագանքում էր բոլոր քաղաքացիներին հուզող հարցերին (ապրիլի 2-ից մինչև ապրիլի 10-ն ընկած ժամանակահատվածում Ա. Հովհաննիսյանին ֆեյսբուքյան էջին հետևողների թիվը մոտ 15.000-ից հասել է 95.800-ի): Բացի այդ, ապրիլյան պատերազմի ընթացքում քաղաքացիական հասարակությունը կազմակերպում էր տարբեր միջոցառումներ՝ կիրառելով համացանցային գործիքները: Օրինակ՝ այդ օրերին ստեղծվել են տարբեր

կամավորական խմբեր՝ համակարգելու միջազգային լրահոսի ինֆորմացիայի տարածումը տարբեր լեզուներով և այդ խումբն օպերատիվ աշխատում էր ֆեյսբուքյան միջավայրում: Իսկ «CyberSec» ընկերությունն իր ֆեյսբուքյան էջում գրել էր, որ պատրաստ է տեղեկատվական անվտանգության վերաբերյալ անվճար խորհրդատվություն տրամադրել ու աջակցել այն կազմակերպություններին և պետական մարմիններին, որոնց ռեսուրսները տուժել են հաքերային հարձակումներից այդ իրադարձությունների ընթացքում: Այսինքն՝ կարելի է փաստել, որ ռազմական անվտանգության ապահովման ընթացքում այս սոցիալական ցանցի գործիքները կիրառվեցին ինչպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, այնպես էլ պետական մարմինների ներկայացուցիչների կողմից՝ ճգնաժամային իրավիճակում Հայաստանի քաղաքացիներին մորիլիզացնելու և համախմբելու համար:

Այսպիսով, Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացումն ու գործունեությանը արդյունավետությունը պայմանավորված է նաև սոցիալական մերիայի գործիքակազմի կիրառմամբ: Չնայած միջազգային փորձը ցույց է տալիս, որ սոցիալական մեդիան կիրառվել է երկրի անվտանգության տեսանկյունից ապակառուցողական գործողություններ կազմակերպելու համար, այնուամենայնիվ Հայաստանում քաղաքացիական հասարակության գործունեությունը մնում է դեռևս կառուցողական դաշտում: Ավելին, այն բարելավել է նաև պետական կառավարման մարմինների ներկայացուցիչների և քաղաքացիների միջև հաղորդակցության մակարդակը, ինչպես նաև պաշտոնական տեղեկատվության տրամադրման, փոխանցման և ստացման հարթակ է:

ԳԼՈՒԽ 3. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁՆ ՈՒ ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

3.1 Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը << պետական կառավարման մարմինների գործունեությանը և վերահսկողությունը դրա նկատմամբ

Ազգային անվտանգության ապահովման հարցում քաղաքացիական հասարակության գործառույթները պայմանավորված են քաղաքացիական հասարակության և պետական կառավարման մարմինների միջև հարաբերություններով, որոնք բազմավեկտորային են: << Ազգային անվտանգության ռազմավարությամբ ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում հաստատութենական (ինստիտուցիոնալ) բարեփոխումները միտված են ժողովրդավարական պետության զորացմանը, պետական կառավարման մարմինների արդյունավետ գործունեությանը, որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանը:

Հիարժեք և գործուն ժողովրդավարության ձևավորման համար անհրաժեշտ է ունենալ կայացած, նախաձեռնող և լավ կազմակերպված քաղաքացիական հասարակություն, որն էլ պետք է ունենա հասարակական լեգիտիմության բարձր մակարդակ, ներկայացուցչականություն և համապատասխան փորձ: Միաժամանակ, անհրաժեշտ է պետական իշխանության մարմինների պատրաստակամությունը՝ նպաստելու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացմանը, ինչպես նաև վերջիններիս դիտարկելու որպես վստահելի գործընկերներ, ովքեր իրենց նպաստն են բերում քաղաքական և օրինաստեղծ գործընթացին: Դրան հասնելու համար երկու կողմերից էլ պահանջվում է բարեփոխումներ իրականացնել և կատարելագործել համագործակցության ձևեր՝ ապահովելու Հայաստանի ազգային անվտանգությունը: Այս համատեքստում, անհրաժեշտություն է առաջանում դիտարկել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և պետական կառավարման մարմինների միջև

համագործակցության իրավական և ինստիտուցիոնալ հնարավորությունները Հայաստանում՝ ուղղված օրինաստեղծ գործունեությանը, որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը՝ դրանով իսկ նպաստելով Հայաստանի ազգային անվտանգության ապահովմանը:

Ներկայում Հայաստանում ազգային անվտանգության տեսանկյունից պետական կառավարման մարմին քաղաքացիական հասարակություն համագործակցության կարևորությունը պայմանավորված է նրանով, որ ներկայում ժողովրդավարական ուղի որդեգրած երկրներում հասարակության ինքնակազմակերպման մեխանիզմների զարգացման, կոնֆլիկտային իրավիճակների լուծման նոր տեխնոլոգիաների ներդրման, տեղեկատվական միասնական դաշտի ձևավորման և քաղաքացիական հասարակության ակտիվացման պայմաններում ձևավորվել է պետության և քաղաքացիների ու նրանց միավորումների միջև հարաբերությունների մի նոր իրավիճակ, որտեղ ոչ միայն քաղաքացիներն ու նրանց միավորումներն են կախված պետական կառույցներից, այլև հենց պետական կառավարման համակարգի ինստիտուտներն են կախվածության մեջ հայտնվել քաղաքացիներից ու նրանց միավորումներից: Ստեղծված իրավիճակում պետությունն այլևս չի կարող իր գործառույթներն իրականացնել՝ չհամագործակցելով քաղաքացիական հասարակության և շարքային քաղաքացիների հետ, չստանալով նրանց աջակցությունը և համաձայնությունն այս կամ այն կարևոր հարցերի շուրջ որոշումների կայացման ընթացքում: Հետազոտող Գ. Պոչեպովը նշում է, որ քաղաքակրթական փոփոխությունները XX դարում հանգեցրին ժամանակակից քաղաքակրթության տեղեկատվական բաղադրիչի այնպիսի կարգավիճակի, երբ այլևս դժվար է թաքցնել տեղի ունեցող իրադարձություններն ինչպես ամբողջ աշխարհից, այնպես էլ սեփական ժողովրդից¹⁷⁵:

Պետությունը, հանձինս տարբեր մարմինների ու կառույցների, իրականացնում է կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, որոնք ուղղակիորեն կապված են ամբողջ հասարակության կամ հասարակության այս կամ այն խմբի շահերի,

¹⁷⁵Տե՛ս Պոչեպцов Գ. “Психологические войны”, “Ваклер”, 2000, с. 41

կարիքների, պահանջմունքների հետ: Նման իրավիճակում հասարակական կոշտ ընկալումներից, արձագանքներից խուսափելու, ինչպես նաև փոխըմբռնման մթնոլորտ ծևավորելու ու պահպանելու նպատակով պետական կառավարման մարմիններում անհրաժեշտություն առաջացավ ստեղծել այնպիսի բաժիններ, որոնք անընդհատ երկխոսության մեջ կլինեն բնակչության և քաղաքացիական միավորումների հետ: Հասարակության կողմից ըմբռնումն ու վստահությունը կարող են նվաճվել միայն այն դեպքում, եթե պետական մարմինները ձգտում են թույլատրելի սահմաններում հասարակությանը տրամադրել օբյեկտիվ տեղեկատվություն իրենց գործունեության, երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ՝ հետևելով տեղեկատվության բաց լինելու և թափանցիկ գործելու սկզբունքներին, որի արդյունքում ապահովվում է բնակչության և սոցիալական տարբեր խմբերի ջանքերի համակարգումն ու շահերի համաձայնեցումն այս կամ այն հարցերի որոշման, գործողությունների ընդհանուր եզրի և ռազմավարության մշակման գործում: Այս ամենն առաջ է բերում քաղաքացիական հասարակության և պետության միջև փոխհարաբերությունների նոր ձևերի և մեխանիզմների անհրաժեշտություն:

Պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերություններում պետության կողմից տեղեկատվության ազատության ապահովումը պայմանավորված է նրանով, որ կառավարությանը հսկելու և երկրի կառավարմանն ակտիվություն մասնակցելու համար քաղաքացիներին անհրաժեշտ է տեղեկատվություն պետական կառավարման մարմինների գործունեության և որոշումների կայացման վերաբերյալ¹⁷⁶: Տեղեկատվության ազատությունը հանրությանը հնարավորություն է ընձեռում կարծիք ծևավորել այն իշխանությունների վերաբերյալ, որոնք ղեկավարում են իրեն, խթանում է պետական կառավարման մարմինների արդյունավետությունն ու օգտակարությունը, ինչպես նաև նպաստում է պետական կառավարման մարմինների օրինականության հաստատմանը՝ իբրև հանրային ծառայություններ մատուցողների, և պետական իշխանության նկատմամբ հասարակության վստահության մեծացմանը:

¹⁷⁶Տե՛ս Դոյդոյան Շ., Հայրապետյան Գ., Հարությունյան Կ. «Տեղեկատվության ազատության իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում. մեկնաբանություններ», Երևան, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 2010, էջ 9-10

Հայաստանն ԱՊՀ երկրներից առաջիններից էր, որ նախաձեռնեց և ընդունեց տեղեկատվության ազատության մասին առանձին իրավական ակտ, որը միջազգային փորձագետների կողմից ճանաչվել է՝ որպես լիբերալ և առաջընթաց ապահովող իրավական ակտ: Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Մ. Հարաշտիի կողմից 2006թ. իրապարակված Հայաստանում լրատվամիջոցների ազատության վիճակի վերաբերյալ հաշվետվության մեջ նշվում է, որ Հայաստանն ընդունել է ԱՊՀ երկրներում գործող տեղեկատվության ազատության վերաբերյալ ամենաազատական օրենքներից մեկը¹⁷⁷:

Աշխատանքի շրջանակներում կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայաստանցիները քաջատեղյակ են հանրային տեղեկատվություն ստանալու իրենց իրավունքից, սակայն ակտիվ գործողություններ չեն ձեռնարկում այդ իրավունքը գործադրելու նպատակով: Ըստ 2012թ. «Տեղեկատվության ազատությունը հարավկովկայան երկրներում» զեկույցի՝ Հայաստանի բնակչությունն ավելի մեծ ակտիվություն է ցուցաբերում տեղեկատվության մատչելիության իրենց իրավունքը գործադրելու ցանկություն հայտնելիս. հարցվածների 71%-ը ցանկություն է հայտնել նամակ կամ էլեկտրոնային փոստով հաղորդագրություն ուղարկել պետական բյուջեի ծախսերի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով (Ադրբեյջանում նման ցանկություն է հայտնել 9%-ը և 58%-ը՝ ոչ, իսկ Վրաստանում՝ համապատասխանաբար 9% և 56%)¹⁷⁸:

Պետական կառավարման մարմիններն իրենց հարապարակայնությունն ու թափանցիկ գործունեությունն ապահովելու համար՝ զգալի չափով հենվում են որոշակի տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների վրա, որոնց շարքում կարևորվում են պետական կառավարման մարմիններում կիրառվող PR (public relations-հասարակայնության հետ կապեր) տեխնոլոգիաները՝ որպես պետության և քաղաքացիների միջև տեղեկատվական կամուրջի կառուցման առավել արդյունավետ համարվող տեխնոլոգիաների ամբողջություն: Այս առումով հատկանշական է, որ

¹⁷⁷Տե՛ս «Օրենքը չպետք է փոփոխվի», «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության էլեկտրոնային կայք, 01/08/2006, Այցելություն 11/12/2013

<http://www.foi.am/hy/news/item/354/>

¹⁷⁸Տե՛ս “Handbook on Freedom of Information in the South Caucasus Countries”, Transparency International Armenia, June 2012, p. 5-9

Հայաստանում բոլոր պետական կառավարման մարմիններում գործում են հասարակայնության հետ կապերի բաժիններ՝ իրականացնելու պետության և հասարակության միջև հաղորդակցություն, որը հիմնվում է սկզբունքորեն նոր հասկացության վրա, այն է՝ համագործակցությունը՝ արդյունավետ կերպով ապահովելու երկրի անվտանգությունը:

Երկրի անվտանգությունն ապահովվում է պետություն-հասարակություն լարվածության կանխարգելման կամ չեզոքացման արդյունքում, ինչը հնարավոր է պետական կառավարման մարմինների կողմից հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքների պահպանմամբ՝ նպաստելով պետության նկատմամբ հասարակության լոյալ վերաբերմունքի առաջացմանն ու պահպանմանը, որն էլ հանդիսանում է անվտանգ ու ժողովրդավարական պետության զարգացման կարևորագույն նախադրյալն ու գրավականը: Այն, նպաստելով քաղաքացիական հասարակության արդյունավետ գործունեությանը, կանխարգելում է պետություն-հասարակություն լարվածությունը և ապահովում է երկրի անվտանգ զարգացումը, քանի որ քաղաքացիական հասարակությունը, որը գործում է՝ որպես կամուրջ քաղաքացիների և պետական մարմինների միջև, վերհանում է հասարակությանը հուզող հարցեր և ներկայացնում դրանք պետական մարմինների ուշադրությանը: Այս իմաստով, անհրաժեշտ է առավել մանրամասն դիտարկել Հայաստանում քաղաքացիական հասարակության կազմակերպություն-պետական կառավարման մարմիններ համագործակցության ինստիտուցիոնալ և իրավական մեխանիզմները, զարգացման հեռանկարները:

Ամփոփելով վերոնշյալը, կարելի է փաստել, որ պետության և հասարակական կառուցների միջև փոխհարաբերությունն արտահայտված է այնպիսի ձևերի մեջ, ինչպիսիք են աջակցությունը, տեղեկատվություն ստանալու իրավունքը, կարծիքների և առաջարկների քննարկումը, որոշումների կայացման գործում մասնակցության ապահովումը, պետական կառավարման մարմիններում աշխատանքի խթանումը և այլն: Բացի դրանից, գործում են նաև բաց ժողովրդավարության ինստիտուտներ, ինչպիսիք են հանձնաժողովները, հասարակական խորհուրդներն ու պալատները, տարբեր խնդիրների շուրջ հանրային լսումները և այլն:

Օրինաստեղծ գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցության վերաբերյալ ուսումնասիրությունը ցուց է տալիս, որ վերջին տարիներին մեծացել է այդ հնարավորությունը, որն ամրագրված է «Սահմանադրությամբ»: Այսպես, «գործող սահմանադրությամբ «Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և կառավարությանը»¹⁷⁹, ինչպես նաև նշված է, որ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք¹⁸⁰: Այնինչ 2015թ. «սահմանադրության փոփոխված տարբերակով «Քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք ունի ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի»¹⁸¹:

Վերջին տարիներին Հայաստանում քաղաքացիական հասարակության կազմակերպություն – Ազգային ժողով համագործակցությունը և հանրային խորհրդակցությունները հիմնականում համակարգվում են գործող հուշագրերով, ժամանակավոր նախաձեռնություններով, մշտական հանձնաժողովների միջոցով: Օրինակ, 2010թ. դեկտեմբերի 2-ին ստորագրվել է Համագործակցության հուշագիր Հանրային ցանցի և «Հ չորրորդ գումարման ազգային ժողովի միջև»¹⁸²: Հարկ է նշել, որ դրանք ունեն խորհրդատվական բնույթ և բացի այդ ամրագրված չէ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կանոնավոր մասնակցության և խորհրդատվության հստակ ընթացակարգը, ինչը նշանակում է, որ քաղաքացիական հասարակության կազմակերպություններն օրինաստեղծ գործընթացում չեն կարող ապահովել ազդեցության բարձր աստիճան:

¹⁷⁹ Տե՛ս «Հ սահմանադրություն», հոդ. 75, <http://www.president.am/hy/constitution/>

¹⁸⁰ Տե՛ս «Հ սահմանադրություն», հոդ. 27 կետ 1, <http://www.president.am/hy/constitution/>

¹⁸¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների նախագիծ, հոդ. 109 կետ 4

¹⁸² «Հանրային ցանցը» 2008թ-ից «Հ-ում գրանցված և գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միություն է, որի նպատակն է խթանել պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների մշակման, ընդունման և վերահսկման գործընթացներում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությանը»:

Քաղաքացիական

հասարակության

կազմակերպություն-ԱԺ

փոխհարաբերության մեկ այլ ձևաչափ է հանդիսանում խորհրդարանի մշտական հանձնաժողովների միջոցով գործելակերպը: Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կանոնակարգերի¹⁸³ ուսումնասիրությունը թույլ է տալիս նշել, որ չնայած որոշ թերևն տարբերություններին, հանձնաժողովներն ունեն քաղաքացիական հասարակության հետ հաղորդակցության և խորհրդակցության միատեսակ գործելառն: Հարկ է նշել, որ այդ կանոնակարգերում ևս չի նշվում այն անձանց կամ կազմակերպությունների ցանկը, ովքեր կարող են մասնակցել հանձնաժողովի նիստերին:

Ինչ վերաբերում է խորհրդարանական լսումներին, ապա այն <<ԱԺ մշտական հանձնաժողովների և քաղաքացիական հասարակության համագործակցության ամենատարածված ձևն է: Ըստ <<ԱԺ կանոնակարգի՝ հանձնաժողովները յուրաքանչյուր հերթական նստաշրջանում առնվազն մեկ անգամ կազմակերպում են խորհրդարանական լսումներ: <<ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ վերջին տարիներին պարբերաբար իրականացվել են խորհրդարանական լսումներ, որոնք վերաբերվել են ճանապարհային երթևեկության անվտանգության ոլորտի հիմնախնդիրներին¹⁸⁴, <<Քաղաքացիական պաշտպանության կազմակերպմանը և իրականացմանը¹⁸⁵, <<զինված ուժերում նորարարական տեխնոլոգիաների զարգացման հեռանկարներին¹⁸⁶, << ոստիկանության հաշվետվողականությանը, թափանցիկությանն ու

¹⁸³Տե՛ս «Քաղաքացիական հասարակությունը և համագործակցությունը պետական կառույցների հետ» խորհրդատվական փաստաթուղթ, ԵՄ խորհրդատվական խումբ Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2012, էջ38

¹⁸⁴Տե՛ս «<<Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովը նախաձեռնել էր խորհրդարանական լսումներ», << Ազգային ժողովի պաշտոնական կայք, 14/12/2012, Այցելություն 11/02/2016

http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=5621&year=2012&month=12&day=14

¹⁸⁵Տե՛ս «Տեղի են ունեցել խորհրդարանական լսումներ», << Ազգային ժողովի պաշտոնական կայք, 28/03/2015, Այցելություն 09/02/2016

http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=7355&year=2015&month=03&day=28

¹⁸⁶Տե՛ս խորհրդարանական լսումներ՝ «Նորարարական տեխնոլոգիաների զարգացման հեռանկարները << զինված ուժերում» թեմայով, << Ազգային ժողովի պաշտոնական կայք, 13/05/2015, Այցելություն 12/11/2015

http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=7518&year=2015&month=05&day=13

խորհրդարանական վերահսկողությանը¹⁸⁷, Բանակ-հասարակություն փոխադարձ կապի ամրապնդմանը¹⁸⁸ և այլն: Անդրադառնալով խորհրդարանական լսումներին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավվածության ու անվտանգության ոլորտի հարցերի քննարկման ընթացքում մասնակցության մեխանիզմին՝ հարկ է նշել, որ այս միջոցառման մասին տեղեկացվում է զանգվածային լրատվամիջոցներին¹⁸⁹ և քանի որ լրացուցիչ աշխատանք չի իրականացվում որոշակի, այդ թվում անվտանգության տարբեր ասպեկտներին վերաբերող օրենքների նախագծերի քննարկման ընթացքում տվյալ ոլորտում գործունեություն ծավալող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ կապ հաստատելու ուղղությամբ, վերջիններիս մասնակցությունը նիստերին կախված է հանձնաժողովի նախագահից և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների նախաձեռնողականությունից: Ավելին, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներին նիստին և որոշակի օրենքի նախագծի քննարկմանը մասնակցելու հնարավորություն տրամադրվում է, եթե նրանք նախատեսում են առաջարկություններով հանդես գալ նախագծի վերաբերյալ: Ինչ վերաբերում է հանրային լսումներին, ապա դրանց մասնակցելու համար կարող է դիմել ցանկացած շահագրգիռ անձ: Միևնույն ժամանակ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների այն ներկայացուցիչները, որոնք մասնակցում են հանդիպումներին կամ լսումներին, մեխանիզմներ չունեն իրենց մասնակցության արդյունքը պարզելու համար¹⁹⁰: Այսինքն, սահամանափակումներ չեն դրվում, սակայն նախաձեռնողականություն չի ցուցաբերվում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ներգրավելու համար, իսկ մասնակցության դեպքում էլ բացակայում է հետադարձ կապի ապահովումը: Այս խնդիրները կարող են

¹⁸⁷Տե՛ս Խորհրդարանական լսումներ «Ոստիկանության հաշվետվողականությունը, թափանցիկությունը և խորհրդարանական վերահսկողությունը» թեմայով, << Ոստիկանության պաշտոնական կայք, 19/11/2014, Այցելություն 19/02/2015

<http://www.police.am/news/view/խորհրդարանական-լսումներ191114.html>

¹⁸⁸Տե՛ս «ԱԺ-ում կայացել են բանակ-հասարակություն փոխադարձ կապի ամրապնդմանն ուղղված խորհրդարանական լսումներ», «Արմենպրես» լրատվական գործակալություն, 15/04/2013, Այցելություն 18/04/2013, <http://armenpress.am/arm/print/715236/azh-um-kayacel-en-banak-hasarakutyun-pokhadardz-kapi-amrapndmann.html>

¹⁸⁹Տե՛ս << Աժկանոնակարգ, հոդ. 32 կետ1, 2, <http://www.parliament.am/parliament.php?id=bylaw#4>

¹⁹⁰Տե՛ս Մարգարյան Տ., Հակոբյան Ա. «ՔՀԿ-ների ներգրավվածությունը քաղաքականության մշակման և իրականացման մոնիթորինգի գործում. կարիքներ և կարողություններ», Երևան, 2015, էջ 46-48

բացասական ազդեցություն ունենալ խորհրդարանի նկատմամբ հանրության վստահության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հեղինակության վրա:

Քաղաքացիական հասարակության կազմակերպություն - ԱԺ փոխհարաբերության շրջանակներում ձևավորվել են նաև ժամանակավոր նախագծեր: Օրինակ, Օրենսդրական օրակարգի քննարկման օր նախաձեռնությունը, որն արվել է Քառութերիարթ ինթերնեշնի կողմից ԱՄՆ Միջազգային զարգացման գրասենյակի հետ համագործակցությամբ 2010թ.¹⁹¹ նպատակ ունենալով հնարավորություն ընձեռել Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և ակտիվ քաղաքացիներին ազդեցություն ունենալ օրենսդրական օրակարգի ձևավորման գործընթացի վրա¹⁹¹: Նախաձեռնության շրջանակներում առաջին քայլը մարզային քննարկումներն են, այնուհետև մասնագիտացված խմբերում քննարկումներ և հանդիպումներ ԱԺ համապատասխան հանձնաժողովներում, ինչը հնարավորություն է տալիս ներկայացնել <<համայնքների հիմնախնդիրերը օրենսդիր մարմնին և ստանալ օրենսդրական լուծում:

Այսպիսով, ԱԺ-քաղաքացիական հասարակության կազմակերպության փոխհարաբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած Հայաստանում ինստիտուցիանալ մեխանիզմների առկայությանը, այդուհանդերձ, օրինաստեղծ գործընթացում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցության աստիճանը բավականին ցածր է: 2013թ. տվյալներով¹⁹² հարցվածների մոտ 23%-ին չի բավարարում քաղաքացիական հասարակության ակտիվության մակարդակը: Սակայն պետք է նշել, որ կողմերի մեկնաբանությունները տարբեր են: Պետական կառուցների ներկայացուցիչները քաղաքացիական հասարակության ակտիվության մակարդակը գնահատում են՝ ելնելով զուտ մասնակցության կամ առաջարկությունների ներկայացման տեսանկյունից: Մինչդեռ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչները

¹⁹¹Տե՛ս “Legislative Agenda Advocacy Days (LAAD) Provide Civil Society an Opportunity to Influence Lawmakers”, Counterpart International, Yerevan, 2012

<http://program.counterpart.org/Armenia/wp-content/uploads/2013/02/1.12-C2-LAAD-Impact-ENG.pdf>

¹⁹²Տե՛ս Մայիսյան Ն., Լեհման Լ., Արրահամյան Թ. «Հայաստանում օրինաստեղծ գործընթացքում առկա մասնակցային համակարգի կիրառելիության և արդյունավետության գնահատման ամփոփում», Երևան, 2013, էջ 20-21

հաշվի են առնում նաև մասնակցության արդյունքում ունեցած ազդեցությունը: Սակայն երկու կողմերի կարծիքները լիովին համընկնում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դաշտի կողմից ներկայացվող առաջարկությունների որակի հարցում, ինչը պայմանավորված է նրանց սահմանափակ ռեսուրսներով և հմտություններով: Այսպիսով կարելի է փաստել, որ չնայած ազգային անվտանգության արդիական հարցերի վերաբերյալ իրականացվում են խորհրդարանական լսումներ, այնուամենայնիվ՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ազդեցությունը գնահատվում է բավականին ցածր՝ պայմանավորված հանձնաժողովի նախագահի սուբյեկտիվությամբ, հետադարձ կապի բացակայությամբ, քաղաքացիական հասարակության կարողություններով և այլն:

Ուշադրության է արժանի այս ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրությունը: Այսպես, Էստոնիայում և Լեհաստանում գործում է խորհրդարանի անդամներից կազմված խումբ, որը համագործակցում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, որոնց ցանկը հրապարակվում է խորհրդարանի պաշտոնական կայքում: Գոյություն ունի նաև մասնակցային պորտալ, որում շահագրգիռ անհատները կամ կազմակերպությունները կարող են հանդես գալ դիտողություններով, առաջարկություններով, մեկնաբանություններով: Սլովակիայի խորհրդարանում օրինագծերը հրապարակվում են Արդարադատության նախարարության կողմից վերահսկվող կայքում, որը հանրությանը թույլ է տալիս հանդես գալ դրանց վերաբերյալ դիտողություններով, առաջարկություններով, մեկնաբանություններով: Լատվիայի փորձը նույնպես բավականին ուշագրավ է, քանի որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ներգրավվում են խորհրդարանի հանձնաժողովներում որպես փորձագետներ, ինչպես նաև կան քաղաքացիական հասարակության հետ համագործակցության համակարգմամբ զբաղվող հատուկ պաշտոնյաներ¹⁹³:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա է Աժ-քաղաքացիական հասարակության կազմակերպություն համագործակցության հստակ

¹⁹³Տե՛ս “Declaration about the development of a civil society in Latvia and cooperation with non-governmental organisations”, Լատվիայի Սահմանադրության կայք <http://www.saeima.lv/en/public-participation/deklaracija>

մեխանիզմներ, ինչպես նաև կիրառվում են համացանցային գործիքները: Հատուկ կայթերում օրենքների նախագծեր հրապարակելու, ինչպես նաև խորհրդարանի անդամներից կազմված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցության խումբ ունենալու փորձի կիրառումը Հայաստանում կհանգեցնի օրենսդրական գործընթացում երկու կողմերի կարողությունների ու ջանքերի համատեղման՝ բարձրացնելով նրանց հանդեպ հասարակության վստահությունը, ինչն էլ կնպաստի երկրի անվտանգության ապահովմանը:

Քաղաքացիական հասարակության կազմակերպություն-Կառավարություն փոխհարաբերության համատեքստում հարկ է նշել, որ «*նախարարությունների գործունեությունը և ծրագրերը բխում են* «*ազգային անվտանգության ռազմավարության համապատասխան դրույթներից*¹⁹⁴, ինչը նշանակում է այդ գերատեսչություններն ապահովում են ազգային անվտանգությունը լայն իմաստով: Դա նաև նշանակում է, որ «*կառավարությունը պետք է հաշվի առնի* «*ազգային անվտանգությամբ ամրագրված ներքին անվտանգության այն դրույթը, ըստ որի, արդյունավետ պետական կառավարման նպատակներից է քաղաքացիական հասարակության զարգացումը, իսկ պետական համակարգում արդեն տևական ժամանակ իրականացվող բարեփոխումները միտված են նաև որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանը: Այսպիսով, «*գործադիր իշխանությունը, կիրառելով այդ դրույթները, ձևավորել է քաղաքացիական հասարակության մեխանիզմներ:**

Վերջին տարիներին ձևավորվել է «*վարչապետին առընթեր խորհուրդներ՝ ոլորտային կամ հասարակության որոշակի խմբերի շահերի շուրջ: Օրինակ, «*վարչապետին առընթեր Գործարության աջակցության, Կոռուպցիայի դեմ պայքարի, Ազգային երիտասարդական քաղաքականության, Կանանց հարցերով և այլ**

¹⁹⁴Տե՛ս «*կառավարության 15 ապրիլի 2010 թվականի N 437-Ն որոշում՝ «*ազգային անվտանգության ռազմավարության ապահովմանն ուղղված՝ «*արտակարգ իրավիճակների նախարարության գործունեության ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին***

<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=57853>

խորհուրդներ¹⁹⁵: Բացի այդ, քաղաքացիական հասարակության ներգրավմամբ կառավարման համակարգի բարելավմանը նպաստելու, պետություն-քաղաքացի հարաբերությունների թափանցիկության, վստահելիության և հաշվետվողականության մակարդակը բարձրացնելու նպատակով 2011թ. <<-ն միացելէ «Բաց կառավարման գործնկերություն» (“Open Government Partnership”) նախաձեռնությանը, որին Հայաստանի մասնակցության գործողությունների ծրագրից բխող աշխատանքները համակարգող աշխատանքային խմբում ընդգրկված են նաև քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, օրինակ՝ “Transparency International” հակակոռուպցիոն կենտրոնը, Գյումրու ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը և այլն¹⁹⁶: Ինչ վերաբերում է Հայաստանի ներքին և արտաքին անվտանգության մարտահրավերների և սպառնալիքների կանխարգելման ու չեզոքացման աշխատանքներում քաղաքացիական հասարակության մասնակցությանը, ապա հարկ է նշել, որ վերջին տարիներին ստեղծվել են համապատասխան աշխատանքային խմբեր՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների անմիջական ներգրավմածությամբ: Այսպես, << արդարադատության նախարարությունը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիան, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները հայտարարել են համատեղ հակակոռուպցիոն աշխատանքային հարթակի ու աշխատանքային խմբերի ստեղծման մասին¹⁹⁷, որի արդյունավետությունը գնահատելը դեռևս վաղ է, սակայն կարելի է փաստել, որ պետություն-քաղաքացիական

¹⁹⁵Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության հաստատությունների գարգացման ռազմավարության հայեցակարգ» նախագիծ, «Հանրային խորհրդի» պաշտոնական կայք, Այցելություն 11/12/2013

<http://www.publiccouncil.am/hy/documents/item/2012/10/22/program1/>

¹⁹⁶Տե՛ս, «Բաց կառավարման գործնկերություն» նախաձեռնություն, << կառավարության պաշտոնական կայք, Այցելություն 12/12/2014

<http://www.gov.am/am/open-government/>

Բաց կառավարման գործնկերության հայաստանյան պաշտոնական կայք

<http://www.ogp.am/hy/about-project/>

¹⁹⁷Տե՛ս «Հակակոռուպցիոն աշխատանքայի նհարթակը կնպաստի պետություն-քաղաքացիական հասարակություն համագործակցության խորացմանը. Սուրեն Քրմոյան», «Արմենպրես լրատվական գործակալություն», 23/09/2015, Այցելություն 26/10/2015

<http://armenpress.am/arm/news/819570/hakakorucion-ashkhatanqayin-hartaky-knpasti-petutyun-qaxaqaciakan.html>

հասարակություն համագործակցության գործնական քայլ է՝ ուղղված կոռուպցիայի դրական ազգային անվտանգության սպառնալիքի դեմ պայքարին:

Պետության և հասարակության առավել լայն և ուղղակի համագործակցության դրսևորումներից մեկը գործադիր իշխանության մարմիններում գործող խորհրդակցական մարմիններն են, որոնք տարբեր երկրներում ունեն տարբեր անվանումներ, ինչպիսին օրինակ՝ խորհրդակցական մարմինն է: Ըստ էության դրանք քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ պետական իշխանության համակարգում գործող ամբողջություն են, որոնց պետական մարմինները տալիս են որոշակի լիազորություններ և որոնց հետ քննարկում են քաղաքական որոշումների ընդունումն ու կիրառումը՝ ներառյալ ազգային անվտանգությանն առնչվող հարցեր: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ՀՀ-ում նախարարներին կից գործում են խորհրդակցական մարմիններ, որոնք կոչվում են կոլեգիաներ: Կոլեգիաներն ստեղծվել են ՀՀ Կառավարության 2008թ.¹⁹⁸ նպատակ ունենալով առավել թափանցիկ և արդյունավետ իրականացնել ՀՀ նախարարությունների կողմից տարվող քաղաքականությունը: Հարկ է նշել, որ կոլեգիաները պարտադիր են բոլոր նախարարությունների դեպքում՝ բացառությամբ Պաշտպանության նախարարության, որը կարող է խորհրդակցական մարմին ստեղծել իր հայեցողությամբ: Ըստ նախարարությունների պաշտոնական կայքերի ուսումնասիրության¹⁹⁸, ՀՀ 18 նախարարություններից 15 նախարարներին կից գործում են խորհրդակցական մարմիններ, որոնք հիմնականում կոչվում են «կոլեգիա», նաև «ատյան» (ՀՀ Սփյուռքի նախարարություն), «հասարակական խորհուրդ»: 2015թ. ապրիլ ամսվա տվյալներով՝ որոշ նախարարություններ չեն ստեղծել կոլեգիաներ կամ ստեղծել են, որոնց վերաբերյալ տեղեկատվությունն անհասանելի է: Այդ նախարարություններն են ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների ու ՀՀ արտաքին գործերի նախարարությունները: Կառավարության կից կառույցների, այն է՝ ՀՀ ոստիկանությունում 2016թ. նույնական ստեղծվել է կոլեգիա, սակայն որևէ տեղեկատվություն չկա մանրամասների վերաբերյալ, իսկ ՀՀ ազգային անվտանգության ծառայության պաշտոնական կայքում բացակայում է

¹⁹⁸ՀՀ Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունը պաշտոնական կայք չունի, Այցելություն 15/05/2015

տեղեկատվություն խորհրդակցական մարմինների վերաբերյալ, միայն կարելի է օգտվել հետադարձ կապն ապահովող բաժնից, այսինքն՝ իրականացվում է միայն նամակների և դիմումների ընդունում:

Ուսումնասիրությունը թույլ է տալիս ամրագրել, որ կոլեգիաների գործունեության ընթացքում առկա են որոշակի սկզբունքային խնդիրներ, որոնք ազդում են դրանց գործունեության արդյունավետության վրա: Կոլեգիայի աշխատանքներում ներգրավված կազմակերպությունների փոփոխության հատակ մեխանիզմ չկա և ցանկացած պահի կարող է փոփոխության ենթարկվել՝ պայմանավորված տարբեր գործոններով, օրինակ՝ նախարարի փոփոխությամբ կամ սուբյեկտիվ ընկալումներով պայմանավորված: Չնայած կոլեգիաների աշխատակարգը չի սահմանափակում կոլեգիայում ոլորտին քաջատեղյակ մասնագետների մշտական կամ լրացուցիչ ներգրավումը, այնուամենայնիվ, նրանց ընտրությունը նույպես կարող է լինել սուբյեկտիվ, քանի որ հատակ ամրագրված չէ փորձագետներին ներգրավելու մեխանիզմները: Այսինքն, կոլեգիայի գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է նախարարների կամքից, որոշումների ընդունման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության կարևորության ընդունումից: Մեկ այլ խնդիր է սակավաթիվ նիստերի անցկացումը, ինչը կանոնակարգի խախտում չի նշանակում, քանի որ նիստերի հատակ պարբերականություն սահմանված չէ: Փաստորեն դրանք կրում են ծևական բնույթ և որոշումների կայացման տեսանկյունից ունեն բավականին ցածր ազդեցություն, այսինքն՝ ազգային անվտանգության ապահովմանն ուղղված խնդիրների քննարկման ընթացքում չի ապահովվում քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը:

Այդ խնստիտուցիոնալ մարմինների ցածր արդյունավետության մասին է վկայում նաև «Հանրային ցանց» ժողովրդավարության զարգացման կենտրոնի կողմից իրականացված հետազոտության արդյունքները, որտեղ նշվում է, որ << մի շարք նախարարություններում ծևավորվող և գործող թեմատիկ՝ կոնկրետ խնդիրների շուրջ կամ ոլորտային ու ծրագրային կառավարման աշխատանքային խմբերի գործունեություններում առավել արդյունավետ և ազդեցիկ է, հասնում են ավելի շոշափելի

արդյունքի, քան ինստիտուցիոնալ մարմին հանդիսացող՝ խորհուրդներն ու կոլեգիաները¹⁹⁹:

Կոլեգիաները որևէ դերակատարություն չունեն նաև ազգային անվտանգության տարբեր ուղղություններին վերաբերող օրինագծերի մշակման գործընթացում: Ավելին, << կառավարությունից ուղարկված օրինագծերի վերաբերյալ խորհրդակցական մարմինների կողմից տրված եզրակացություններին հիմնականում պետական փորձագիտական եզրակացություն («Հանրային ցանց» ժողովրդավարության զարգացման կենտրոնի կողմից իրականացված հետազոտության համաձայն, օրենքների նախագծերի 63.2%-ը գալիս է << կառավարությունից): Փաստորեն, << նախարարներին կից խորհրդակցական մարմինները որևէ գործառույթ չունեն այս ոլորտում:

Հատկանշական է նաև այն, որ որոշ նախարարություններ ստեղծել են լրացուցիչ խորհրդատվական մարմիններ: Օրինակ, 2012 թ. ստեղծվել է << առողջապահության նախարարին կից << Առողջապահության նախարարին կից գիտական խորհուրդ²⁰⁰ և << արդարադատության նախարարին կից քաղաքացիական հասարակության խորհուրդ²⁰¹: Որոշ նախարարություններում ձևավորվել և գործում են կոլեգիաներին զուգահեռ հանրային խորհուրդներ և գիտական խորհուրդներ (<< առողջապահության, արդարադատության, էկոնոմիկայի, պաշտպանության, տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություններ), որոնք կոլեգիաներից տարբերվում են իրենց կազմով, սակայն կոլեգիաների և խորհուրդների գործունեության ընթացքում տեղի են ունենում գործառույթների կրկնություններ, ձևավորման և գործունեության ոչ թափանցիկ ընթացակարգեր, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ընտրության չափորոշիչների և հաշվետվողականության բացակայություն: Դրանով պայմանավորված մշակվել է կառավարության որոշման

¹⁹⁹Տե՛ս «Մասնակցային կառավարման մշակույթը պետական խորհրդակցական մարմիններում. տեղական և միջազգային փորձի ուսումնասիրություն», Երևան, «Հանրային ցանց» ժողովրդավարության զարգացման կենտրոն, 2014, էջ 25

²⁰⁰Տե՛ս «Գիտական խորհուրդ՝ << առողջապահության նախարարին կից», << առողջապահության նախարարության պաշտոնական կայք, Այցելություն 03/09/2016

<http://www.moh.am/?section=news/open&id=143&nid=1746>,

²⁰¹Տե՛ս «<< արդարադատության նախարարին կից հանրային խորհուրդ», << արդարադատության նախարարության պաշտոնական կայք, Այցելություն 02/05/2015, <http://www.moj.am/page/576>

նախագիծ, որով նախատեսվում է, որ յուրաքանչյուր նախարարությունում պետք է գործի նախարարին կից հանրային խորհուրդ, որտեղ կընդգրկվեն հասարակական կազմակերպություններ, լրագրողներ և այլ շահագրգիռ անձինք: Սա նախատեսում է, որ պետք է տարանջատվեն ու հստակեցվեն կոլեգիաների և խորհուրդների գործառույթները, մասնակից կողմերի կազմը, իրավունքներն ու պարտականությունները²⁰²: Սա նշանակում է, որ գործնական քայլեր են կատարվում պետական կառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցության մեխանիզմների հստակեցման ուղղությամբ՝ ապահովելու նախարարությունների գործունեության թափանցիկությունն ու մասնակցային կառավարում: Սակայն այդ քայլերն ուղղված են համագործակցության ֆորմալ մեխանիզմների ներդրմանը, իսկ ինչ վերաբերվում է այդ մարմինների գործունեության արդյունավետությանը, ապա վաղ է գնահատել, սակայն պետք է նշել, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնագիտական կարողությունների կատարելագործման գործոնը կարևոր նշանակություն ունի, հատկապես ազգային անվտանգության հարցերի վերաբերյալ որոշումների կայացման գործում:

Չնայած բազմաթիվ խնդիրների առկայությանը՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հավաստմամբ, այսօր համագործակցության ավելի շատ հնարավորություններ կան, քան մոտ տասը տարի առաջ, իսկ այդ կազմակերպությունների հետևողական ու պրոֆեսիոնալ մոտեցման դեպքում համագործակցությունն առավել հաջողված է: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ Հայաստանում ձևավորվում է պետական կառավարման մարմին-քաղաքացիական հասարակություն համագործակցության մշակույթ, որի ընթացքում հասարակական կազմակերպություններն ապահովում և խթանում են հանրային կառավարմանն ու տեղի ունեցող գործընթացներին բնակչության քաղաքացիական մասնակցությունը՝ որոշումների ընդունման ժողովրդավարական ընթացակարգերի կատարելագործման ճանապարհով այդ գործում ներգրավելով քաղաքացիների լայն

²⁰²Տե՛ս «Նախարարներին կից հանրային խորհուրդները նպաստելու են նախարարությունների գործունեության թափանցիկությանը», «Արմենպրես» լրատվական գործակալություն, 03/06/2015, Այցելություն 10/07/2015, <http://armenpress.am/arm/print/811279/nakhararnerin-kic-hanrayin-khorhurdnery-npastelu-en-nakhararutyunneri.html>

շերտեր: Դրանով քաղաքացիական հասարակությունը տեղեկացնում է պետությանը քաղաքացիների այն շահերի ու պահանջմունքների մասին, որոնք հնարավոր է բավարարել միայն պետության ուժերով, ազդանշանում է հասարակական ոչ բարեկեցիկ կյանքի մասին, ինչը կարող է սոցիալական լարվածության ու ցնցումների պատճառ դառնալ՝ վտանգելով երկրի անվտանգությունը:

Համեմատության համար նպատակահարմար է անդրադառնալ նաև միջազգային փորձին, որի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խորհրդակցական մարմինների մեծամասնությունը տարբեր երկրներում նույնպես ստեղծվել են ոչ վաղ անցյալում, սակայն ներկայում աշխարհում գործադիր իշխանության գրեթե ցանկացած մարմնին կից գործում է այս կամ այն խորհուրդը: Նման կառուցների նշանակությունը աճում է ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ՝ Եվրոպայում:

Այսպես, Մեծ Բրիտանիայում նախարարություններին կից կոլեգիաները հանդես են գալիս հանրային մարմնի կարգավիճակով և այդ համակարգի զարգացման երկու հիմնական գործոնի վրա են ուշադրություն դարձնում: Առաջին, կառավարության աշխատանքը պահանջում է առավել շատ տեխնիկական, մասնագիտացված տեղեկատվություն, որի ստացման համար անհրաժեշտ է լայնորեն ներգրավել արտաքին փորձագետների: Երկրորդ, կառավարական կուրսի աճող ինտերվենցիոնիզմը պահանջում է շահագրգիռ կողմի հետ խորհրդակցությունների անցկացում, ուստի վերջիններիս համագործակցությունն անհրաժեշտ է ընդունվող որոշումների հաջող իրացման համար: Ֆրանսիայում խորհրդակցական կառուցները կիրառվում են ծևական, իսկ որոշումների կայացումն առավել բարձր մակարդակում է տեղի ունենում: Պետական գործիչները ձգտում են օգտագործել այդ կառուցները անհրաժեշտ տեղեկատվության ստացման համար, այսինքն՝ նույնիսկ եթե կոմիտեների իրական ազդեցությունը մեծ չէ, դրանք թույլ են տալիս լսելի դարձնել խմբի կարծիքը, ինչպես նաև տեղյակ լինել գերատեսչության ու այլ խմբերի կարծիքներին: Գերմանիայում էկոնոմիկայի և էներգետիկայի նախարարությանը կից գործում է խորհրդատվական խորհուրդ, որում ընդգրկված փորձագետները նախարարին խորհրդատվություն են տրամադրում տնտեսական քաղաքականության հարցերով:

ԱՄՆ-ում խորհրդակցական մարմինները կոչվում են կոմիտեներ: Կոմիտեները կարող են ստեղծվել Կոնգրեսի կողմից, նախարարությունների կողմից, անմիջականորեն Նախագահի կողմից: Պետական որոշումների վրա խորհրդակցական մարմինների ունեցած ազդեցության վերաբերյալ Կոնգրեսի անհանգստության հետ կապված՝ 1972թ. ընդունվեց հատուկ կարգավորիչ ակտ՝ Դաշնային խորհրդակցական կոմիտեների մասին ակտը (Federal Advisory Committee Act)²⁰³: Սակայն նոր պահանջների ներմուծումից և թափանցիկության ապահովումից հետո էլ դեռևս կասկածներ էին արտահայտվում կոմիտեներում ներկայացված խմբերի հավասարակշուության և նրանց դատողությունների անկաշառության վերաբերյալ:

Ինչ վերաբերվում է հետխորհրդային երկրներին, ապա հարկ է նշել, որ այդ երկրներում նույնպես տարածված է նախարարություններին կից խորհրդակցական մարմիններ ստեղծելու փորձը: Մոլովայի Հանրապետությունում գործեք բոլոր նախարարություններին կից գործում են խորհրդակցական խորհուրդներ, որոնք իրենց կառուցվածքով նման են <<-ում գործող կոլեգիաներին: Էստոնիայում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և պետական մարմինների համագործակցության լավագույն մոդելը կարգավորող փաստաթուղթն իրավական ուժ չունի: Մասնակցությունն առանձնացնում է հանրային ներգրավման 3 հիմնական ձև՝ տեղեկատվություն, խորհրդակցություն (առաջարկների և կարծիքների ներկայացում) և անմիջական մասնակցություն՝ նախագծերի/քաղաքականությունների մշակման գործընթացքում՝ աշխատանքային խմբի մակարդակով: Էստոնիայի ներքին գործերի նախարարությունում գործում է տարածաշրջանային հարցերի վարչություն, որը պատասխանատու է քաղաքացիական հասարակության զարգացման համար²⁰⁴:

Լատվիայում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և կառավարության համագործակցության փորձը նույնպես հետաքրքիր և արդյունավետ է: 2005թ. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և կառավարության միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր, իսկ մեկ տարի անց ստեղծվել է համագործակցության իրականացման խորհուրդ, որը երաշխավորում

²⁰³Տե՛ս Federal Advisory Committee Act, Այցելություն 18/02/2016, <http://www.gsa.gov/portal/content/100916>

²⁰⁴Տե՛ս Chabanet D., Trechsel A. H. “EU Member States’ Consultation with Civil Society on European Policy Matters”, Florence, p. 50

http://cadmus.eui.eu/bitstream/handle/1814/19357/EUDO_Report_2011_04.pdf?sequence=1

Է քաղաքացիական ներգրավման արդյունավետությունը քաղաքականության մշակման բոլոր մակարդակներում՝ օրակարգի մշակում, քաղաքականության ստեղծում, որոշումների կայացում և իրականացում²⁰⁵:

Փաստորեն, տարբեր երկրներում լայնորեն տարածված է քաղաքացիական հասարակության կազմակերպություն-կառավարություն համագործակցության ապահովումը ժամանակավոր կամ մշտական խորհրդատվական կոմիտեների, խորհուրդների, հանձնաժողովների, աշխատանքային խմբերի, ինչպես նաև կլոր սեղանների, համաժողովների, ֆորումների և այլնի միջոցով: Որոշ երկրներում կիրառվում է առցանց հարթակների միջոցով խորհրդակցությունները: Խորհրդակցական մարմինները դառնում են մի շարք մարտահրավերների պատասխան, որոնք արդի են ժամանակակից պետությունների համար: Այս միտումները դիտվում են նաև ՀՀ-ում՝ բնորոշ հայկական առանձնահատկություններով և դրանք հաշվի առնելով կարելի է տեղայնացնել միջազգային փորձը հետևյալ կերպ. քանի որ Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների թույլ կողմերից է մասնագիտական կարողություններն ու հմտությունները, հետևաբար՝ ներկայում այդ կազմակերպությունների ներգրավվածությունը հնարավոր է դիտարկել երեք ձևաչափով՝ տեղեկատվության տրամադրում, խորհրդակցություն (առաջարկների և կարծիքների ներկայացում) և իրականացվող քաղաքականության նկատմամբ վերահսկողություն: Բացի այդ, նպատակահարմար է պետական կառավարման մարմիններում առանձնացված հաստիքով կամ ստորաբաժանմամբ աշխատել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, այդ թվում՝ ուժային կառուցներում:

Տեղական մարմինները նույնպես այժմ ակտիվորեն ներգրավում են քաղաքացիական հասարակության կազմակերպություններին քաղաքականության և ծրագրերի զարգացման ու իրականացման գործընթացներում: Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինը (ՏԻՄ) ընտրվում է համայնքի անդամների կողմից և բաղկացած է ավագանուց և համայնքի ղեկավարից: Ավագանու ինստիտուտն այն մարմինն է, որն ապահովում է հանրային մասնակցությունը և

²⁰⁵Տե՛ս Declaration about the development of a civil society in Latvia and cooperation with non-governmental organisations, Այցելություն 15/05/2015, <http://www.saeima.lv/en/public-participation/deklaracija>

ներկայացնում համայնքի ձայնը: Սակայն Հայաստանի շատ համայնքներում, հատկապես գյուղական տարածքներում, այս մարմինը պատշաճ ձևով չի գործում, քանի որ ավագանու անդամների աշխատանքը չի վարձատրվում, և հաճախ ավագանու անդամները «նշանակվում են» համայնքի ղեկավարի կողմից՝ առանց այլընտրանքային թեկնածուների տեղի ունեցող ընտրությունների արդյունքում: Համայնքների մեծամասնությունում համայնքի ղեկավարն իրականում հիմնական որոշումների կայացման մեջանորի ունի, իսկ ավագանին չի կատարում իր դերը²⁰⁶:

Բացի ավագանու և նրա հանձնաժողովների նիստերի մասնակցությունից՝ տեղական ինքնակառավարման մասին օրենքը սահմանում է հանրային մասնակցության մի քանի այլ հնարավորություններ, ներառյալ հանրային լսումները²⁰⁷: Հանրային մասնակցության վերաբերյալ դրույթներն ընդունվել են 2013թ.²⁰⁸ որպես քաղաքացիական հասարակության կազմակերպությունների նախաձեռնության և կառավարության, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների համատեղ աշխատանքի արդյունք:

Չնայած քաղաքացիների մասնակցությունը պարտադիր դրույթ է տեղական ինքնակառավարման օրենսդրության մեջ, այնուամենայնիվ, հանրային մասնակցությունը հիմնականում սահմանափակվում է հանրության իրազեկմամբ և որոշ դեպքերում քննարկումներով, մինչդեռ որոշումների կայացման գործընթացին մասնակցելու և ազդելու տեսանկյունից դեռևս իրենց զարգացման փուլում են և հիմնականում կախված են տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպություններից՝ ներառյալ կազմակերպված համայնքային խմբերի ակտիվությունից և կարողություններից²⁰⁹:

Ընդհանուր առմամբ, վերջին 5 տարիների ընթացքում նկատվում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցության

²⁰⁶Տե՛ս Մարգարյան Տ., Հակոբյան Ա. «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավվածությունը քաղաքականության մշակման և իրականացման մոնիթորինգի գործում. կարիքներ և կարողություններ», Երևան, 2015, էջ 51

²⁰⁷Տե՛ս <<օրենք «Տեղական ինքնակառավարման մասին», հոդ. 33.1, <<ազգային ժողովի պաշտոնական կայք, <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1305&lang=arm>

²⁰⁸Տե՛ս “CIVICUS Civil Society Index Rapid Assessment: Armenia Country Report”, United States Agency for International Development (USAID), Yerevan, 2014, p. 26

http://program.counterpart.org/armenia/wp-content/uploads/2013/09/Civicus-Report_August-2014_FFinal.pdf

ընդլայնում և համայնքային որոշումների կայացման գործընթացում ազդեցության աճ: Ավելին, տեղական իշխանությունների կողմից կազմակերպվող ձևական բնույթ կրող քննարկումներից, անձնական կապերի միջոցով լուծվող հարցերից անցում է կատարվում դեպի մասնակցության առավել ինստիտուցիոնալ և արդյունավետ մեխանիզմների կիրառում, ինչը դեռևս կատարելագործման կարիք ունի: Համայնքային մակարդակում քաղաքական երկխոսության դրական փորձի օրինակ են երիտասարդական խմբերը Գյումրիում, Արթիկում և Մարալիկում, որոնք համայնքային մակարդակով երիտասարդական քաղաքականության իրականացման ռազմավարական ծրագրեր մշակեցին և ներկայացրին: Համայնքապետարանները հաստատել են այդ ռազմավարական ծրագրերը, իսկ Մարալիկում առաջին անգամ որոշվեց տարեկան 100 հազար դրամ (մոտ 250 ԱՄՆ դոլար) հատկացնել համայնքային բյուջեից որևէ երիտասարդական միջոցառման համար²⁰⁹: Վերջին տարիներին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ու ՏԻՄ-ի փոխհարաբերությունը դարձել է ավելի համակարգված և ֆորմալ կերպով կանոնակարգվում է ծախսերի բաշխման համաձայնագրերով: 2009թ. նման համաձայնագրերեն կնքվել 14 քաղաքապետարանների հետ: Զնայած 2014թ. ինֆորմացիոն ազատություն կենտրոնի տվյալներով՝ ամենափակ կառուցքը Երևանի քաղաքապետարանն է²¹⁰:

Վերոնշյալ տեղեկատվության հիման վրա կարելի է արձանագրել, որ ինստիտուցիոնալ և հետևողական գործողությունները կարող են ազդեցություն ունենալ ՏԻՄ մակարդակում որոշումներ կայացնելու գործընթացում: Մյուս կողմից՝ տարբեր տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող համայնքային զարգացման ծրագրերը կարևոր դեր են խաղում մասնակցային մշակույթի ստեղծման և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, տեղական իշխանությունների և քաղաքացիների միջև քաղաքական երկխոսության ներուժի ամրապնդման գործում: Աշխարհում համայնքային ծրագրերն առանցքային

²⁰⁹Տե՛ս «2013թ. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունության ցուցանիշ-Հայաստան», ԱՄՆ Միջազգային Զարգացման Գրասենյակ, 2014, էջ 8 <http://www.cdpf.am/file/Armenia+final.pdf>

²¹⁰Տե՛ս «Որ պետական մարմիններն են փակ լրատվամիջոցների կարծիքով», «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության պաշտոնական կայք, 11/07/2014, Այցելություն 19/12/2014, <http://www.foi.am/hy/news/item/1382/>

դերակատարություն ունեն սոցիալական քաղաքականության ծրագրերում, քանի որ համայնքը դիտարկվում է նախևառաջ որպես ինքնուրույն գործելու իրավունք և հնարավորություն ունեցող հասարակական վարչական միավոր, որը կարող է սեփական ջանքերով գնահատել և փոխել իր կյանքը: Համայնքի անդամներն ակտիվորեն ներգրավվում են հիմնախնդիրների լուծման գործում, սովորաբար տեղական ոչ ֆորմալ խմբերի միջոցով, որոնց նպատակը քաղաքացիների և տեղական իշխանությունների միջև կապ հաստատելն ու երկխոսության կայացմանը նպաստելն է: Մասնակցային մոտեցման վերաբերյալ նոր դրույթների ներառումը ՏԻՄ օրենքում նույնպես կարելի է համարել տեղական քաղաքական երկխոսության կիրառման բարելավման արդյունք:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ կան նաև այլ գործոններ, որոնք նույնպես ազդում են այդ համագործակցության բնույթի վրա: Սոցիոմետր հետազոտական կենտրոնի տվյալներով՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ընկալմամբ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպություն - պետություն համագործակցության խոչընդոտների առաջին խումբը պայմանավորված է պետական մարմինների գործելառուվ (60,7%), իսկ երկրորդ խմբում այն խոչընդոտներն են, որոնք քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողություններով են պայմանավորված (20%): Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները շատ հաճախ չեն համագործակցում պետական մարմինների հետ, քանի որ գտնում են, որ դրանով ապահովվում է ֆորմալ կողմը և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն օգտագործվում են նիստերում քննարկվող հարցերը լեզիտիմացնելու նպատակով՝ վնասելով իրենց հանրային վարկանիշին: Սակայն ավելի մտահոգիչ է այն, որ կառավարությունը քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ավելի շատ ընկալում է որպես սպառնալիք, քան գործընկեր²¹¹: Նման ընկալումները հանգեցնում են նրան, որ ներկայում

²¹¹Տե՛ս «2011թ. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունության ցուցանիշ-Հայաստան», ԱՄՆ Միջազգային Զարգացման Գրասենյակ, 15-րդ խմբագրություն, 2012, էջ 9-10 <http://www.cdpf.am/file/Armenia%206-20%20FORMATTED.pdf>

կառավարության ու քաղաքացիական հասարակության կազմակերպություն միջև համագործակցությունը բավականին թույլ է:

Հայաստանում պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող քաղաքականության մշակման, որոշումների կայացման գործընթացներին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցության ինստիտուցիոնալացման ճանապարհին կարևոր քայլ էր 2009թ. <<Հանրային խորհրդի ձևավորումը, որի 12 ոլորտային հանձնաժողովներին անդամագրվեցին պետական գրանցում ունեցող 1200 քաղաքացիական հասարակության կազմակերպությունների 2000-ից ավելի ներկայացուցիչներ²¹²: Խորհրդի կանոնադրության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ստեղծված է նպաստելու ժողովրդավարական համակարգի զարգացմանն ու մարդու և քաղաքացու իմանարար իրավունքների և ազատությունների ապահովմանը, հասարակության մեջ անհանդուրժողականության մթնոլորտի առաջացման կանխարգելմանը և քաղաքացիական հասարակության կայուն զարգացմանն ու ամրապնդմանը, պետական իշխանության մարմինների և քաղաքացիական իշխանության միջև փոխադարձ վատահության կայացմանը, հասարակության և իշխանության միջև երկխոսության ու վստահելի գործընկերային հարաբերությունների ձևավորմանը, պետական կառավարման մեջ նրանց ներառվածության աստիճանի բարձրացմանը, ինչպես նաև հասարակական վերահսկողության իրականացմանը: Հանրային խորհրդի հանձնաժողովներում առկա է նաև պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի հանձնաժողովը, որն զբաղվում է ազգային անվտանգության առանձին ուղղությունների հիմնախնդիրներով: Սակայն պաշտոնական կայքում հանձնաժողովի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը բավականին քիչ է: Անհրաժեշտ է ակտիվ համագործակցություն ծավալել նոյն շահերն ու պահանջմունքները ներկայացնող հասարակական հատվածի և պետական մարմինների հետ, քանի որ այն չի կարող արդյունավետ գործունեություն ծավալել մյուս ինստիտուտներից առանձնացված գործելատնով:

²¹²Տե՛ս՝ <<հանրային խորհրդի պաշտոնական կայք, Այցելություն 10/10/2014, <http://www.publiccouncil.am>

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ վերջին տարիներին Հայաստանում ձևավորվել և զարգանում է քաղաքացիական հասարակության կազմակերպություն-պետական իշխանության մարմիններ համագործակցության իրավական դաշտը և ինստիտուցիոնալ մեխանիզմները, որոնք դեռևս կատարելագործման կարիք ունեն: Հարկ է նշել, որ որոշումների կայացման և դրանց նկատմամբ վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության լիարժեք ներգրավման և արդյունավետության վրա բացասական ազդեցություն են ունենում միմյանց նկատմամբ փոխադարձ վստահության ցածր աստիճանը, ինչպես նաև երկխոսելու և համագործակցելու սահմանափակ հմտություններն ու կարողությունները և այլն:

3.2 Պետական կառավարման մարմին-քաղաքացիական հասարակություն համագործակցությունը Հայաստանի պաշտպանության ոլորտում

Ազգային անվտանգության անբաժանելի բաղկացուցիչն է ուազմական անվտանգությունը, որն ապահովում է պետության դեմ ուղղված սպառնալիքների կանխումն ու չեզոքացումը՝ երաշխավորելով Հայաստանի Հանրապետության կայուն զարգացումը: Հզոր զինված ուժեր ունենալը ներկայիս աշխարհաքաղաքական պայմաններում Հայաստանին պարտադրված առաջնահերթություն է, իսկ զինված ուժերի զարգացումը, արդիականացումն ու կատարելագործումը շարունակական և դինամիկ գործընթաց է, որը ենթադրում է << պաշտպանական բարեփոխումների իրականացում զինված ուժերում: << պաշտպանական բարեփոխումների նպատակը քաղաքացիական վերահսկողության և պաշտպանական պլանավորման ու կառավարման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների վրա հիմնված, արդիական ուազմական պահանջներին համապատասխանող, առավել ճկուն և ժամանակակից պաշտպանության համակարգի, ներառյալ զինված ուժերի ստեղծումն է, որն ի զորու կինի արդյունավետորեն ապահովել Հայաստանի Հանրապետության ուազմական անվտանգությունը, պաշտպանելու ազգային անվտանգության հիմնարար

արժեքները, օպերատիվ արձագանքել բոլոր ճգնաժամային իրավիճակներին և ապահովել Հայաստանի Հ միջազգային պարտավորությունների կատարումը²¹³:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության օգնությամբ է քաղաքացիական հասարակությունն իր ներգրավվածությունն ապահովում Զինված ուժերում: Ոլորտի առանձնահատկությամբ պայմանավորված՝ յուրաքանչյուր երկրում այդ հարաբերությունը ձևավորվում է՝ հաշվի առնելով տվյալ երկրի պատմական փորձը, ժողովրդավարության ավանդույթները, քաղաքական համակարգը, քաղաքացիական հասարակության զարգացվածության աստիճանը և այլ գործոններ:

Պետական քաղաքականության իրականացման գործընթացում հասարակության մասնակցության կարևորությունն ընդգծված է << ազգային անվտանգության ռազմավարության դրույթներում, որտեղ մասնավորապես նշվում է. «Հայաստանում հաստատութենական (ինստիտուցիոնայ) բարեփոխումները միտված են ժողովրդավարական պետության զորացմանը, պետական կառավարման մարմինների արդյունավետ գործունեության ապահովմանը, որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանը»:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անհրաժեշտությունն ամրագրված է << Սահմանադրությամբ, համաձայն որի՝ << զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո²¹⁴: << ազգային անվտանգության ռազմավարության 2-րդ բաժնի «Բանակաշինություն» գլխում նույնապես սահմանվում է, որ «Հայաստանի Հանրապետությունը հետևողական է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և ռազմական բյուջեի պլանավորման ժողովում²¹⁵: Եվ վերջապես, <<-ում պաշտպանության ոլորտի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն ամրագրված է նաև 2007թ. ընդունված << Ռազմական

²¹³Տե՛ս՝ Պաշտպանական բարեփոխումներ, 29/06/2015, Այցելություն 19/02/2016

<http://www.mil.am/hy/68/230/265>

²¹⁴Տե՛ս << Սահմանադրություն (փոփոխություններով 06.12.2015), հոդված 8.2

²¹⁵Տե՛ս << ազգային անվտանգության ռազմավարություն՝ հաստատված Հայաստանի Հանրապետության նախագահի 2007թ. փետրվարի 7-ի թիվ ՆՀ-37-Ն հրամանագրով,
<http://www.mil.am/files/NATIONAL%20%20SECURITY%20STRATEGYarm.pdf>

դոկտրինում՝ որպես ժամանակակից ռազմական անվտանգության համակարգի ստեղծման համար անհրաժեշտ սկզբունք²¹⁶, ինչպես նաև 2008թ. ընդունված «Պաշտպանության մասին» <<օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված է, որ զինված ուժերի գործունեության հիմնական սկզբունքներից է զինված ուժերի գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքը²¹⁷:

<<զինված ուժերի և հասարակության փոխհարաբերությունների համակարգում առկա խնդիրները մշտապես գտնվում են <<Պաշտպանության նախարարության (այսուհետ՝ ՊՆ) ուշադրության կենտրոնում, որի մասին է վկայում <<Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հետևյալ խոսքերը. «Պաշտպանության նախարարության վերջին տարիների գործունեության հիմնական ուղղություններից մեկը եղել է բանակ-հասարակություն կապի ամրապնդումը: Առաջիկայում էլ ձգտելու ենք Է՛լ ավելի թափանցիկ լինել, կատարելագործել և արդյունավետ դարձնել բանակի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմները՝ առանձնահատուկ ուշադրության արժանացնելով մարդու իրավունքների պաշտպանությանը»²¹⁸: Կարելի է նշել, որ <<զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի շարունակական բարելավումը և պաշտպանական ներուժը արհեստավարժության, կարգապահության, թափանցիկության և վերահսկելիության արդիական չափանիշներին համապատասխանեցնելը պաշտպանության ոլորտում գործունեության գերակա ուղղություն է:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության վերաբերյալ ամենալայն տարածում գտած և ազդեցիկ հայեցակարգը մշակել է Ս. Հանթինգթոնը: Նա քաղաքացիական վերահսկողությունը դիտարկում է երկու՝ սուբյեկտիվ քաղաքացիական վերահսկողության և օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողության տեսանկյուններից²¹⁹: Սուբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությունը հիմնվում է

²¹⁶Տե՛ս <<Ռազմական դրվագին, հոդված 46, <http://www.mil.am/media/2015/07/768.pdf> «Աշխատանքային տեսորեր», 2007, թիվ 4

²¹⁷Տե՛ս «Պաշտպանության մասին» <<2008թ. նոյեմբերի 27-ի հմ. ՀՕ-198-Ն օրենքը, հոդված 4, <http://www.arlis.am/documentview.aspx?docID=48002>

²¹⁸Տե՛ս «<<պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ելույթը <<զինված ուժերի կազմավորման 20-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ», 27/01/2012, Այցելություն 11/07/2013, <http://www.mil.am/1327666346>

²¹⁹Տե՛ս Ս. Հանթինգթոն “Вооруженные силы и демократия: реформирование военно-гражданских отношений”, “Русский журнал”, 29/04/1999, http://old.russ.ru/ist_sovr/99-04-29/hantin.htm

քաղաքացիական իշխանության ուժեղացման հաշվին գինվորական իշխանությունը նվազագույնի հասցնելու, իսկ օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությունը՝ ռազմական պրոֆեսիոնալիզմն առավելագույնի հասցնելով նույն նպատակին հասնելու սկզբունքների վրա: Հանտինգտոնի տեսության մեջ գերակայությունը տրվում է օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությանը, քանի որ սուբյեկտիվ քաղաքացիական վերահսկողության դեպքում գինվորականի նկատմամբ քաղաքացիական իշխանության մեծացումը նշանակում է ոչ թե ամբողջ քաղաքացիական հասարակության, այլ առանձին քաղաքացիական խմբի կամ խմբերի իշխանության մեծացում, մինչդեռ օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությունն արդյունքի է հասնում գինվորականների գործունեությունը սահմանափակելով մասնագիտական շրջանակում, նրանց դարձնելով զուտ պրոֆեսիոնալներ, որպեսզի հեռու մնան քաղաքական խնդիրներին և քաղաքական որոշումների ընդունմանը միջամտելուց, քանի դեռ պետությունը չունի քաղաքականության մեջ նրանց մասնակցության ակտիվացման կարիքը: Հանտինգտոնն սպայական կազմի պրոֆեսիոնալիզմի մակարդակի բարձրացումը համարում է գինված ուժերի նկատմամբ արդյունավետ քաղաքացիական վերահսկողության հիմնական միջոց:

Քաղաքացիական-գինվորական հարաբերությունների մեկ այլ տեսաբան՝ Մ. Յանովիչը, Հանթինգտոնի տեսության հակառակորդն է, սակայն խնդիրին վերաբերող նրանց տեսանկյունները որոշ առումներով համընկնում են: Նա նոյնպես առանցքային է համարում սպայական կազմի և արհեստավարժության հասկացությունը, սակայն շատ ավելի մեծ կարևորություն է տալիս պատմաքաղաքական զարգացումներին և խնդիրը դիտարկում է սառը պատերազմի պրիզմայով, երբ միջուկային դարաշրջանի սպառնալիքները հարկադրում էին գինվորականներին՝ ստանձնելու իրենց ոչ հատուկ նոր դերեր, ինչը ենթադրում էր ազգային անվտանգության խնդիրների շուրջ համախմբում քաղաքացիական գործադիր ճյուղի ներքո: Այսինքն, Յանովիչի հայեցակարգը հիմնված է գինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության միջոցների և մակարդակների ընդլայնման վրա և առաջարկում է քաղաքացիական վերահսկողության երեք հիմնական մեխանիզմներ՝ բյուջետային

գործընթաց, ուժերի ու առաքելությունների հատկացում և արտաքին քաղաքականության խնդիրներին վերաբերող խորհրդատվություն Նախագահին²²⁰:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ քաղաքացիական-զինվորական հարաբերությունների ոլորտի շատ մասնագետներ, դիտարկելով զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության պրոբլեմը, այն համարում են գործադիրի նկատմամբ պետական քաղաքական վերահսկողության խնդիր, ոմանք՝ խորհրդարանական վերահսկողության, և միայն շատ քչերն են կարծում, որ դա ամբողջ հասարակության խնդիրն է: Այնուամենայնիվ, այդ հարցի պատասխանը կախված է պետական հաստատությունների կայացածության և հասարակության ժողովրդավարացման ու իրավագիտակցության աստիճանից: Որքան բարձր է այդ աստիճանը, այնքան հասարակության ավելի ստվար շերտերն են մասնակցում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությանը:

Քաղաքացիական վերահսկողությունը լայն հասկացություն է և ներառում է զինված ուժերի նկատմամբ, մի կողմից, ժողովրդավարական ճանապարհով ընտրված մարմինների ու նրանց նշանակած պաշտոնատար անձանց (այսպես կոչված «պետական-քաղաքական վերահսկողություն»), մյուս կողմից՝ հասարակական կառույցների՝ միավորումների, իրավապաշտպան կազմակերպությունների, լրատվամիջոցների, անհատ քաղաքացիների վերահսկողությունը²²¹: Դրանք կոչվում են զինված ուժերի նկատմամբ, համապատասխանաբար, քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողություն և քաղաքացիական հասարակական վերահսկողություն:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական հասարակական վերահսկողության ինստիտուտներ են հանդիսանում քաղաքացիական հասարակության կառույցները: Եվ իիմք ընդունելով այն սահմանումը, համաձայն որի՝ քաղաքացիական հասարակությունը դիտարկվում է որպես պետությունից համեմատաբար մեկուսի կամավոր ընկերակցությունների համախումբ, որոնք գործում են ինքնագործունեության հիմունքներով, կարելի է ասել, որ զինված ուժերի

²²⁰Տե՛ս Ավետիսյան Ա. «Ժողովրդավարությունն ու Զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողությունը», Երևան, 2013, էջ 140-142

²²¹Տե՛ս և Գացկո Մ. “Гражданский контроль над вооруженными силами России”, Обозреватель. 1-2007, с.16 http://observer.materik.ru/observer/N1_2007/014_021.pdf

նկատմամբ հասարակական վերահսկողության ինստիտուտներ են համարվում հասարակական կազմակերպությունները, զանգվածային լրատվամիջոցները, քաղաքացիների հասարակական նախաձեռնությունները, քաղաքացիական ոչ կառավարական միավորումները, ինչպես նաև անհատ քաղաքացիները:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական հասարակության պարագայում զինված ուժերի նկատմամբ վերահսկողության արդյունավետ միջոց կարող է լինել այդ գործընթացում նաև քաղաքացիների (անհատ անձանց) ներգրավվածությունը: Չնայած քաղաքացիներն իրենց ընդհանուր սահմանադրական իրավունքներն իրականացնելիս ակամա հանդես են գալիս քաղաքացիական վերահսկողության իրականացնող սուբյեկտի դերում, բայց որոշ երկրներում սահմանվում են անմիջական վերահսկողության այլ մեխանիզմներ: Օրինակ՝ Լատվիայի ՀՌԴ-ի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության շրջանակներում քաղաքացիները համապատասխան կարգով իրավունք ունեն այցելելու զորամասեր՝ ծանոթանալու գինծառայողների կյանքի պայմաններին²²²:

«Հաղաքացիները զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն իրականացնելու հնարավորություն ունեն հասարակական կազմակերպությունների միջոցով, որոնց անդամն են հանդիսանում, ներկայացուցչական մարմինների պատգամավորների միջոցով, ինչպես նաև անմիջականորեն՝ դիմելով Մարդու իրավունքների պաշտպանին և այլ պետական մարմիններին, այդ թվում զինված ուժերին՝ ստանալու ցանկացած տեղեկատվություն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Տեղեկատվություն ստանալու ազատությունը սերտորեն կապված է ՀՀ ՊՆ գործունեության թափանցիկության սկզբունքի հետ²²³: Այս առումով, կարևոր քայլ է 2010թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ Պաշտպանության նախարարի կողմից հաստատված Հանրային իրազեկման հայեցակարգը, որը կոչված է սահմանելու ՀՀ պաշտպանության նախարարության և գլխավոր շտաբի գործունեության մասին

²²²Տե՛ս Edmunds T., Cottney A., Forste A. “Civil-Military Relations in Post-Communist Europe: Reviewing the Transition”, USA, 2006, p. 52

²²³Տե՛ս Cleary L. R. and McConville T. “Managing Defence in a Democracy”, London and New York, 2006, p. 29

հանրային իրազեկման քաղաքականության իրականացման ուղիներն ու միջոցները, նպաստելու պաշտպանության բնագավառի կատարելագործմանն ու արդիականացմանն ուղղված ծրագրերի բարեփոխումների վերաբերյալ հանրության տեղեկացվածության աստիճանի բարձրացմանը²²⁴: Փաստորեն, հայեցակարգն ուղղված է պաշտպանության քաղաքականության թափանցիկության բարելավմանը, բանակ-հասարակություն փոխստահության ամրապնդմանը, զանգվածային լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության համակարգմանն ու կապերի ամրապնդմանը, զինծառայողների շրջանում մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ աշխատանքների բարելավմանը և զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության ընդլայնմանը: Հարկ է նշել, որ «ՊՆ-ը միակ պետական կառավարման մարմինն է, որն ունի Հանրային իրազեկման հայեցակարգ: ՀՀ ՊՆ-ն, կարևորելով անկախ և մասնագիտացված լրատվամիջոցների դերը պաշտպանական ոլորտում թափանցիկության սկզբունքի արդյունավետ կիրառման գործընթացում, հասարակության իրազեկումն իրականացնում է ՀՀ ՊՆ լրատվական ծառայության, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի, «Զինուժ» հաղորդման, «Հայզինվոր» շաբաթաթերթի, ինչպես նաև մամլո ասուլիսների միջոցով:

Գործունեության թափանցիկությունը նպաստում է հանրային կառավարման մարմինների նկատմամբ հասարակության վստահության մեծացմանը, իսկ հասարակության մեջ բանակի նկատմամբ վստահությունը այդ ինստիտուտի գործունեության արդյունավետության չափանիշներից է²²⁵: ՀՌԿԿ կենտրոնի 2015թ. իրականացված հետազոտության տվյալների համաձայն՝ հասարակության կողմից ամենավստահելի ինստիտուտը Բանակն է (Տե՛ս Գծապատկեր 1, Հավելված 1)²²⁶:

Հարկ է նշել, որ «ՊՆ կողմից կարևորվում է նաև սոցիոլոգիական հետազոտությունների անցկացումը՝ հասարակության տրամադրությունները և զինված

²²⁴Տե՛ս «Ապահովանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգ՝ հաստատված 2010թ. դեկտեմբերի 9-ին, <http://www.mil.am/hy/68/70/165>

²²⁵Տե՛ս Աթանեսյան Ա. «Բանակի և զինծառայողների հեղինակության ապահովման հիմնախնդիրները ժամանակակից հասարակություններում», Երևան, 2013, էջ 277

²²⁶Տե՛ս «Հարավկովկասյան երկրներում քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացումների հանրային ընկալումը (2015թ. նոյեմբերի դրությամբ)», Երևան, 2016

http://www.crcc.am/hosting/file/_static_content/barometer/2015/CRRC-Armenia_CB2015_Presentation.pdf

ուժերից նրա ակնկալիքները պարզելու համար: Այդ առումով, 2009 թվականից կազմակերպական աջակցություն է ցուցաբերվում զորակոչի օրինականության՝ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ հասարակական կազմակերպությունների իրականացրած մոնիթորինգին, պարբերաբար կազմակերպվում են բանակային տարբեր խնդիրների վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրություններ²²⁷:

ՊՆ գործունեության թափանցիկությունը նպաստում է Զինված ուժերում մարդու իրավունքների ոտնահարման և պաշտպանական ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության մեծացմանը, միջանձնային հարաբերություններում արդարության սկզբունքի պահպանմանը, հետևաբար, նաև Զինված ուժերում կարգապահության ամրապնդմանը: Իր հերթին, կարգապահության ամրապնդումը ոչ միայն մեծացնում է բանակի նկատմամբ հասարակության վստահությունը, այլև կանխում կամ առնվազն սահմանափակում է հասարակությունից արատավոր երևույթների ներթափանցումը բանակ: Հիմնվելով այդ վստահության վրա՝ ՊՆ դեկավարությունը կարող է ավելի արդյունավետորեն բարեփոխել համակարգը և այնտեղ ներբերել Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ավելի գործուն մեխանիզմներ, ինչն ի վերջո կրկնապատկելու է ՊՆ գործունեության թափանցիկության աստիճանը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ զինված ուժերում կոռուպցիոն երեսությների, մարդու իրավունքների ոտնահարման դեպքերի, դրանց դեմ ձեռնարկվող միջոցառումների, կարգապահական խախտումների դեմ պայքարի վերաբերյալ հենց ՊՆ նախաձեռնությամբ տեղեկությունների իրապարակումը նպաստում է բանակի նկատմամբ հասարակության վստահության մեծացմանը: Այդ պատճառով << զինված ուժերում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ << ՊՆ-ի կողմից տրամադրվող տեղեկատվությունը պետք է հնարավորինս մատչելի լինի: Իր հերթին, այդ տեղեկատվությունն ավելի մեծ հնարավորություն կընձեռի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի արդյունավետ վերահսկման համար:

²²⁷Տե՛ս «Հասարակական ներզրավվածություն. հասարակական և քաղաքական կազմակերպություններ», << ՊՆ պաշտոնական կայք, Այցելություն 15/12/2013, <http://www.mil.am/1296046596>

Այս համատեքստում կարևորվում է Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը, որը քաղաքացիական վերահսկողության օլակներից է: Տարբեր երկրներում այն ունի տարբեր անվանումներ. Սկանդինավյան պետություններում այն կոչվում է «օմբուդսմեն», Իսպանիայում և Կոլումբիայում՝ «ազգային պաշտպան», Ֆրանսիայում՝ «միջնորդ» և այլն²²⁸: Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը վաղուց իր ուրույն տեղն ունի կայուն ժողովրդավարությամբ մի շարք երկրների իրավական համակարգերում: Փաստաբանների միջազգային ասոցիացիան ընդունել է «օմբուդսմեն» հասկացության հետևյալ սահմանումը. «Սահմանադրությամբ կամ օրենսդիր իշխանության ակտով նախատեսված, խորհրդարանին հաշվետու բարձրաստիճան հասարակական պաշտոնատար անձի կողմից ղեկավարվող ծառայություն, որը տուժած անձանցից ընդունում է պետական մարմինների, ծառայողների, գործատուների դեմ ուղղված դիմում-բողոքներ կամ գործում է սեփական նախաձեռնությամբ և իրավասու է հետաքննություն իրականացնելու, առաջարկելու ուղղորդվող քայլեր և ներկայացնելու գեկույցներ»²²⁹:

Որոշ երկրներ զարգացրել են մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը՝ ստեղծելով զինվորական օմբուդսմենի հաստատություն: Զինվորական օմբուդսմենի հաստատությունը գործում է նաև Գերմանիայում (այլ անվանմամբ), Նիդերլանդներում, Չեխիայում, Նորվեգիայում և այլ երկրներում, ում գործունեության հիմնական առանձնահատկություններն են՝ գործադիր իշխանության մարմիններից, պաշտպանության նախարարությունից և զինվորական կառավարման այլ մարմիններից անկախությունը, օրենսդրության ճշգրիտ պահպանում ու կիրառումը, զինվորական կառավարման մարմինների գործունեության վրա ներգործելու իրական իշխանական ու իրավական լիազորությունները²³⁰:

Փաստորեն, զինվորական օմբուդսմենի ինստիտուտը պաշտպանական ոլորտի գործունեության նկատմամբ վերահսկողական գործառություններ իրականացնող մարմին

²²⁸Տե՛ս՝ «Энциклопедический юридический словарь», изд. 2, Москва, 1998, с. 210

²²⁹Տե՛ս՝ Քոչարյան Տ. «Ժողովրդավարական վերահսկողության ինստիտուտները <<զինված ուժերում>>, «Լրաբեր հասարակական գիտությունների» քառամյահանդես, Երևան, 2013, էջ 100
[http://lraber.asj-oa.am/6131/1/2012-4_\(94\).pdf](http://lraber.asj-oa.am/6131/1/2012-4_(94).pdf)

²³⁰Տե՛ս՝ Տրүմպել Կ. Բ. “Уполномоченныи Бундестага ФРГ по обороне как пример деятельности военного омбудсмена”, *Правоведение*, № 4 ,1998, с. 36,
<http://www.law.edu.ru/article/article.asp?articleID=147043>

է, որը նպաստում է այդ ոլորտում ժողովրդավարության ընդհանուր սկզբունքների և արժեքների պահպանմանն ու իրականացմանը: Զինվորական օմբուդսմենը քննում է զինված ուժերում մարդու իրավունքների խախտման հետ կապված բողոքները, ներկայացնում է առաջարկություններ խախտումների ու չարաշահումների վերացման վերաբերյալ: Միևնույն ժամանակ զինվորական օմբուդսմենը չի մասնակցում զինված ուժերի ընդհանուր քաղաքականության մշակմանը և չի կարող ազդել օպերատիվ բնույթ ունեցող հարցերի լուծման վրա²³¹: Եվ չնայած Հայաստանում այդ հաստատության ձևավորման անհրաժեշտությանը, որի մասին բարձրաձայնվում է տարբեր մասնագետների կողմից, այնուամենայնիվ << Սահմանադրության փոփոխություններով տարբերակում նման դրույթը բացակայում է: Այդ գործառույթը որոշակիորեն իրականացնում է Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանը, ով օժտված է լայն լիազորություններով, մասնավորապես, իրավասու և անարգել այցելել զորամիավորումներ, անձանց հարկադրական պահման վայրեր, այդ թվում՝ նախնական կալանքի և ազատազրկման վայրեր, ստանալ իրեն հասցեագրված բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր և պարզաբանումներ: Պետական մարմինները, այդ թվում՝ զինված ուժերի ստորաբաժանումները, պարտավոր են պահանջվող նյութերն ու փաստաթղթերը, ինչպես նաև անհրաժեշտ ցանկացած տեղեկատվություն տրամադրել պաշտպանին: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում գործում է զինծառայողների և քրեադատավարական իրավունքների վերականգնման խոմբ, որը, համապատասխան ահազանգեր ստանալով, մեկնում է համապատասխան զորամասեր, տեղում ուսումնասիրում է իրավիճակը²³²: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2007 թ. ստեղծվել է նաև զինծառայողների և զինվորական հարցերով խորհրդականի պաշտոն, որը մարդու իրավունքների պաշտպանին օգնում է զինծառայողների իրավունքների պաշտպանության գործում: Սկզբում միտում է եղել ստեղծելու առանձին զինվորական օմբուդսմենի հաստատություն, սակայն, քանի որ << Սահմանադրությամբ, ի

²³¹Տե՛ս Քոչարյան Տ. «Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումն ազգային անվտանգության համատեքստում», ԵՊՀ, Երևան, 2012, էջ 222

²³²Տե՛ս «2013թ. ընթացքում << մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու իհմնարար ազատությունների խախտման մասին» Տարեկան գեկույց, Երևան, 2014, էջ 358, http://www.parliament.am/draft_docs5/481.pdf

տարբերություն որոշ պետությունների (Լեհաստան, Լիտվա և այլն), մասնագիտացված օմբուդսմենի հաստատություն չի նախատեսվում, ստեղծվել է նշված խորհրդականի հաստիքը²³³: Զինծառայողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող անձի կարգավիճակի այս փոփոխությունն արտացոլում է վերջին տարիներին զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցում քաղաքացիական հասարակության դերի մեծացումը:

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան գեկուցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կան որոշ գործոններ, որոնք ազդում են այդ ոլորտում գործունեության արդյունավետության վրա: Այդ աշխատանքին էականորեն խոչընդոտում է զինծառայողների իրավագիտակցության ցածր մակարդակը: Բացի այդ, նրանց մոտ ծևավորվել է արժեքային յուրահատուկ համակարգ, ըստ որի՝ իրավունքների պաշտպանությունը տարրական «մատնություն» է համարվում: Որոշ հրամանատարներ մարդու իրավունքներին վերաբերվում են՝ որպես երկրորդական երևոյթի՝ ոչ պատշաճ արտահայտություններով պիտակելով մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները:

Փաստորեն, <<ՊՆ և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը համագործակցում են՝ բողոքները քննարկելու, առկա խնդիրները լուծելու և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ իրազեկության աստիճանը բարձրացնելու նպատակով:

Ներկայումս մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը լայնորեն համագործակցում է նաև հասարակական կազմակերպությունների հետ: Իսկ խոցելի խմբերի պաշտպանության և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության վարչության ստեղծումից հետո այդ համագործակցությունը նոր փուլ թևակոխեց. 2011թ. ստեղծվել է մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի արագ արձագանքման խումբը՝ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Այն կոչված է

²³³Տե՛ս՝ Մախմուլյան Ռ. «Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության դերը Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության գործում», «Հայկական Բանակ», թիվ 2 (64), Երևան, 2010, էջ 54

ցանկացած պահի յուրաքանչյուր դիմումի և ահազանգի ընթացք տալ, այցելել զորամաս, կատարել համապատասխան գննումներ և այլն:

Զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության պահանջներով՝ պայմանավորված՝ 2009թ. << պաշտպանության նախարարի հրամանով ստեղծվեց Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդ՝ կոչված ապահովելու << պաշտպանության նախարարության և քաղաքացիների փոխհամագործակցությունը, բանակաշինության, << զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների զարգացման հարցերում հասարակական կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհամաձայնեցումը: Այն խորհրդակցական մարմինն է և ծևավորվում է կամավորության սկզբունքով, հասարակական նախաձեռնությամբ ներկայացված հայտերի հիման վրա, այսինքն՝ նախաձեռնողականությունը հիմնականում հասարակական հատվածի ներկայացուցիչների կողմից է: Հասարակական խորհուրդը նպատակ ունի ապահովել պաշտպանության նախարարության և << քաղաքացիների փոխհամագործակցությունը, բանակաշինության, զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության, << ԶՈՒ նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և քաղաքացիական հասարակության սկզբունքների զարգացման հարցերում հասարակական կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների շահերի փոխհամաձայնեցումը: Իր առաքելությունը հասարակական խորհուրդն իրականացնում է զինված ուժերի ստորաբաժանումներ այցելությունների, ստուգայցերի, մշտադիտարկումների և շրջայցերի միջոցով: Դրանք իրականացվում են տարբեր ոլորտի մասնագետների հանձնախմբերով, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար ներկայացվում է հանրությանը նաև ԶԼՄ-ների միջոցով: Այս մարմնի գործունեության արդյունավետությունն առավել բարձր կլինի, եթե այն գործի անկախ, քանի որ հասարակական խորհրդի նախագահը միաժամանակ նախարարի խորհրդականն է, ինչն էլ որոշակիորեն սահմանափակում է վեահսկողությունն այդ ոլորտի նկատմամբ:

<< պաշտպանության նախարարությունը Բանակ-հասարակություն կապն ապահովում է հասարակության ամենատարբեր շերտերի՝ հանրակրթական դպրոցների աշակերտների, ուսանողական կազմակերպությունների, ԲՈՒՀ-երի պրոֆեսորադասախոսական կազմի, ՊՆ հետ համագործակցող շուրջ 75 հասարակական կազմակերպությունների, գիտական, կրթամշակութային ու քարոզական տարբեր կենտրոնների, արհեստակցական միությունների, և այլ կազմակերպությունների հետ: Պաշտպանության նախարարության ու հասարակական կազմակերպությունների կողմից համատեղ ծրագրերի իրականացումը շարունակական գործընթաց է և ՊՆ հետ համագործակցել ցանկացող <Կ-ների գրանցման հարցաթերթիկը և ՊՆ աջակցությամբ <Կ-ների կողմից իրականացվող ծրագրերի ներկայացման և հաշվետվությունների կարգը տեղադրված են << պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում²³⁴, ինչը լայն հնարավորություն է տալիս ցանկացած կազմակերպության այդ կառույցի հետ համագործակցության հայտ ներկայացնել:

Ներկայում << պաշտպանության նախարարությունը համագործակցում է մի շարք հասարակական կազմակերպությունների հետ, որոնք պայքարում են զինված ուժերում մարդու իրավունքների ուսնահարումների դեմ: Դրանցից են «Զինվոր և իրավունք», «Զինվորի մայր», «Զինվոր» համակարգող խորհուրդը, «Եելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը և այլն, որոնք հիմնականում զբաղվում են զինված ուժերում զինծառայողների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներով ինչպես զորակոչային, այնպես էլ բուն զինծառայության փուլում: Իրականացվում են նաև սննդի մոնիթորինգ, ապահովվում է ազատ մուտք դեպի զորամասեր, հանդիպում զինվորների հետ, վեր են հանվում ոչ կանոնադրական հարաբերությունների դեպքեր, զինվորի մահվան դեպքի առնչությամբ իրականացնում հասարակական քննություն և այլն: Դեռևս 2003 թվականից գործում է «Զինվոր» համակարգող հասարակական խորհուրդը՝ որպես Բանակ – հասարակական կազմակերպություններ կապն ու

²³⁴Տե՛ս «Հասարակական ներգրավվածություն. Հասարակական և քաղաքական կազմակերպություններ», << պաշտպանության նախարարության պաշտոնական կայք, Այցելություն 03/04/2015, <http://www.mil.am/1296046596>

համագործակցությունը համակարգող խորհուրդ²³⁵: Վերջին շրջանում մեծ հետաքրքրություն է ցուցաբերում «Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնությունը, որը կազմակերպել է «Իրավիճակը հայկական բանակում» քննարկում, որին մասնակցում էին քաղաքացիական նախաձեռնության անդամները, << իրավասու պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ուսումնասիրության համաձայն՝ Հայաստանում պաշտպանության ոլորտում քաղաքացիական ներգրավվածության վերաբերյալ իրենց գնահատականն են տվել նաև միջազգային կառույցները: << Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դ. Տոնոյանի խոսքով, «...ԵՄ ինստիտուտները պատշաճ գնահատական են տվել զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական և ժողովրդավարական վերահսկողության կարողությունների զարգացմանն ուղղված ՊՆ քաղաքականությանը: Մոտեցումը հետևյալն է. Զկա ժողովրդավարական արժեքներին այլընտրանք նաև պաշտպանության և անվտանգության ապահովման գործում»²³⁶:

Այսպիսով, վերջին տարիներին << Զինված ուժերում բարեփոխումների իրականացման գործում նշանակալի է օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողության դերը, որը դառնում է ավելի ու ավելի ազդեցիկ: Ընդ որում, առայժմ ավելի մեծ է քաղաքացիական հասարակական վերահսկողության դերը, քանի որ քաղաքացիական հասարակական վերահսկողության մեխանիզմները բավականին զարգացած են, և այդ մեխանիզմների արդյունավետությունն առայժմ տեսանելի է: Զնայած դրան դեռևս արդիական է պետական կառավարման համակարգի՝ գործունեության թափանցիկության բարձրացումը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցության գործուն մեխանիզմների կատարելագործումը, ինչպես նաև այդ կազմակերպությունների կարողությունների զարգացումն ու քաղաքացիական հասարակության, ինչպես նաև զինծառայողների իրավագիտակցության բարձրացումը:

²³⁵Տե՛ս «Զինվոր» համակարգող խորհուրդ, Այցելություն 10/12/2015, <http://zinvorhk.wordpress.com/about/>

²³⁶Տե՛ս «Զկա ժողովրդավարական արժեքներին այլընտրանք պաշտպանության ապահովման գործում. Դ. Տոնոյան», “Hay News.am” լրատվական կայք, 17/05/2012, Այցելություն 15/06/2014

<http://haynews.am/hy/pn-1337247352>

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եզրակացություններում ամփոփված են աշխատանքի հիմնական արդյունքներն ու եզրահանգումները.

